

ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿ

ՀԱՏԸՆՏԻՐ

ՀՀ ՍՓՅՈՒՌՔԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
«ՄԵՐ ՄԵՇԵՐԸ» ՄՐԱԳԻՐ

ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿ

ՀԱՏԸՆՏԻՐ

Ժողովածուն կազմեց և առաջաբանեց
Ալեքսանդր ԹՈՓՉՅԱՆԸ

Երևան
«Լուսաբաց հրատարակչատուն»
2010

Հրատարակվում է
ՀՀ մշակույթի նախարարության պատվերով

*Նվիրվում է բանաստեղծի ծննդյան
125-ամյակին*

Ժողովածուն կազմեց և առաջաբանեց
Ալեքսանդր ԹՈՓՉՅԱՆԸ

ISBN 978-9939-808-68-0

©Ալ. Թոփչյան, կազմելու համար, 2010թ.

ՊԱՐՏՔԻ ԵՎ ՊԱՏՎԻ ԱՍՊԵՏԸ

(Ռուբեն Սևակի ծննդյան 125-ամյակի առթիվ)

1945 թ. Նյուրնբերգյան դատավարության մեղադրյալների մեջ էր նաև Մորավիայի և Բոհեմիայի դաուլեյտեր, չեխոսլովակյան Լիդիցե գյուղի բնաջնջման հիմնական մեղավոր բարոն Կոնստանտին Ֆոն Նոյրաթը:

Ատյանում ընթերցված մեղադրանքների ցուցակը միայն սրանով չէր ավարտվում, այնտեղ բազմաթիվ ուրիշ ոճիրներ էին թվարկվում: Այնուհանդերձ ցուցակը լրիվ չէր, այնտեղ չկային Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում գործած նրա հանցանքները և հատկապես դրանցից մեկը, որն ուղղակիորեն առնչվում էր Ռուբեն Սևակի ճակատագրին:

Կապույտ արյուն ունեցող այս ոճրագործը, Հիտլերի մտերիմ և հավատարիմ համախոհներից մեկն էր: 1915-ին, երբ կայզերական Գերմանիայի հյուպատոսն էր Կոստանդնուպոլսում, բանաստեղծի ճակատագիրը բառացիորեն նրա ձեռքին էր, և կարող էր նրան փրկել ստույգ մահից, բայց գիտակցված և հանցավոր քաշքշուկներով ուշացրեց իր միջնորդությունը՝ իբրև խամաճիկների՝ Թուրք իշխանությունների առջև:

Կայզերական վարչապետին հասցեագրված իր զեկուցագրում Ֆոն Նոյրաթը գրում էր. «Ռուբեն Սևակը համարվում է այն մտավորականներից մեկը, որը զանգվածների վրա մեծ ազդեցություն ունի, և դա վախեցնում է իշխանություններին»:

Ազնվական գլխանագետը գրեթե բառացիորեն կրկնում էր Թուրք չովինիստ մտավորական Հալիդե Էդիպի խոսքերը՝ ասված Տիկին Յանոի Սևակին. «Դոկտոր Սևակը մեծ ազդեցություն ունի հայ ժողովրդի վրա. իր խոսքերով, իր գրություններով կարող է հայ ժողովրդին ոտքի հանել: Սա է նրա հանցանքը»:

Այս առումով երիտթուրքերի կառավարությունն իսկապես լուրջ երկյուղներ կարող էր ունենալ երեսուն տարին նոր բոլորած բանաստեղծ Ռուբեն Սևակից կամ դոկտոր Ռուբեն Զիլինկիրյանից, որն ընդա-

մենը մեկ տարի էր, ինչ Լոզանից ժամանել էր Կ.Պոլիս և կարճ ժամանակում դարձել այն մտավորականներից մեկը, որոնց հանդեպ մեծ հավատ էր տածում ժողովուրդը: Դրա գաղտնիքը, թերևս, նրա ստեղծագործության և մարդկային նկարագրի զարմանալի միասնության մեջ է, երբ բանաստեղծը, իր իսկ խոսքերով ասված, «կ՝ապրի մեռնելով, կմեռնի անմահ»: Ժամանակակիցներից շատերի վկայություններն են պահպանվել նրա մտավորականի և մարդու հազվագյուտ հմայքների մասին: Նշանավոր Թեոդիկը՝ «Ամենուն Տարեցույց»-ի հռչակավոր խմբագիրը, այսպես է բնորոշել Ռ. Սևակին. «Աթենա իմաստության շիթը դրած է անոր ուղեղին մեջ, Էսկյուլապ բժշկության խորհուրդը, Հերմես ալ կայծը պերճախոսության»:

Սևակի կյանքը և ստեղծագործությունը բարոյականի և գեղեցիկի բացառիկ համերաշխության օրինակ են: Նա մաքսիմալիստ էր ամեն ինչում: Մանրամասն ծանոթանալով նրա կենսագրությանը՝ զարմանում ես, թե ինչպես է կարողացել դժվարին ժամանակներում կատարելապես մաքուր պահել և՛ իր խիղճը, և՛ իր գրիչը որևէ կոմպրոմիսից:

Փայլուն ավարտելով նշանավոր Պերպերյան վարժարանը 1905թ., քսան տարեկանում, մեկնում է Լոզան՝ տեղի համալսարանում բժշկություն ուսանելու: Իր ուշիմությամբ, ջանասիրությամբ և ակնառու ձիրքերով անմիջապես գրավում է դասախոսների ուշադրությունը: Մի քանի տարի շարունակ համարվում է համալսարանի առաջին ուսանողը, նրան մեծ ապագա են խոստանում բժշկության ասպարեզում: Սակայն զուգահեռ ուրիշ տաղանդներ են զարգանում և բացահայտվում:

Եվրոպայի սրտում, քսաներորդ դարասկզբի անկումային գեղագիտության համատարած և իշխող մթնոլորտում ծնվում և հաստատվում է արվեստագետ, միաժամանակ քաղաքագետ բանաստեղծը: Նրբին քնարականությամբ համակված տողերի կողքին կարդում ենք քաղաքացիական հզոր շնչով հագեցած բանաստեղծություններ, որոնք ոչ միայն վկայում են հանձնառու, ժամանակի հրատապ խնդիրնե-

բով մտահոգ բանաստեղծի տաղանդը, այլև քաղաքագետ մտավորականի հեռատեսությունը:

Իր եղերական մահվանից մոտ վեց ամիս առաջ, կյանքի չորրորդ տասնամյակը նոր-նոր ոտք դրած, հայկական, թե համաեվրոպական առումով գրական բարձր արժեքներ ստեղծած գրողն այսպիսի տողեր էր շարադրում իր օրագրում. «Վաղվընե սկսյալ պիտի ջանամ ըլլալ այն, ինչ որ եմ. որովհետև այն, ինչ որ եմ ինձ կթվի, թե ավելի բարձր է, քան այն, ինչ որ կ'երևամ»:

Սա միայն կատարելության անդադար ձգտման, չինինչ խստապահանջության արտահայտությունը չէ, որ պարտադիր կերպով պետք է բնորոշ լինի ամեն մի իսկական տաղանդին: Մեջբերված տողերն այս ամենով հանդերձ, Ռ. Սեակի պարագայում, նաև ուրիշ խորհուրդ են պարունակում, որը ճիշտ մեկնելով, գուցե բանալին գտնենք՝ առավել խորությամբ հասկանալու բանաստեղծի բացառիկ ճակատագիրը և ստեղծագործությունը:

Ուշադրություն դարձնենք նրա կենսագրության մի հետաքրքիր առանձնահատկությանը. նրա կյանքի առաջին տասնամյակը կարելի է բնորոշել ընդամենը մեկ բառով. թրքախոս: Չիլինկիրյանների ընտանիքում գործածական է եղել միայն թուրքերենը: Հայրը՝ Հովհաննես աղան, անգիր իմացել է ամբողջ «Ժամագիրքը», «Նոր Կտակարանը», հայատառ թուրքերենով նամակներ է գրել որդուն, բայց հայերեն չի խոսել: Ինչպես փոքրիկ Սողոմոնի, այնպես էլ Ռուբենի համար հայերենը պիտի դառնար հայտնագործված, ձեռք բերված, վերադարձված լեզու, և գուցե պատահական չէր, որ հետագայում նրանք երկուսն այնքան մտերմացան, որ Կոմիտասը դարձավ Ռ. Սեակի դստեր՝ Շամիրամի կնքահայրը:

Երկրորդ տասնամյակն ամբողջությամբ նվիրված է եղել հայերենի վերանվաճմանը: Ուսումնական երեք հաստատություն անընդմեջ հաջորդել են իրար, որոնցից ամենակարևորը և վճռորոշն է եղել նշանավոր Պերպերյան վարժարանը: Ռ. Սեակն այստեղ, մի շարք առարկաների յուրացման հետ միաժամանակ կարողացավ հայագիտական բարձրակարգ կրթութ-

յուն ստանալ: Ավելին, իր ուշիմությամբ, մտավոր իր արտակարգ կարողություններով, դարձավ նշանավոր մանկավարժ Ռեթեոս Պերպերյանի սիրելի աշակերտներից մեկը: Եվ, վերջապես, նրա խորհրդով, 1905 թ. հոկտեմբերին, ապագա բանաստեղծը մեկնեց Շվեյցարիա՝ բժիշկ դառնալու:

Այս տասնամյակը ոչ միայն բնորոշվում է որպես վերադարձ ակունքներին, այլև, կարծում ենք, որ ազգային ինքնության վճռական, արագացվա՛ծ վերականգնումի ընթացքում, ապագա բանաստեղծի նկարագրում հիմնավորապես հաստատվել է ազգային արժանապատվության առավել քան սրացված գիտակցումը, հայ լինելու հպարտությունը և պատասխանատվությունը: Այս տասնամյակը նաև յուրատեսակ մրցում է եղել ժամանակի հետ, քանի որ մեկ տարին դառնում էր երկու: Միայն այս կերպ կարող էր ոչ միայն վերադարձնել թրքախոսության կորուսյալ տարիները, այլև առաջ անցնել ժամանակից: Եվ որպեսզի ճիշտ խմբագրեր անցյալը, նա պիտի ճիշտ հասկանար ներկան և կռահեր ապագան: Այս մրցումը ժամանակի հետ, ի վերջո, պիտի հանգեցներ ժամանակից առաջ անցնելուն, ինչը դարձավ նրա կարճատև կյանքի երրորդ տասնամյակի ամենաբնորոշ գիծը:

Ռ. Սեակը միակն էր ոչ միայն գրողների, այլև գուցե հայ քաղաքական գործիչների մեջ, որ 1909թ. Կիլիկյան աղետից հետո հստակ կանխատեսեց դեպքերի հետագա զարգացումը: Եվ զգայուն արվեստագետի նրա տագնապները վերաբերում էին ոչ միայն հայ, այլև եվրոպական իրականությանը: Նրա բանաստեղծություններում, հոդվածներում և նամակներում կարող ենք գտնել բազմաթիվ տողեր, որոնք վկայում են, որ մարգարեացած բանաստեղծը կանխատեսել է ոչ միայն Հայոց մեծ եղեռնը, այլև աշխարհակործան պատերազմը:

Այս կանխատեսումներին զուգահեռ, նրա տողերում հաճախակի հայտնվող մահվան ուրվականը միայն տուրք չէր իր ժամանակի գեղագիտությանը, այլև մարդկության, իր ժողովրդի, վերջապես իր գլխին կախված անխուսափելի մի սպառնալիք:

Հարց է ծագում, թե Ռ. Սեակն ինչո՞ւ թողեց պատերազմի արհավիրքներից հեռու չեղոք Շվեյցարիան և վերադարձավ ծննդավայր, երբ այդպիսի հստակությամբ տեսնում էր «Պոլսո մղձավանջը... Սոդոմի մուխն ու Գոմորի բոցը», - ինչպես գրում էր իր նամակներից մեկում դեռևս 1911 թ.:

Հստակ կանխատեսելով այս ամենը՝ Սեակն չտապեց վերադառնալ, քանի որ նրա տեսակի մարդը, մտավորականը, նրա նման ազնվական բանաստեղծը չէր կարող չվերադառնալ, իր ժողովրդի հետ չկիսել իր իսկ կանխատեսած արհավիրքները: Նա ստեղծագործողի այն հազվագյուտ տեսակից էր, որոնք ոչ միայն խոսքով, այլև գործով են ապացուցում բանաստեղծի և ժողովրդի ճակատագրերի միասնությունը:

Ռ. Սեակը դեռևս 1914 թ. նոյեմբերին կանչված էր օսմանյան բանակ, որպես զինվորական բժիշկ կապիտանի աստիճանով: Ապրիլի 24-ի ձերբակալվածների մեջ նա չկար, նրան աքսորեցին ավելի ուշ: Ասում են՝ այս հանգամանքը չափազանց ծանր է տարել: Ժամանակակիցներից մեկը պատմում է, որ մայիսի սկզբներին հանդիպել է Սեակին, և նա ասել է. «Մեզի ամոթ չէ՞, որ հոս ենք»:

Նրան աքսորեցին ավելի ուշ, նույն տարվա հունիսի վերջին: Աքսորավայրն էր Անկարայից հյուսիս ընկած Զանղըրի կոչված գյուղաքաղաքը, որտեղ Դանիել Վարուժանի և ուրիշ հայ մտավորականների հետ երկու ամիս պիտի անցկացներ, մինչև իր ողբերգական մահը:

...Պատմում են, որ Սեակը, ի թիվս այլ հիվանդների, բուժում և փաստորեն մահվան ճիրաններից փրկում է տեղի երևելիներից մեկի տասնութամյա աղջկան: Հաջողությամբ ապաքինված հիվանդը սիրահարվում է իր գեղեցկադեմ փրկարարին: Հայրը յուրովի փորձում է շնորհակալություն հայտնել: «Դոկտոր, - ասում է նա: - Դուք բոլորդ դատապարտված եք, բոլորդ պիտի մեռնեք: Բայց եթե ուզես, քեզ կարող եմ փրկել: Եթե համաձայն ես մահմեդականություն ընդունել և աղջկաս հետ ամուսնանալ, ապա կազատեմ քեզ, եթե ոչ՝ փրկություն չունես»:

Սևակի ընկերները փորձում են համոզել, որ համաձայնի, հիշեցնում են նույնիսկ վարդանանց առերես ուրացումը: Սակայն նա անդրդվելի է մնում: 1915 թ. օգոստոսի 26-ին, Ռուբեն Սևակը և Դանիել Վարուժանը գազանաբար մորթվում են չեթեների ձեռքով: Մարդասպանների մեջ էր նաև հայրն այն աղջկա, որին Սևակը փրկեց մահից:

Ռ. Սևակի գիմանկարը թերի կլինի, եթե չխոսենք Յաննի Ապելի մասին, գերմանացի գնդապետի դուստր, որը հետագայում պիտի դառնար Յաննի Զիլինկիրյան-Սևակ: Էրֆուրտցի այդ գեղեցիկ աղջիկը միայն սեր, միայն կին և միայն կյանքի ընկեր չէր նրա համար: Նա այդ բոլորն էր և դրանցից էլ վեր մի բան:

Դժվար է ասել, թե ինչպիսին կլիներ Սևակ բանաստեղծի և մարդու ճակատագիրն առանց Յաննիի: Սերը նրանց այնպես էր միացրել, որ բանաստեղծն իր նամակներից մեկում գրում էր. «Ուրեմն, ես դուն եմ»: Մոտավորապես նույն միտքը Տերյանը պիտի արտահայտեր այսպես. «Ես էլ դու եմ, ես չկամ»:

Ամուսնու ձերբակալությունից անմիջապես հետո Յաննին շտապում է Պոլսի ոստիկանապետ Բեդրի բեյի մոտ: Բայց տեսնելով, որ այստեղից ոչ մի ապասելիք չկա, դիմում է ուղղակի գերմանական դեսպանատուն: Սակայն օգնության փոխարեն, այսպիսի բառեր պիտի լսեր դեսպան ֆոն Վանգենհայմից. «Դու, թշվառական գերմանուհի, լքեցիր ազգդ, ամուսնացար այդ հայի հետ և հիմա եկել խնդրում ես, որ ազատեմ նրան: Նա ետ չի դառնալու, նրանք գնացել են մեռնելու»:

Ի պատասխան, Յաննին, արժանապատիվ վրդովմունքով, դեսպանի երեսին է շպրտում իր գերմանական անձնագիրը:

Տիկին Սևակը հետագայում իսկապես հրաժարվեց գերմանական հպատակությունից և իր զավակների Լևոնի և Շամիրամի հետ հաստատվեց Ֆրանսիայում: Նա մինչև կյանքի վերջը Գերմանիա չգնաց, անգամ իր ծննդավայրը: Մինչև կյանքի վերջը հրաժարվեց գերմաներեն խոսել, իսկ զավակներին արգելեց գերմաներեն սովորել: Նա համոզված էր, որ Կայզերա-

կան Գերմանիան Օսմանյան Թուրքիայի հետ հավասար պատասխանատու է միլիոնավոր հայերի նահատակության համար:

Պահպանվել է նրանց ընդարձակ նամակագրությունը, մոտ երեք հարյուր նամակներ ու բացիկներ: Հայ գրողներից ոչ մեկը սիրո այսպիսի հարուստ և վսեմ վկայություններ չի թողել:

Ռուբեն Սևակի նման ազգային հերոսը պատիվ կրեբեր աշխարհի ուղած քաղաքակիրթ ազգին, և ամեն ինչ կանեին, որպեսզի նրան մեծարելով մեծարեն իրենց: Նա դարձավ մեր ոչ միայն պոետական, այլև, հատկապե՛ս, բարոյական հանճարի լավագույն արտահայտությունը: Եվ այսօր, երբ նայում ենք հետադարձ հայացքով, ապա ոչ միայն մեր, այլև XX դարի համաշխարհային գրականության մեջ նրա նման երկրորդը դժվարանում ենք գտնել:

Նրա կյանքի պատմությունը ծայրեծայր վիպական է բառի բոլոր իմաստներով, ինչը փորձել ենք ապացուցել «Եվ անգամ մահից հետո» վերնագրված մեր վեպում, որը շատ-շատերի կարծիքով կարող է հրաշալի նյութ դառնալ բազմասերիանոց ֆիլմի համար (սակայն բնավ ո՛չ սերիալների՝ արդի կայունացած, հակագեղագիտական հասկացությամբ):

Յաննի Սևակը Կ.Պոլսից վերջնականորեն հեռանալիս իր հետ Եվրոպա տարավ ամուսնու ձեռագրերի, լուսանկարների և այլ նյութերի մեծ մասը: Պակասող մասը հետագայում լրացրեց բանաստեղծի եղբորորդին՝ Հովհաննես Զիլինկիրյանը՝ Նիցցայից ոչ հեռու գտնվող Կանյ-սյուր-մեր քաղաքում հիմնելով «Ռուբեն Սևակի հիշատակի տունը»: Եզակի մի երևույթ ոչ միայն հայ, այլև համաշխարհային գրականության համար. դա փաստորեն բանաստեղծի տուն-թանգարանն է՝ հիմնված հայրենիքից դուրս:

Եվ, վերջապես, այսօր, Նիցցայում է ապրում բանաստեղծի դուստրը՝ Շամիրամ Սևակը, որի 95-ամյակը լրացավ այս տարվա հուլիսին:

Ալեքսանդր ԹՈՓՉՅԱՆ

ԿԱՐՄԻՐ ԳԻՐՔԸ

ՋԱՐԴԻ ԽԵՆԹԸ
ԹՐՔՈՒՀԻՆ
ՄԱՐԴԵՐԳՈՒԹԻՒՆ

ՋԱՐԴԻ ԽԵՆԹԸ

(բեմական մենախօսութիւն)

Քրքիջը
Թափառումը
Կարմիր դատաստանը
Անոնք որ կուգան
Մեր քահանան
Գետը
Աստուածը
Գիշերին մէջ երգ
Ոճիրը
Ցեղին ուխտը

Է՛հ, հա՛, հա՛, հա՛, հա՛.
Հօրս դիակն ուսիս, կը քալեմ ահա՛
Զարդուածներու դաշտին վրայ լուռ...:
Զառա՛մ Քահանայ, դիակը դ տրխուր
Ի՞նչ ծանր է ուսիս, ի՞նչ ծանր է ուսիս...:
Անշուշտ երբ իրբ խենթ արտաքսեցիր դիս
Հայրենի բոյնէդ, չի խորհեցա՛ր բնաւ
Թե պիտի գայի դանել քեզ խոնաւ
Թագստոցիդ մէջ խեղդուած, շան մը պէս,
Իմ պա՛տոքդս վերջին, կատարելու քեզ...:

- Է՛հ, հա՛, հա՛, հա՛, հա՛,
Բոլոր խելացի մարդիկներն ահա՛,
Ահա՛ խելոքներն այս ապուշ կեանքին,
Ահա՛ անոնք որ իրենց ծանր հոգին
Համբիչ քաշելով կ'զբօսցնէին,
Ու նուիրումով մը աստուածային՝
Կիրակին անգա՛մ մը բերանով ծոմ
Տիրամօր առջեւ կ'սպառէին մոմ,
Շաբաթ մը ամբողջ, անվա՛խ, անհամա՛ր,
Շնալու, ստելու, գողնալու համար:

- Է՛հ, հա՛, հա՛, հա՛, հա՛,
Բոլոր տիրացու հոգիներն ահա՛.
Ահա անոնք որ, ուղեղնե՛ր ծանծա՛ղ,
Ամէն մութ հարցի ունէին ծիծաղ,
Սաղմոսով սնած սոփեստներ աժան՝
Հեշտ կը լուծէին հարցումներ դաժան.
Դամոկլեան սուրի մը տակ դող ի դո՛ղ՝
Շտեմարաններն կ'ուռեցնէին գո՛հ,
Հարսնիքները չէ՞ն տօնելու վաղուա՛ն...
Ու չէին հաճե՛ր իսկ խորհիլ Մահուան...:

- Է՛հ, հա՛, հա՛, հա՛, հա՛,
Բայց ինչո՞ւ քրքիջս այսպէս կը դողայ...:
Ահա բոլո՛ր ալ, բոլո՛ն ալ, բոլո՛ր,
Մութին ու լուռին մէջ անդնդախոր,
Պառկա՛ծ խօլական, պառկա՛ծ ամբարիշտ,

Պառկա՛ծ քարեղէն ցաւի մէջ ընդ միշտ,
Պառկա՛ծ, Աստուա՛ծ իմ. ու որչափ ալ կա՛յ,
Ու որչա՛փ ալ կայ, մինչեւ հեռակայ
Ճամբաներուն ե՛զրը փռուա՛ծ, կարծես
Անդրհեղեղեան անտառի մը պէս...:

- Է՛հ, հա՛, հա՛, հա՛, հա՛,
Լուռ գիշերին մէջ շուներուն, ահա՛,
Երախին մէջ - դեռ կեանքով գալարուն
Կը լսեմ ճարճա՛տը ոսկորներուն...:
Բարեկամ շունե՛ր, բարեկամ ձեռքե՛ր,
Բարեկամ լեղուով լափլիզուած վէրքեր...:
Երնե՛կ, գաղանե՛ր անբան...: Բայց ինչպէ՛ս
Բոլոր արջառնե՛րը, գլուխնին վէ՛ս,
Սուրացին հեռո՛ւի դաշտերը անծի՛ր,
Գնդակէ՛ն, բոցէ՛ն, աչքերնին կարմիր...:

***

Ու ահա ամբողջ գիշեր կը շրջիմ,
Յիմա՛ր, խեղճ յիմա՛ր:
Խելքս առիր չատո՛նց, կեանքս առ, Փրկիչ իմ
Աստուա՛ծ, մեր յիմա՛ր:

Ի՛նչ կը նայիք ինձ, հոգեվարք աչեր,
Յիմա՛ր եմ, յիմա՛ր:
Երնէ՛կ, կը մեռնիք. մինչ ես կ'ապրիմ դեռ
Այս կեանքը յիմա՛ր:

Կրոուի դաշտերով տարի առանձին
Ստուերս յիմա՛ր,
Շնորհ չբրին գնդակ մ'ալ ինձ, պոռացին
«Յիմա՛րն է, յիմա՛ր»:
Դէ՛հ, մտիկ ըրեք, դուք որ կը խորդաք
Այս մահով յիմար,
Արիւնով շաղուա՛ծ պատմութիւն մը տաք,
Յիմա՛ր, ա՛հ, յիմա՛ր:

***

Ո՞ր խեղճ երկիրն էր, ո՞ր թիւն Յիսուսի,
Ո՞ր թագաւորն էր - ականջը խօսի -
Միայն թե բարի էր շա՛տ այդ արքան,
Մանրամասնութիւն չե՛մ գիտեր այնքան,
- Նոյն իսկ իր ձիւն անունը չեմ յիշեր: -
Սեւ մղձաւանջէ մը վերջ մի գիշեր
Հրաման ըրաւ եօթ քաղաքներու
Եօթ տարիքէն վար բնակիչներն արու
Եօթը օրուան մէջ կտրել - պայմանաւ
Որ տարեցներուն չի դպչին բնաւ...:
Ու տարեցներն այդ վերջին պայմանէն
Շնորհապարտ եղան ա՛յնքան՝ որ ամէն
Եօթն էգ բնակչէն մին ըրին նուէր
- Նուէր էգերու եօթ տարիքէն վե՛ր -
Արքային ու իր խարճերուն արու...:
Քա՛ղցր անմտութիւն եօթը թիւերու...:

Նոր թագակիրներն ի՛նչ շուտով մոռցան
Հին իմաստութի՛ւնը արքայական:
Ապշա՛ծ կը դիտեմ քառսն այս անհո՛ւն
Ու կը խորհիմ թե ի՛նչ բառ, ի՛նչ անուն
Պետք է տալ այս զբոսանքին:
Ինչո՞ւ կտրել տալ անմիտ այս դողդոջագին
Գանկերը ծերուկ պարապո՛վ լեցուն:
Ինչո՞ւ յոգնիլ այս կեանքերով փցուն:
Ինչո՞ւ կոտրտել՝ ծռելու պատրաստ
Այս լայն կռնակներն, արքայի՛ց գրաստ:
Այս համեստ, այս պարզ հոգիներն ընտել,
Արկատեան դրախտէն ինչո՞ւ վռնտել:
Գո՛նէ մէյ մէկ աչք թող իրենց տային,
Ամբողջ կեանքերնին պիտ՝աղօթէին...:
Արքան ի՞նչ կ՝ուզէր իր ստրուկ մարդէն.
Ինչո՞ւ մեռցնել՝ մեռածներն արդեն...:

Ու ինչո՞ւ թողուլ որ որբերն ապրին,
Այդ որդեգրեալներն արեա՛ն, խաւարի՛ն:

Օր մը տարիքով փոքրիկ, հոգւով մե՛ծ,
Այդ մանուկներու խումբեր դառնահեծ,
Որ ո՛չինչ չունին այլեւս, ո՛չ ծընո՛ղ,
Ո՛չ Աստուած, ո՛չ ափ մը հայրենի հող...
Եւ որ կը մուրան պատառիկ մը հաց
Հեուէն պժգանքով իրենց կարկառուած...
Եւ որոնք Մարդուն մէջը սրբազան
Ոչի՛նչ գտան այլ վայրագ մը գազան...
Զգո՛յշ, այդ նոյն հսկայ մանուկներ մի օր
Նեխած ոսկրերու վրայ բիւրաւոր
Կարմիր-Դատաստա՛նը պիտի կանգնեն...
Ու չորս հովերուն նո՛ր Կամք, նո՛ր Օրէն
Պիտի շնիւորեն... Ու այն ատեն, վա՛յ,
Վա՛յ բոլոր շնչող էակներուն, վա՛յ...:

***

- «Ահա մենք կու գանք - կ՚ըսեն անո՛նք որ
Կու գան, չէ՞ք լսեր տրոփիւնն ահաւոր —
Մութը շնչելէն աչքերնիս կուրցած
Ու արեան հոտէն ռնգունքնիս լայն բաց:

«Ահա մենք կու գանք, ուսով հրելով
Մեր Յաւին Անիւը դարահոլով,
Երկրագունդիս վրայ, խաւարին մէջէն,
Բոլո՛ր անոնց վրայ որ դեռ կը շնչեն...:

«Ահա մենք կու գանք, ահեղակորով
Մեր Յոյսին կռանիթ գարշապարներով
Խոսեցընելու անանո՛ւն կորած
Գերեզմաններուն համայնատարա՛ծ...:

«Ահա մենք կու գանք ու մենք նոյվքն ենք,
Ու խաւարին մէջ մխուած տէգը նենգ,
Վրէժներու հիդրան ենք փայփայելի,
Մե՛նք, սարսափահա՛ր ու սարսափելի...:

«Մենք՝ հին ուխտերու նո՛ր ուխտագրնաց
Մենք՝ Սուսերը բիրտ ու Գիրքն օրինաց,
Մենք՝ Յասման ջրվե՛ժը սարի կողէն,
Մենք՝ Աղջամուղջի ծընունդ լուսեղէն...:

«Ձե՛զի՝ որ քերծուած մեր մորթերէն ձի՛գ
Հարսնիքի, Մեղքի վրաններ կառուցիք...
Ու Ձե՛զ՝ եւրոպեան դիք որ շնագին
Սակարկեցիք մեր արեան լուութեան գին...:

«Ձեր սրտին դռնե՛րը փակեցէք խուլ,
Սուրե՛ր սըրեցէք, սըրեցէք զանխո՛ւլ,
Սրեցէ՛ք ձեր խղճին վրայ քարացած,
Ու ատամներուն վրայ ձեր զաւակաց...:

«Ահա մենք կու գա՛նք, հովերուն մեջէն
Ձէ՞ք լսեր ոսկրեր որ կը շշնչեն...:
Ամէնքս ալ զազիր դիակ, խոռոչ գանկ,
Ահա մենք կու գանք, ահա մենք կու գանք...»:

***

- Երթամ, շտապեմ, ծածկելու փութամ
Վաղուան աւուրէ՛ն՝ դիակն այս զառամ:
Ծագող արե՛ւն իսկ պիտի ամչնար
Այս ծերուկ վատին դիակին համար,
Դիակին համար:

Կ'ըսէիր, հայրի՛կ. «Դրախտ երթալու
«Կարճագոյն ճամփան ըլլալն է հըլու
«Հետեւող խաչի սուրը արահետին...»:
- Հա՛յր, է՛ն կարճ ճամբան խանջերն է Քուրդին,
Խանջերն է Քուրդին:

Կապար քայլերով, բիւրերու կուրծքին
Վրայ կը քալեմ ես դանդաղագին:
Մակարդած արիւնն է իրաւացընէ
Որ իմ սրունքներս կը ծանրացընէ:
Կը ծանրացընէ...:

***

Քայլերուս առջեւ յորդ գետն ահա՛:
Ա՜խ, նետեցի զայն, կ'երթայ, կը խաղայ:
Է՜հ, երթաս բարով, ծերո՜ւկ քահանայ:
Արեւն ա՛լ քեզի չի պիտի տեսնայ,
Չի պիտի տեսնայ...:
Հաղարներու հետ, այսպէ՞ս, անխափա՜ն
Պիտի երթաս դուն, ջո՜ւրը քեզ տանի:
Է՜հ, գնաս բարով, ծերունի՛ դ անբան,
Դրախտ երթալու ո՞ր է կարճ ճամբան
Ա՜յ, ո՞ր է ճամբան...:
Այս վատերո՜ւն տեղ, օր մը, ո՜վ Սիհուն,
Դարաւոր ալեա՜ցը վրայ սիրուն
Ծերմակ կարապներ կը թեւեն սահուն,
Երգե՜ր կը թռչին ցոյզի այս պահուն,
Ցայգի այս պահուն...:

Երբեմըն երբեմն, թերեւս մի՛այն,
Ջուրերու խորքէն գանկ մը լռելեայն
Յառնելով, փուշ փուշ ընէ սիրական
Ջոյզերու համբոյրն...: Ամէնը այսքան,
Ամէնը ա՛յսքան...:

***

Ջուրին մէջ երկինք կը ցոլայ անհո՜ւն...:
Ո՜վ ոսկի եղեռն Մահու այս պահուն...:
Կուռ մարգրիտներու շարք մանեա՛կ, մանեա՛կ,
Աստղեր, ծիր-կաթին, լուսին, արբանեակ,
Լոյս սինքներու պէս ողկո՜յզ, ողկո՜յզ,
Կը կաթեն գինով հիւթը հոգեյոյզ...:

Մեռնի՛լ...: Աչքերնիդ երկի՛նք, արիւնհա՛լ,
Թե՛զեմ հոգեվարքներ...: Է՞ր չեմ կրնար լա՛լ...:
Լա՞լ. ո՜չ, բայց դո՜ւն, դո՜ւն որ գահէդ անհաս,
Բո՜ւռ բո՜ւռ աստղերու մէջ կը խրոխտա՜ս,
Է՞ր չի կրնայի փառա՛ծ թոքերէս
Արիւնո՜ւտ, ժանգո՜ւտ խուխ մը շնորհել քեզ...:

Բայց դուն բարձր ես, վերն. քու խիղճիդ մաքուր
Առանձնութեան մէջ. եօթ մարգարտակուռ
Կամարներէդ եօթն անգամ բարձրացած
Սերովբէներուդ միջեւ գետնամած...:
Ու չես հաճիր ա՛չքդ անկարեկիր
Ուղղել Մարդկութեան զոր յերկիր թուքիր...:

Լո՛յս սանդուղներուդ ոսկի մատներէն
Իջի՛ր Եհովա՛դ, Ալլահը՛դ, Որ էն...:
Այլ զգո՛յշ. քու լոյսդ մութին մէջ գո՛ցէ.
Չի կառափնարանն այս անհուն գու՛ցէ
Խենթենայ յանկարծ, գո՛ւցէ ծերունի
Աչքերուդ մատներ խրուին արիւնի...:

...Խե՛ղճ յիմար: Որո՞ւ կը խօսիմ փրփրա՛ծ:
Չէ՞ որ դուն վաղո՛ւց մեռեր ես, Աստուա՛ծ:
Ու քու հսկայի դիակդ անբա՛ւ,
Գարշանքի ժահրո՛վն արիւնաթաթաւ,
Ապականե՛ր է երկնից անապակ
Ծիր-կաթիններուն երազն անյատակ...:

***

- «Վարդե՛ր մեռան,
Վարդե՛ր մեռան
Իրենց բիւր-բուրան,
Ցողիկին վրան
Վարդե՛ր մեռան,
Վարդե՛ր մեռան:

«Արիւնոտ, մանրիկ,
Ոտներուս բոպիկ
Դիակներու վրան
Դողդո՛ջ կ'երերան:
Վարդե՛ր մեռան,
Վարդե՛ր մեռան:

«Գթա ինձ, Աստուա՛ծ,
Մաղերքս ցրուա՛ծ
Կ'երթամ տարաժամ,
Կ'երթամ ու կու լամ
«Ո՞ւր է իմ վարդը
«Ո՞ւր է իմ վարդը»:

«Կ'ուզէի՛ գլխուն
Տակ դնել անհո՛ւն
Գեհենը կուրծքիս:
Թող այսպէս հոգիս,
Մեռնէ՛ր գուրգրանքո՛վ,
Իր դիակին քո՛վ...:

***

Ո՛վ է ցայգին մէջ աղջիկն այս տրտում,
Որ խենթի մը պէս կ'երթայ անդադրում,
Դիակէ՛ դիակ: Ի՛նչ է այս հառաչ:
Ո՞վ է դիտապաստն այս՝ որու առաջ
Հէգը կանգնեցաւ: Ծի՛ չ մը...: Ու ահա՛
Վիրաւորն ելլել կ'ուզե, կը դողայ.
Բազուկներ իրար կը գալարուին քար...:
Ու լուսնակին տակ, սերէ՛ն խելագար՝
Արիւնո՛տ, փրփրո՛տ՝ լա՛յն բերանը տաք
- Բիւր-ժանիք վիհի մը պէս անյատա՛կ —
Խոր հոնդիւնով հոգեվարքը արդ
Կպցուց սիրուհւոյն բերնին վրայ վարդ...:

Ահե՛ղ շրջանակ: Զորս կողմը մեռել,
Մէջտեղը Սէր. մո՛ւթ արահետ անել:

...Զէնքս կրակե՛ցի. գանկերն հակեցան:
Մոտեցայ իրենց. ըսի բարձրաձայն

Հօլա՛, ընկերնե՛ր,
Ինչո՞ւ էք լռեր.

Ձեզ չա՛տ պելո՛ւ:
Դրախտ երթալու
Ո՞րն է կարճ ճամբան
Ա՛յ, ո՛րն է ճամբան...

***

Յետոյ, ապշահա՛ր իրենց մունջ քունէն,
Գլուխքս դբբի երկիւղածօրէն
Իրենց զոյգ գլխին քարացուցի գիս.
Ու երկաթէ քուն մը ընկճեց հոգիս:

Այն ատեն հսկայ մը զարկաւ ուսիս.
- «Խե՞նթ, ի՞նչ կը տեսնես, կ՚ուզեմ որ խօսիս»:
Ու ես խօսեցայ ու ըսի իրեն
Իմ ապառաժէ քունիս խորերէն.

- «Կը տեսնեմ հարիւր հին քաղաքներու
Հարիւր աշտարա՛կը հեռուէ հեռու:
Կը տեսնեմ կապար օդին մէջ տխուր,
Հարիւր զանգակները դարերով լուռ:

«Կը տեսնեմ հարիւր սարեր մոխրապատ,
Անցա՛ւ, անժպի՛տ, իբրեւ անապատ:
Կը տեսնեմ բերդեր անդունդներու քով՝
Ժամանակին դէմ գոցուած՝ փականքով:

«Կը տեսնեմ մեր հին տապանաքարեր
Հազար ցեղերէ կոխուած՝ անվեհե՛ր:
Բիւր քառուղիներ կը տեսնեմ, Աստուա՛ծ,
«Աստ-Հանդէի»ներով սալայատակուած...:

«Բայց ահա՛ հարիւր զանգերն համօրէն
Երկիւղածո՛ւրէն ու դիտակցօրէ՛ն,
Մութ դիշերին դէմ, ամէ՛նքը մէկանց,
Փոշոտ լեզուներն շարժեցին յանկարծ:

«Քառուղիներու տապաններն անձայն,

Խորհուրդներո՛ւ պէս լռի՛ն բացուեցան.
Հարիւր իշխաններ եկան անբարբա՛ռ...:
Ահա՛, ցայգին մէջ կ'երթան վեհափա՛ռ...:

«Կը տեսնեմ, կու լամ...: Թափո՛րն է Ուխտին:
Ուխտին որ կ'ապրի դե՛ռ Մահէն անդին.
Ուխտի՛ն որ ահա հեռո՛ւէ հեռու
Փակա՛նքը բացաւ սարի բերդերու...:

«Հարիւր իշխաններ կ'երթան անխոո՛վ.
Բայլերնին ծանր է եօթը դարերով.
Վահաննին ժանգոտ, բայց աչքերնին վէս,
Ոտքերնուն շղթան կ'երգէ ջուրի պէս...:

«Այն որ թափորին կ'երթայ առջևէն՝
Խոնջ է լայն բեհեզ մը քաշկռտելէ՛ն...
Կարմիր-ծիրանին է արքայական,
Թե Ցեղին արիւնն... չե՛մ տեսներ այնքան:

«Ու թափորին հետ, ու թափորէն վեր,
Թռչուն մ'օդին մէջ կը խարխափի, ծե՛ր...
Այդ՝ միթէ՞ արծիւն է արքայական,
Թէ սեւ բաղդին բուն... չեմ տեսներ այնքան:

«Լա՛յն կարկառեցի ձեռքերս արիւնոտ.
- «Առէ՛ք, գոչեցի, ա՛խ, դի՛ս ալ ձեզ մօտ.
«Կ'ուզէի այսպէս գիմել յաւիտեան
«Ցեղի մը Ուխտին անդրշիրիմեան...»:

«Բայց ահա՛ ծագեց լոյսն արշալոյսին.
Հարիւր իշխաններն ինքան միասին
Բաց տապաններու քար սանդուղներէն.
Ու ամէ՛ն, ամէ՛ն բան կորաւ նորէն...»:

...Ու ամէ՛ն, ամէ՛ն բան կորաւ նորէն:
- Ժամն է որ բուի մը պէս, վատօրէ՛ն,
Գոյութիւնս ծակի մը մէջ թաքթաքուր
Ծածկեմ Արեւուն ճաճանչէն մաքուր...:

ԹՐՔՈՒՀԻՆ

(գեղջուկ եղերերգ)

Ասեղի հիւսքը
Ա՛յ աղջիկ
Հայդուկը
Հայուհին
Առեւանգումը
Կարմիր մկրտութիւնը
Պուտ մը արիւնը
Կուսերգութիւն
Վրէժը

***

Հայր, մայր, բակին մէջ, ծերուկ կը ննջեն:
Խարխուլ տնակին ծակերուն մէջէն
Վայրագ կը սուլէ ցուրտ ձիւնը ձմրան.
Աստուա՛ծ, այս ի՞նչ հով, հիմեր կ՚երերան:

Հողէ կանթեղի մը լոյսով դողդոջ,
Մինա՛կ, դեռատի աղջիկ մը բողբոջ,
Գաղտնի ձեռակերտ կը հիւսէ ասուէ,
Կը հիւսէ լռի՛կ, լռի՛կ կ՚արտասուէ:

Անցած շաբթու երբ սարէն գիւղ գընաց,
Սուրբի մատուռին իրը ուխտագընաց,
Գաղտնի գներ է ապրուշում քաղքի,
Պունճուխներ մանրիկ, մետաքս, թել ոսկի:

Ու ամէն գիշեր, ծնողքը բարի՛
Երբոր ննջեն, ի՛ր գործին կը փարի.
Բարակ ասեղով ան իր կարն ասուէ
Կը հիւսէ լռի՛կ, լռի՛կ կ՚արտասուէ...:

***

- Որի՞ համար է այդ կարդ, ա՛յ աղջիկ.
Որի՞ համար է արցունքդ, հա՛յ աղջիկ:
Ջահիլ մը միթէ՞ սարերու վերով,
Սիրտդ առաւ կուրծքէդ ու գնաց բարով...:

- Ես ինծի համար կու լամ, աղբերջա՛ն.
Գիշերին գաղտնիքն առած պատմուճան...:
Սիրտը սգոտ է, սիրտս սէր չունի,
Սիրտը վերքոտ է, սիրտը տէր չունի:

- Ինչո՞ւ համար է մետաքսդ, ա՛յ աղջիկ,
Ինչո՞ւ համար է հառաչդ, հա՛յ աղջիկ:
Մի՞թէ հարսնիքիդ աղքատիկ ջեհեզ,
Հալաւիդ համար կը հիւսես բեհեզ...:

Եւ միթէ՞ հարսնիք ունիմ, աղբերջա՛ն.
Թէ մեկնիմ տուն էս, մեռնի՛մ դաւաճան:
Այս ցուրտ սարերուն վրայ ամայի,
Մնողքս ու եղնիկս ո՞վ պիտի նայի...:

***

Բայց ահա ժպտեց կոյսը լռելեայն,
Գործն աւարտեր էր. մախաղ մ'էր միայն:
Կտրեց մազերէն սեփսեւ ծամ մը լայն,
Ու հիւսեց հապճեպ, - իր անունն էր այն...:

Մնողքը դիտեց, կը քնանային:
Լամբարը մարեց. ու աստուածային
Աղջիկը մեղմին քայլերով դուռնէն
Դուրս սպրդեցաւ երկիւղածօրէն:

Հո՛ն, իր մեծ եղբայրն՝ ամէնէն թագուն,
Այդ բուք-բորան, ցուրտ գիշերով անքուն,
Ինչ որ հին զէնքեր սրբելով մաքուր՝
Կը պատրաստուէր մեկնիլ թաքթաքուր...:

Աղջիկն իր վզին սեղմ փաթթուեցաւ՝
Մախաղն իր ուսին անցուց, ու լացաւ...:
Ջահիլն հայրենի, իր պարտքին հլո՛ւ,
Գնաց զարնելու...: Գնաց մեռնելու...:

***

Բայց ես քե՛զ կու լամ, ո՛վ հայածին Կոյս.
Դո՛ւն մեր ցայգին մէջ՝ խաւարակուռ Լո՛յս:
Դո՛ւն միշտ շշնչող ու մի՛շտ խաբուած Յոյս.
Դո՛ւն մեր դամբանին՝ Ծաղիկ սգաբոյս...:

Ո՞ր Օրէնքէն, ո՞ր Աստուծմէն, ո՞ր մութ
Արդարութենէն, ո՞ր գութէն անգութ,
Ո՞ր մէկ ոճիրիդ քաւութեան համար՝
Կարմիր շղթայիդ օղերն անհամար...:

Դո՛ւն, կին, չունի՛ս իսկ այն լոյսը ծաւի,
Այն ցոլքը յետին, որ Սէր կը կոչուի:
Դո՛ւն արգանդն ես լոկ ծնելու անո՛նք
Որ պիտի մեռցին մահով անողոք...:

Ու սո՛ւրի մէջէն, ու բո՛ցի մէջէն,
Ու արեա՛ն մէջէն, Մահը կ՚ընդմիջեն
Ձեռքերդ՝ վեր բռնած մանո՛ւկ մը, վայրի
Ձայնով լալով «Ա՛զգը պիտի ապրի»:

***

Ժամանակ անցաւ. աղջիկն ամէն օր,
Լոյսը չի ծագած կ՚ներթար հեռաւոր
Սարերն իր եղնի՛կը արածելու,
Ճամբան դիտելու, եղբայրն հեծելու...:

Ու զոյգը ծերուկ — մահահոտ արդէն —
Երկուքի կոտրած, կակուղ մարմանդէ՛ն
Հեռուի Սուրբին կ՚ներթային կրքուն,
Աղօթել կորած Ջահիլի հոգուն...:

Առտու մը ալ երբ աղջիկը Հայուն
Կ՚ներթար, հեռուէն լսեց խե՛ղճ մայիւն.
Գթաց, թափանցեց գոգը անտառին.
Երբ չորս բազուկներ առին զայն, տարին...:

Աղջիկը գնաց, համակերպ, հլո՛ւ,
Ձայներ կը լսէր, չէր զօրեր լալո՛ւ...
- Աղջի՛կ, ա՛յ աղջիկ, սարը ամայի
Ծնողքդ ու եղնիկդ ո՞վ պիտի նայի...

***

Ու Բէկը ըսաւ. «Այս գիշեր հոգւոյս
Տօնն է. վառուին տա՛ս ջահեր լիալոյս.
Բերէ՛ք սրբազան կոնքը արծաթի.
Այս գիշեր Արևս արեան մէջ ծաթի:

«Նե՛ր ապաքեցէք աւարս գեղեցիկ,
Այս սուրբ կոնքին մէջ կանգնէ՛ պացիկ
Աղոթքի մը պէս՝ հասակն իր նոճի...:
Իր մկրտութեան Ալլահ թող հաճի...:

«Բերէք կարաւանն Էգերուս, կարգո՛վ,
Կոնքին շուրջ ծունկի շարուին քովէ քով:
Ու թող ա՛յն որուն մոտեցայ երեկ
Զոհուի կոնքին մէջ. դաշո՛յնը բերէք:

«Թող երգեն ամէ՛նքն ալ. ա՛յն որ կուլայ
Առաջին դոհին պէս պիտի ըլլայ...:
Թող ծրնի Իսլամ արիւնով խոնաւ
Կոնքէն՝ Նո՛ր Իսլամ...»: Ու այսպէս եղաւ...:

Անշշո՛ւնչ ամէնքն ալ հեռացեր են:
Լոյսերը մարած. ջահի կայծերէն
Ոմանք կը մխան - եղեռնի մը պէս...:
Խունկի ծառն՝ ապրող անձ մ'ըլլար կարծես...:

Ու վէ՛ս, ու խրո՛խտ, ու մո՛ւթ, անմռունչ,
Մէջտեղը կանգնած կոյսը անտէրունչ,
Ո՛ւ մերկ, ո՛ւ իսլամ արեամբ հրավառ,
Դիւցազնի կարծես մերկ նիզակ մ'ըլլար...:

...Ո՞վ պիտի լայ ձեզ, տարուա՛ծ, մոլորո՛ւն,
Գեղեցկագոյններդ Գեղեցիկներուն...
Ձեր առջև կի՛րքն իսկ պիտ'իմաստնանար
Ու Իմաստութիւնն պիտի ծառանար...:

Դեռ կո՛յս, դեռ վայրի՛, դեռ տա՛ք, անապա՛կ,
Դո՛ւք որ թշնամու վրաններու տակ,
Թափելու կ'երթաք պուտ մ'արցունքի հետ,
Ամոթապարտ պուտ մը արիւն անհետ...:

***

Ու Բէկը երգեց. «Դու Սուլթանս ես, ջան.
Դամասկի բեհե՛զը քեզ պատմուճան:

Դու իմ գիշերի Արևս ես, ջա՛ն, ջա՛ն,
Ինչպէ՛ս նայիմ քեզ, հոգիս կը դողայ...:

«Դու իմ նորածաղ Թրքուհիս ես, ջա՛ն.
Իմ երկու աչերքս քեզ կը տենչան:
Սրտիս վարդենույն գշխոյն ես, ջա՛ն, ջա՛ն,
Ինչպէ՛ս փրցնեմ քեզ, ձեռքս կը դողայ...:

«Դու ինչո՞ւ այնքան անգո՛ւթ ես ինձ, ջա՛ն,
Մանրիկ ատամներդ հոգիս կ'որոճան:
Մի՛ ջահեր աչքիդ տաճարը, ջա՛ն, ջա՛ն,
Ինչպե՛ս մարեմ քեզ, սիրտս կը դողայ...:

«Դու գլխիս հրաշէկ սաղաւարտն ես, ջա՛ն.
Շապի՛կ բոցեղէն, չքնաղ դաւաճան:
Սիրտս կըրակի վըրա՛յ, կ'այրես, ջա՛ն, ջա՛ն,
Ինչպէ՛ս մխեմ քեզ, սուրբս կը դողայ...»:

***

...Թրքուհին այլև՛ըս չի ժպտեց ընա՛ւ:
Առաջին ցայգին արցունքը խոնաւ
Այնպէ՛ս խոր գծեր էր դեմքին ճամբան,
Որ չի կրցաւ զայն սրբել ո՛չ մի բան:

Ո՛չ մետաքս հաչաղ, ո՛չ պերճանքներ բուստ,
Ո՛չ Դամասկոսի բեհեզներ հարուստ,
Ո՛չ Պենկալայի վարդեր դեռ խոնա՛ւ...
Թրքուհին այլև՛ըս չի ժպտեց ընաւ:

Ան ի՛ր Օրէնքէն, ան ի՛ր Արդանդէն,
Ան ի՛ր Կեանքէն, իր Ցասումէն, արդէն
Մի նոր Իսլամի ծնիլը կ'զգար.
Զայն ի՛ր արեան մէջ խեղդելու անկար...:

Խեղճն ա՛լ չէր խորհեր, թե սարն ամայի
Մնողքն ու եղնիկն ո՞վ պիտի նայի...
Բայց Բէկն ըսեր էր. «Ալլահ օրհնէ քեզ,
Եղբայրդ մոտ օրէն դու պիտի տեսնես...»:

***

Ու Բէկը եկաւ գիշեր մ՚ուշ ատեն,
- «Ո՛վ իմ Թրքուհիս, տե՛ս, հեղեղատէն
Անցնելուս այս խեղճը ինձ կը դաւեր
Իր դանչերն ու գինք քեզ բերի նուէր»:

Թրքուհւոյն իրա՛նը սառսռաց փուշ փուշ.
Առաւ ծանր մախա՛ղը, դիտեց ապուշ.
Իր հիւսքն էր ոսկի թելերով անշէջ,
Իր մազն, իր անունն, արիւններու մէջ...:

Աչքը մթագնեց, մոռցաւ ամէն բան.
Նետուեցաւ վայրի թռչնի պէս անբան.
Ղանչերը մխեց շե՛շտ Բէկի կուրծքին,
«Այս քե՛զ համար էր...» գոչեց մոլեգին:

«Ու այս ալ ի՛նձ համար...» ըսաւ խելայե՛ղ
Անսահմա՛ն, անվե՛րջ քրքիջով ահե՛ղ,
Բռնած եղբօր գանկն աչքերուն առջին...:
- Առաջին խինդն էր, ու շունչը վերջին...:

ՄԱՐԴԵՐԳՈՒԹԻՒՆ

Գիւղական եկեղեցիին մէջ — *Ծնունդը*
Գիւղական ճամբուն վրայ — *Կեանքը*
Գիւղական գերեզմանատան մէջ — *Մահը*

ԳԻՒՂԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻԻՆ ՄԷՋ

Ա.

Անցեալ տարի էր: Յոգնած ապաքէն,
Շատ քաղաքակիրթ այս Արեւմուտքէն՝
Ուր խիղճը բառ մ'է. մարդը՝ մեքենայ,
Աշխարհ գործարան մ'անխոնջ, անխընայ,
Սէրը հաշիւ մ'է, կրօնքը՝ դրամ,
Երջանկութիւնը՝ ձանձրալի մի տուամ,
Մահն՝ անմտութիւն, կեանքն՝ անհաշտ մի կռիւ
Ուր ժամանակն իսկ վատ մ'է ալեխռիւ,
Որ ամէն բոպէն իր մանրակրկիտ
Մուրճի հարուածով կը զարնէ մտքիդ...
Այսպէ՛ս, հե՛ի հե՛, յոգնա՛ծ, յուսահատ,
Անմի՛տ այս վագքէն անդո՛ւլ, անընդհատ,
Կարօտն ունեցայ հին հին գարերու.
Եւ հիւանդ հոգիս տարի ես հեռո՛ւ,
Հեռո՛ւ, խնկաւէ՛տ, լո՛ւռ, մշտնջե՛նի,
Արեւելքի իմ գիւղըս հայրենի...:

Բ.

Կիրակի մըն էր, քայլերս ուղղեցի
Իմ ալեւոր մօրս հետ եկեղեցի:
- Պիտի ծիծաղիք, կարծրացած սրտեր.
Կարդացիք Լիւքրէս, Եպիկուր, Վոլթեր,
Մի քանի ուրիշ մութ գիրքեր ալ դեռ,
Բայց անհաւատի այդ ժժգոյն թուղթեր
Իրաւունք չե՛ն տար որ ամբարտաւան
Ձեր թոյնը փչէք՝ կըրօնադաւան
Հոգւոյն ալեւոր մօր մը ծերունի,
Որ ապրելու դեռ հազիւ օր մ'ունի,
Որ ծովուն վրայ՝ շիւղի մը նման,
Մէկ ոտքը մատուռ, միւսը գերեզման,
Գերագոյն, անհաս, անսկիզբ, բարի,
Մթին Աստուծոյ մ'անուան կը փարի.
Ու անիրաւուա՛ծ, տառապա՛ծ, հուսա՛,
Մեծ Արդարութեան վճռին կը յուսայ...:

Գ.

Ու դո՛ւք, ո՛վ Հօրաս, Զենոն ու Վոլթէր,
Ինչ որ ալ ըլլաք՝ երէկինն էք դեռ.
Մինչ յիսուն հազար այս տարի է որ
Անդուլ կը դառնայ աշխարհն ալեոր՝
Հաւատացեր են մարդերը բոլոր:
- Բարէ՛, հակառակ հաւաքիս մոլոր,
Ծաղրել չի գիտցա՛ւ բնաւ իմ հոգին
Տաճար մ՚ըլլա՛յ այն հեթանոս բագին,
Քար-քար աւերակ սիւներ Բառնաքին,
Հրրապաշտ Պարսիկ բրլուր բոցագին,
Բոցը Սիպիլի, Հնդիկ Էլլորան,
Ասորեան Հարիւր-զոհեան հին խորան,
Կամ Քրիստոնեայ պերճ եկեղեցին...
Հոն մարդերը Մեծ-Յոյսը դարբնեցին...
Ու հո՛ն - գլխարկնիդ բացէք վեհերուն -
Գերեզմաններուն է կենդանիներուն...

Դ.

Եկեղեցւոյն մէջ մտայ լռելեայն:
Շէնքը փոքրիկ էր, բայց բաւական լա՛յն՝
Ատուաձն ու դարե՛ր ամփոփելու...:
Քար քարի վրայ ծներ էր, հըլո՛ւ,
Առանց արուեստի, առանց մեծ ոճի,
Պարզ, ինչպէս ծառ մը որ հողէն կ՚աճի.
Ու քար, ու բազմոց, ու կերոն, ու խաչ,
Հոն, հին դարերու բոյրն ունէին գաղջ...:
Ու առաստաղի աղքատ ջահերէն
Կախուած՝ ժամանա՛կը մեռելօրեն
Կը ննջէր անշա՛րժ, դարե՛ր քնէած,
Բշոցին ձայնէն երբեմն շոյուած...
Հոն ո՛չ հեք, ո՛չ վաղք, ո՛չ ժամ, ո՛չ վայրկեան.
Անսահմա՛ն, անխոո՛վ, անծա՛լ, յաւիտեա՛ն,
Զո՛րս պատերու մէջ՝ Անհո՛ւն մը խորին,
Ուր ծեր գեղջուկներ մեռնի՛լ կը սովրին...:

Ե.

Բայց բացառիկ տօն մ'էր այդ կիրակին.
Կնունքն էր Ջոջի նորեկ որդնակին,
Ինչ որ գիւղին նոյնքան է կարեւոր,
Որքան ծնունդի տօ՛նը դարաւոր
Նազարէթի հին քաղաքացիին:
Ուստի ծեր, մանուկ, հաւաքուած էին:
Ու քահանան այդ մե՛ծ օրուան համար,
Պատրաստեր էր փոքր քարոզ մը յարմար:
Պերճ խօսքի տաղանդ չուներ ընածին,
Բայց զայն ընտրեր էր հովիւ՝ գիւղացին,
Զի հասակով բարձր էր, վարքով արդար,
Հայերէն գիտէր, նո՛յն իսկ կը կարդար:
Կեանքի պայքարէն յոգնած հիւսն մը հեզ,
- Կոյս Մարիամին կո՛յս նշանածին պէս —
Այնքան վայլեր էր մօրուքն ու շուրջառ,
Որ կարծես ան ա՛յնպէս ծնած ըլլար...:

Զ.

Զոյգ կերոնի մէջ՝ կը խօսէր բեմէն.
Ու կ'ունկնդրէին գեղջուկներն ամէն,
Խո՛ր երանութեամբ սուզուա՛ծ անհընար.
- Թեև հայերէն մա՛րդ չի հասկնար...
Հին Աճեցարուքն առած ընարան,
Կը գտնէր Տեր-Հայրը շա՛տ ընական
Որ տղերք աշխարհ գան անհամար — լուրջ -
Ինչպէս բիւր շիւղեր ձիթենիին շուրջ:
Յանկարծ շլացին աչերս քնէա՛ծ,
Նաբոլէօնին անո՛ւնն էր տուած:
Նաբոլէօն... ի՛նչ քառս անյատակ՝
Աշխարհքէն քաշուած այդ մատուռին տակ:
Զէ՞ որ ըսեր է այդ մարդն ահագին,
«Մայրե՛ր, զաւակնե՛ր շինեցէք ազգին...»:
- Ախ. զո՛րք պէտք էր այդ ամբարտաւանին՝
Որ թնդանօթներ գիւղէ՛ գիւղ տանին...:

Է.

Պատարագէն վերջ, քով քովի անձայն,
Երկու թափօրներ իրար քսուեցան:
Ան չէր դասական հանդիպումը հին՝
Կնունքի թափօրն՝ Մահուան թափօրին. —
Մէկ կողմ ծնո՛ւնդ, խի՛նդ. միւս կողմ մա՛հ ու լալ.
Ու եկեղեցին կ՚օրհնէ երկուքն ալ...:
Ո՛չ: Երկու թափօր, երկո՛ւքն ալ ժպտուն.
Մէ՛կը նորածին որդին մեծատուն,
Մի՛ւսը աղքատի ծնունդ անտուն.
Մէ՛կը բեհեղով քնած, միւսն արթուն.
Մէկուն ժանեակներ, մետաքսի հիւսկէն,
Միւսին ձորձ մը խեղճ՝ հօրը շապիկէն.
Առաջնոյն ոսկի, ժանեակ բիւր տեսակ,
Երկրորդին ճակտին փուշի սև պսակ.
Մեկը Տէ՛ր արդէն, միւսը Գրա՛ստ:
Ճակատագի՛ր, վա՛խ, տղաքները փաստ...:

Ը.

Բայց այս ի՛նչ արդար օրէնք մ՚է խորին
Որ յղփացա՛ծ, ճո՛խ Մեծերը երկրին
Իրե՛նց արգանդին մէջ կը հարուածէ:
Հաւասարութեան խո՛ւլ պէտք մ՚է գուցէ
Որ վիժածընունդ սերմերը Մեծին
Ի՛ր որովայնին իսկ գո՛գը հիւծին,
Ու հաշիւներէ վերջ, երբ ի հարկէ
Ոսկին ա՛լ պատրաստ է, հա՛յրը գրկէ
Խանձարուրներու մէջ մետաքս գեղերի,
Անժպի՛տ, տժգո՛յն հրէշ մը մարդակերպ...:
Մինչ քանի՛ թշուառ խեղճեր է՛գ, արո՛ւ,
Որ յեղակարծ սէր մ՚ունին իրարու,
Կայծակներու պէս իրարո՛ւ կու գան,
Առանց հաշուելու վաղն ու ապագան,
Ու կ՚երկնեն — խորշի մը մէջ անծանօթ —
Ինչ հսկայ կեանքեր, անէծքի անօթ...:

Թ.

Ապշա՜ծ, սարսափա՜ծ խորհեցայ անխօս,
Սպարթական հի՛ն բարքին բարբարոս,
Որ խեղդելէ վերջ կը յանձնէր գետին
Մարդկային ժժգոյն տղրուկներն յետին...:
Բայց քառասուն դարեր անցեր են արդէն,
Ու սովրեցանք որ հրէշներն ալ մարդ են,
Անո՜նք ալ ունին զգացո՛ւմ, հոգի՛,
Անոնք ալ ունին իրաւունք կեանքի,
- Հոգ չէ՛ թէ ապրին բիւրերու մահով.
Օրէ՛նքը՝ իրենց վահան ապահով...:
Ձե՛մ համարձակիր վերցնել մէկդի
Կարմիր-վարագոյրն որ Օրէնք կ'ըսուի,
Դիտելու ըմբոստ այն կեանքե՛րն հակայ,
Որ բանտերու մէջ, կառափնատի վրայ,
Կախաններո՜վ մեռան անհամար,
«Կեանքի Իրաւո՛ւնք»... պօռալնուն համար:

Ժ.

Երկուքն ալ երկա՜ր, երկա՜ր դիտեցի:
Այլևս բնա՜ւ մի խօսիք ինծի
Արժանիքին վրայ, ու տարբերութեան:
Ու ազնուական զարմին վրայ արեան:
Ահա երկո՛ւքն ալ. անկերպ բզէզներ,
Շիւղ մ'իսկ զիրենք պիտի մեռցնէր:
Կ'ուզեն անուն տալ, ի՜նչ պէտք անունի...
Իւրաքանչիւրն ալ իր անունն ունի.
Մին Ո՛յժն է անգութ, միւսն Սարկութի՛ւն:
Այժ չունի՝ կ'ըսէք խլէզն անարիւն.
Ի՜նչ պէտք արիւնի. - անյագ բոբենի՛,
Հացի մը փոխան, կարմիր, ծիրանի,
Ան պիտի ծրծէ Արիւնը միւսին,
Ու պիտի մըխէ ժանիքն իր միսին.
- Օրէ՛նքը՝ իրեն անքոյթ օթևան:
Ողջունեցէք զայն, Իշխանն է վաղուան...:

ԺԱ.

Մնրադրած դողդոջ, աչքերբս ձեռքիս,
Կուրծքիս տակ զսպել կ'ուզէի հոգիս:
Հազա՛ր նկարներ կ'անցնէին մտքէս:
Արեան շոգվոյն պէս, նոճիներու մէջ
Բի՛ւր կախաղաններ անգութ մեծերու...
Ու հրդեհներու մէջ հեռուէ հեռու,
Սարուկներու կո՛ւռ, բարբարո՛ս գունդեր,
Որ տաճա՛ր, աստուա՛ծ, կո՛ւռք, իշխա՛ն ու տէ՛ր
Տապալելով վար, կ'երթային հեռո՛ւ
Հաւասարութեան սե՛ղմը ցանելու,
Ու լայն բաշխելու Արդարութի՛ւն, Հա՛ց...:
Այտիս վրայ հրաշէկ արցունք մը դողաց.
Աչքերբս բացի, տեսիլք էր միայն.
Ամէնքն ալ գացա՛ծ, ժամն էր լռելեայն...:
Ու ե՛ս ալ գացի՝ իմ սուգիս դարման՝
Հաւասարութեան դաշտը - գերեզման...

ԳԻՒՂԱԿԱՆ ՃԱՄԲՈՒՆ ՎՐԱՑ

Ա.

Եկեղեցիէն մինչև գերեզման
Տանող ճամբուն վրայ, քարի մը վրան
Նստեցայ տրտում, ու լո՛ւռ դիտեցի
- Հոգվոյս ծարաւո՛վը արևելքցի —
Հեռուները ջի՛նջ, միսթի՛ք, լռելեայն:
Հո՛ն, երկինքներու տակ յաւէտ ծա՛ւի.
Առա՛նց ժպիտի ու առա՛նց ցաւի,
Կ'ապրէին մարդե՛ր, մրջիւնե՛ր, բոյսե՛ր...:
Հոն չէին ճանչնար ո՛չ կռիւ, ո՛չ սէր:
Հոն Անշարժութեան օրէնքին հըլու,
Առա՛նց աճելու, առա՛նց նուազելու,
Հազար դարերու ու անհունների
Մտերմութեան մէջ կ'ապրէին, - հեռո՛ւ
Սէ՛գ Արևմուտքէն ու հեգնելով զա՛յն...:
Հեռուները ջի՛նջ, միսթի՛ք, լռելեա՛յն...:

Բ.

Ու հո՛ն, անուրջի մը մէջ անսահման,
Երկիրը իբրև անհո՛ւն խնկաման,
Իր ձանձրոյթը — լայն ազօթքի մը պէս —
Անշտա՛պ, անխռո՛վ կը մրխար կարծես...:
Ու հո՛ն, հեռաւոր հորիզոններու
Անծայլ երկիքնե՛րըն հեռուէ հեռու,
Կը տեղային վար՝ օրհնութեան մը պէս՝
Ոսկեփոշի լայն անձրև մը կարծես...:
Ու հոն արևուն գունդին մէջ անշէջ,
Ու ծածա՛ն-ծածա՛ն ցորեններուն մէջ,
Ու խրճիթներու բոյնին մէջ համակ,
Աւերակներու սուգին մէջ ճերմակ,
Բա՛ն մը կար որ Կեանքէն բնա՛ւ չէր ազդուէր,
Որ կը նմանէր Երէկին, Վաղուան...
Այդ Մահուա՛ն իսկ մէջ ժխտումն էր Մահուան...:

Գ.

Ասոր համար երբ միտքն Արևմուտքին՝
Կեանք բառին առջև՛ը զարմացագին
Հարցական նշան մը կը դնէ նենդ...
Մենք կախման երեք կէտեր կը դնենք...:
Ու երբ կը վազեն անոնք տենդագին,
Թանշաններով կը լուծեն հոգին,
Կը քննեն երկինքն ու աստուածը, մենք
Մեր կախման երեք կէտը կ՚երազենք...:
Ու երբ կը խրոխտան անոնք, մենք լու լանք,
Ա՜խ, որովհետև ի՛նչ որ ալ ըլլանք,
Գլուխնիս երկինք, ոտքերնուս տակ հող,
Այգին ու ցայգին միջև տատանող
Օրորոցներ ենք...: Ու ինչ որ անշէ՛ջ
է, պիտի շիջի շիրմին մութին մէջ...:
- Լացը վերյիշում մըն է լռելեայն,
Թէ ի՛նչ ալ ըլլանք, մարդեր ենք մի՛այն...:

Դ.

Այսպէս ապրեցան, ու այսպէս կ՚ապրին
Բոլո՛ր որդինե՛րը Արևելքին:
Խունկի՛, կնդրուկի՛ ծոցը լռակեաց,
Իրենց հոգիին անծանոթ մընաց
Պոռո՛տ Գիտութեանց շեփորը սոփեստ,
Ու սուտ Փառքերու ծածկոյթն հաստաբեստ....
Անոնք ստացան առա՛նց ուզելու...:
Ու կեանքէն անցան՝ առա՛նց յուզելու
Անոր մութ յատակը աչքէ անտես,
- Ծովուն վրայ սահող լո՛ւռ թեռակին պէս...:
Անոնք գինովցան, առանց քննելու...
Ու լացին՝ սրտի պէտքի մը հլո՛ւ...:
Անոնք խոկացին Եդեմն. ու ծնան
Անէութեան մեծ հսկան — Նիրվանան,
Ու երազատես Նազովրեցին հեզ...
- Ու երկունքը հեշտ էր Մահուան մը պէս...

Ե.

Անոնք նայեցան հեռուէ՛ն՝ մարդկային
Յառաջադիմութեան կուռ մեքենային,
Ինչպէս անտառին ծո՛ցը ամայի,
Մերունը եղնիկն հանդա՛ռ կը նայի
Տքացո՛ղ, շաչո՛ղ սև շոգեկառքին՝
Լա՛յն «ինչո՞ւ համար» մը զարմացագին
Թարթելով աչքին մէջ երազահալ...:
- Ինչո՞ւ շտապել. թէ՞ որ ամե՛նքս ալ,
Ոմանք հեւ ի հեւ, ու ոմանք դանդաղ,
Անվրի՛պօրէն պիտի հասնինք Մահ...
Կեանքն է այս. միշտ սուտ սուտի ետևէ.
Մէկը հազի՛ւ թե միւսին չափ տևէ...:
Շառաչող ծովուն ալիքներուն պէս,
Կը ծնինք ամէնքս, կրարձրաձանք վէս,
Բայց հազի՛ւ ատեն մը կայ փրփրելո՛ւ...
Պէտք է կորսուիլ. կորսուի՛նք հըլո՛ւ...:

Զ.

Ու այսպէ՛ս պիտի կորչի ամէն բան...
- Ժայռին վրայ նստած՝ դիտեցի ճամփան,
Դեղին Փոշիի յուսահա՛ս ճամփան,
Խո՛ւլ «երեկ»ներու պատմի՛չը անբան...:
Ա՛խ, այդ գալարուո՛ղ, չի հատնո՛ղ, խոպա՛ն,
Արևուն ծագէն ի մո՛ւտքն՝ անխափա՛ն
Երկարող վտի՛տ, բարեկամ ճամբան,
Ծընող Մարդկութեան առաջին օրրա՛ն,
Որուն ապալեր իրանին վրրան,
Հիմալայի սարէն մինչ Իրան,
Ու Արարատէն մի՛նչև Վոսփորոս,
Մինչե՛ւ Դանուբի ակերն մշտահո՛ս,
Ու մինչե՛ւ չորս ծագը Արևմտեան,
Գացին առաջին հայրերն Մարդկութեան,
Այրող Արևուն գունդին տակ, խաղա՛ղ,
Ճռացընելո՛վ կառքերնին դանդա՛ղ...:

Է.

Առաջին անգամ բլլալով հառա՛ջ
Մը արձակեցի այդ ճամբուն առաջ...:
Սոսկա՛ցի իրմէն. ու ափ մը փոշի
Առի, մարդու մը նման որ կ՚ապշի...
Բա՛յց ինչ կիկլոպներ, իբրև թէ անշէ՛ջ
Ի՛նչ ազգեր, կեանքե՛ր այդ փոշիին մէջ,
Ի՛նչ արեան լիճեր, քանի՛ ոսկորներ
Դարերու մէջ հոն փոշի են դարձեր...:
- Դիտեցի ուշով. զի՛ս ճանչցայ հոն շուտ. –
Նախ քարայրներու բնակիչ մագուտ,
Յետոյ ասպազէն նետաձիգ մը սէգ,
Յետոյ թագաւոր մը - եթէ կ՚ուզէք,
Յետոյ ածիլուած գլխով մէկ գերի,
Յետոյ թրուպատուր մ՚որ կը գեգերի...
Ու հիմա ժժգոյն խե՛ղճ մը դող ի դող,
Ո՛չ մարդ, ո՛չ աստուած, ու ո՛չ իսկ քերթող....

Ը.

Հո՛ն ճանչցայ նաև ծեր Սողոմոնին
Հալուէ բեռցուած կարաւաններն հին...
Գանգէսէն բոյրի, թանկագին քարի,
Ու Կարմի Ծովէն ալ ամէն տարի
Ուղտերով կրո՛ւած պերճանքները բուստ,
Դամասկի մետաքս բեհեզն ալ հագուստ,
Արքաներու ձօն Թլեոբաթրային...:
Ու վերապրեցայ հոն եղեմային
Ու գինովցընող հըրաշքը չքնաղ
Շամիրամի պերճ պարտէզին առկախ...
Հո՛ն, այդ փոշիին մէջ խօսեցուցի
Տարարագդ Անդուանն Հռոմայեցի
Որ վահանն իրեն ծախեց Տուփանքին...
Հո՛ն, խօսեցուցի նաև տխրագին
Ժողովուրդներ որ մեռա՛ն անհամար:
Չեմ գիտեր ո՞ր մէկ Արքային համար...

Թ.

...Յանկարծ ծանը՛ր թև մը զարկաւ ուսիս:
Հին երազներէն արթնցաւ հոգիս.
Ու տեսաւ տարեց մշակ մը ժժգոյն:
- «Մ՞վ ես դու»: - «Անունս է Աշխատութիւն...»:
- «Ի՞նչ կ՚ընես այսպէս»: - «Կը մուրամ...» հծծեց.
Ու լո՛ւռ հեռացաւ, մինչ ես դառնահեծ
Գացի ետևէն մինչև իրեն տուն...:
Գետնի անկողնի մը վրայ, արթո՛ւն,
Երկարած նիհա՛ր իր կինն հոգևար,
Մեծուած անասնի մը պէս կը հևար...
Ու մինչ գնաց հինգ խլէզներէն մին,
Աթոռի պէ՛ս բան մը ճարելու հին,
- «Հաց չի կայ, կ՚ըսէր հայրիկը ինծի,
«Մի քանի օ՛ր է չեմ երթար գործի,
«Կը տեսնես, վերջին օրերն են գուցե...
«Առանց ինձ, աչերն ո՞վ պիտի գոցէ...»:

Ժ.

Ու կինը բարի կը նայէր իրեն,
Ինչպէս կը նայի մարդ անա՛սնօրէն
Իրեն Աստուծուն...: Ախ, որովհետև
Իր կենակցութեան ժամը կարճատեւ
Սիրալիր եղաւ. կռիւ չունեցան
Ո՛չ դրամօժիտի, ո՛չ ժառանգութեան...:
Ժըրաջան տիկին, միշտ իր յարկին տակ...
Թանը առատ էր, անկողինը տաք...
Ու քիչ օրէն երբ Տիրոջ հրամանով,
Հողին տակ պիտի թաղուէ՛ր ապահով,
Կը խրատէր էրկան՝ առնել գիւղակին
Այսի՛նչ ժրաջան աղջիկն իբրև կին,
Որովհետև խեղճ կինը կը յուսար
Թէ ան կը նայէր աչքով հաւասար
Թէ՛ իր ամուսնոյն, թէ իր խորթերուն
Եւ թե՛ գոմի իր փոքրիկ հորթերուն...:

ԺԱ.

Դուրս ելայ տունէն, մարմինս փուշ փուշ,
Խորհեցայ կեանքին իմաստին ապո՛ւշ,
Թէ ինչպէս ստրուկ կիրքերու հլո՛ւ,
Մարդս աւելի՛ վարժ է մուրալու,
Քան պապենական օրհնած դանակով,
Քի՛չ մը վախցնել - գոնէ՛ կատակով... -
Մեր ոսկեձոյլ նո՛ր Աստուածները կո՛վ...
Խորհեցայ թե Դրամ միապետին քով՝
Ի՛նչ ժժգոյն ըմբիշ մ'է Աշխատութիւն...:
Խորհեցայ անգա՛մ մըն ալ անարիւն
Այն բո՛ւռ մը «Նորին Վսեմութեանց» վրա՛յ
Որոնց շնորհիւ երկիր կը դառնայ...:
Խորհեցայ Ոյժին վրայ մըտովի,
Ու ա՛յն հոպիտին որ Օրէնք կ'ըսուի...:
Ու գացի ես լուռ, իմ սուգիս դարմա՛ն,
Հաւասարութեան դաշտը - Գերեզման...:

ԳԻՒՂԱԿԱՆ ԳԵՐԵԶՄԱՆԱՏԱՆ ՄԷՋ

Ա.

Սկեպտիկ ժպտով մը դանդաղագին
Երբ մարդ ըմպած է մրո՛ւրը Կեանքին,
Երբ ծառայած է կամքով կորովի՝
Այն մեծ վարպետին որ Վիշտ կը կոչուի.
Ճանչցա՛ծ է դողդոջ դշխոյն որ Սէրն է.
Ազգաց եւ անհատին Պատմութեան դժնէ
Նայած է անդամ մը միւս երեսին,
Ճանչցա՛ծ է մարդուն Գիտութիւնը սին,
Արուեստն յաւակնոտ, սիրան ամբարտաւան,
Սո՛ւգը Երէկին, երկիւղը Վաղուան...
Ու ճշմարտութեան հոգին ծարա՛ւի
Զննած է երկնից պարապը ծաւի
- Հի՛ն աստուածներու վիհն այն մշտակա՛յ, -
Ա՛յդ մարդուն համար ուրիշ վայր չի կա՛յ
Աւելի՛ քաղցրիկ հեշտանքով յըղի,
Քան գերեզմաննոց մ՚աղքատիկ գիւղի...:

Բ.

Լո՛ւռ նստած քարի մը վրայ տապան,
Դիտեցի լռի՛ն այդ վայրը խոպան,
Ու զո՛ւր խորհեցայ թէ այս այն վա՛յրն է
Ուր վաճառական Աստուած մը դժնէ
Զարը կը պատժէ անսահման վախով,
Բարւոյն շնորհելով դրախտ մ՚ապահով...:
Ընկղմած ծոցն այդ Մահուան Քաղաքին,
Զուր խորհեցայ թէ անմա՛հ էր հոգին...:
Անմա՛հ. բայց չէ՞ որ երկնից մէջ զարնան
Բիւր գիսաւորներ մոխիր կը դառնան.
Աստղեր կը վառին, աստղեր կը սառչին.
Կը լռէ ցայգին պլպուլը վերջին,
Բոյս ու կենդանի կ՚իյնան անկենդա՛ն.
Ամէն, ամէ՛ն բան մահուան զոհ կ՚երթան...
Ու երկնքին հիւր՝ լոկ մա՛րդն է տրխուր...:
Անմա՛հ, մինչև ե՞րբ, և ինչպէ՞ս, և ո՞ւր...:

Գ.

Բայց ուսկէ՞ կու գայ այն Յոյսը մարդուն,
Որ մեծ-ցայգին մէջ միայնա՛կ արթուն
Կ'ուզէ հսկել՝ երբ իր ոսկորոտին
Երկու ափ հողին ներքև կ'անհետին:
Ու ինչպե՞ս դիակը փտելէ վերջ,
Մարդ համառօրէ՛ն, Մահուա՛ն ծոցին մէջ,
Անմահութեան Յո՛յս մըն է դիուցեր...:
- Անշո՛ւշտ սարերու երբ եղնիկը ծեր
Կը նայի անդունդն ի վար անյատակ...
Երբ գայլը փոքրիկ՝ մացառներու տակ՝
Կը դիտէ՝ մա՛հն իր գնդակահար հօր...
Երբ ովկիանին վրայ անդնդախոր՝
Շնագայլն հսկա՛յ կը թաւալի լո՛ւռ...
Վերջալոյսին դէմ Առիւծը տխուր՝
Երբ կը մոնչէ դաշտին մէջ խոպան...
- Անմահութեա՛ն վրայ չէ՞ որ կը խոկան...:

Դ.

Նո՛յն իսկ Մարդուն մո՛ւթ նախահայրն Ադամ,
Անգէ՛ն, անպաշտպա՛ն այդ խեղճն հաշմանդամ,
Նետուած ոյժերո՛ւ միջև ահագին,
Շա՛տ քիչ հաշիւի կ'առնէր իր հոգին,
Երբ պտո՛ւղի մը համար, անվեհե՛ր,
Անմահութենէն կը հրաժարէր...:
Բայց ահա անբա՛ւ միջոց մ'է անցեր.
Յիսուն ծանրածանր դարով՝ Մարդը ծե՛ր,
Որ իր ուղեղին դրդումին հլու,
Հասեր է ամէ՛ն ինչ գըրաւելու,
Սարուկներ գտեր է անասնոց մէջ,
Մնացածը դարկեր, հալածեր անվե՛րջ,
Ասուածնե՛ր շիներ է նախ անհամար,
Յետոյ ամէ՛նքն ալ այրելու համար...
Տիրե՛ր է Բնութեան Ոյժին ահագին,
Կը տենչայ իշխել արդ Ժամանակին...:

Ե.

Ա՜խ, անմա՜հ ըլլալ...: Ապրի՛լ յաւիտեան.
Իսպա՜ռ չունենալ ո՛չ դար, ո՛չ վայրկեան.
Ժամանակի՛ն պէս, ժամանակին մէջ,
Տքա՜լ, տառապի՛լ, բայց ապրի՛լ անվերջ...:
Սիրտը արիւնոտ, մարմինը հիւանդ,
Յոգնաբե՛կ, ի՜նչ փոյթ, ապրիլ մանաւանդ...:
Շիւղ մ՚ըլլալ մարդի, ի՛ր մը լռելեայն,
Բայց յաւիտենին մէջ ապրի՛լ միայն...:
Քար մ՚ըլլալ անարդ, ապառաժ մ՚անխօս,
Դէթ նիհար առուակ մ՚ըլլալ մշտահոս,
Ծա՜ռ մը դարաւոր, մեռա՜ղ մը միայն
Անմի՜տ, անզգա՜յ. չի մեռնի՛լ սակայն...:
- Աստուածելոյդ Մարդ, ամօթ քեզ, ամօթ,
Մութ, ամբարտաւան խրոխտութեանց անօ՛թ,
Դեռ ամէն գինով կը կառչիս հողին...:
Նայէիր աշնան տերեւին դեղին...:

Զ.

Ու երբ ըսեն թէ գիտութիւնը նոր
Այրեց հի՛ն, փոչո՜տ գիրքերը բոլոր,
Թէ Նիւթ կայ միայն, Հոգին չէ՛ անմահ,
Հոգին չի կա՛յ իսկ. — Մի հաւատաք, ա՜հ:
Վճիտ մոմեաներն հին Եգիպտոսին,
Դարերու գաղտնի՛քը թող ձեզ խօսին...:
Նայուածք մ՚ուղղեցէք դէպի Պարթենոն,
Նոր Անմա՜հներն են որ կը խրոխտան հո՜ն:
Ու է՛ն չոր գիտունն իսկ կրօնքին օտար
Քարէ արձանի մը հոգին կու տար...:
Ա՜խ, կեանքի, մահուան կռիւն անզգամ...:
- Ու անշո՜ւշտ մենէ է՛ն խելօքն անգամ
Երբ տեսնէր Մահն որ պաշտօնին հըլո՜ւ
Կու գար սիրելին մենէ խլելու,
Թէ Աստուա՜ծ ըլլար ան, Թէ Սատանայ,
Շան մը պէս պիտի խեղդէր անխընայ...:

Է.

Շա՛ն մը պէս... ա՛խ, շատ չի պիտի ըլլար...:
Բարէ՛, կը յիշեմ թե ինչպէ՛ս կու լար,
Ինչպէ՛ս կը խածնէր սնար ու սաւան,
Ինչպէ՛ս կը կանչէր արե՛ւը վաղուան
Որ ա՛լ չի պիտի գար երբեք իրեն.
Ու ինչպէ՛ս կ'ուզէր խելայեղօրէն
Մարմինն անկողնէն քաշել անհընա՛ր,
Ու ինչպէ՛ս պատէն մագլիլ կը ջանա՛ր,
Սարսափած աչքերն ուղղելով ինծի...
- «Ես եմ, բարեկա՛մդ, աւա՛ղ...» դոչեցի,
Բայց ան աչքերուս խրեց իր մատներ,
Չի ես կ'ապրէի, մինչ ինք կը մեռնէր...:
- Հասկցա՛յ, ընկե՛ր, լեզուդ վերջնագոյն,
Բայց մահէն փախչող վատ մ'էի ժժգոյն,
Չի Սէրն իսկ սո՛ւտ է, մարդերը մա՛րդ են...
Ու մեր երկուքին մէջ մա՛հն էր արդէն...:

Ը.

Ինչպէս նետահար թռչուն մ'որ յետին
Ճիգերն իր կ'ընէ կառչելու օդին...
Ծովամոյնն ինչպէս կը փարի վէտ վէ՛տ
Խլեակի մը որ կ'ընկղմի իր հետ...
Ինչպէս սարի հէգ արծիւն հոգեվար
Կը կառչի ժայռին որ չի սահի վա՛ր...
Այնպէս մատներուն ճիգովը յետին
Կ'ուզէր բռնուիլ սնարին պատին...:
Անկողնին գամուած, փտիլ, ցաւիլ, լալ,
Դարերով, ի՛նչ լաւ...: Բայց մեռնի՛լ, չ'ըլլա՛լ...:
Ահե՛ղ կը մղէր պայքարն անիրաւ
Երբ բերնէն արեան ուղիս մը գայն տարաւ...:
Այդ շքեղ սրտէն, կեանքէն ի՞նչ մընաց. –
- «Ե՛Ս» կ'ըսէ աճիւնն, - «Ե՛Ս» կ'ըսէ Աստուած:
Ու ե՛ս, իր գեղջուկ քարին վրայ կու գամ
Յանդի զարնելու տաղերս անզգամ...:

Թ.

Դիտեցի գողտրիկ այդ վայրը բողբոջ,
Ու ես ակամայ խորհեցայ դողդոջ
Ծերուկ Տանթէի ահեղ դժոխքին,
Ուր յիմար վազքի մը մէջ մոլեգին,
Այրող խաւարին, փրփրող արեան մէջ,
Երախնին բացած, անբարբա՛ռ, անվե՛րջ,
Տժգոյն հերոսներ պար կը դառնային...:
Խորհեցայ նաև սէգ Սատանային,
Զոր Միլթոն, աչքով կոյր, հոգւով արթուն,
Իշխա՛ն հռչակեց յաղթուած Մարդուն.
Ու երեքժանի ցուպով կ'զբօսնէր
Անհանգիստ ընել դատարկ գլուխներ...:
Զը մոռցայ նաև մտածել ահեղ
Օրուան՝ երբ փողին ձայնէն խելայեղ,
Կմախքներ երկի՛նք կը թռչին արդէն...:
- Ինչ որ քիչ մը շատ խնդրել է մարդէն...:

Ժ.

Մարդուն տանջուած խղճմտանքը վա՛տ
Ի՛նչ մղձաւանջներ երկնեց յուսահատ,
Ի՛նչ սադայելեան ցաւեր անհամար,
Ի՛նչ եղեմ՝ մեր գարշ դիակին համար...:
- Հո՛ն, ոչինչ կայ մութ, ոչի՛նչ կայ դժնէ,
Ան դանդա՛ղ խմուած պարապ գաւաթն է,
Առա՛նց քանդակի, առա՛նց սուտ զարդի,
Առանց նորագիւտ հնարքներու արդի,
Որ տիտղոս, տարիք կ'անմահացընեն...:
Վարդի թուփ մը հոն կ'իյնայ ծարաւէն...:
Ու եթե երբեմն ողբեր կ'ողկողեն
Քարի մը տակէն. — Ծե՛ր բուն է գիւղին...:
Թէ արշալոյսին ստուեր մը յածի. —
Իմաստասէր կո՛վ մ'է որ կ'արածի...:
Ու թէ շիրիմներ պեղուին անընդհատ. —
Բորենի մըն է, կամ քերթող մը վատ...:

ԺԱ.

...Ինկայ ու մտիկ ըրի սպահար,
Ձայնի մ'որ քարին ներքև կը դողար. –
- Ե՛ս եմ, Ե՛ս եմ, Ե՛ս քեզ եղբա՛յր, քեզ քո՛յր.
Ե՛ս տիեզերքին հսկայ ա՛չքը կո՛յր.
Ե՛ս սկիզբ և վերջ, երա՛խ ու արգանդ.
Ե՛ս վի՛հ անյատակ ու ծոց արգաւանդ.
Ե՛ս ա՛յն եմ որ քեզ ծընաւ, նաև ա՛յն
Զոր պիտի ծընիս: Ե՛ս ձայն լռելեայն:
Ե՛ս օրհնութիւնն եմ, բարիքը վերջին,
Ե՛ս այն եմ որմէ ամէնք կը փախչին
Եւ որմէ փախչիլ չի կա՛յ: Հաւատա՛ր
Ներո՛ւմն եմ անոր որ ինձ կը յուսար,
Անո՛ր որ հեգնեց զիս առանց խղճի:
Ամենո՛ւն ալ վրայ մարդըս կ'ածի...:
Մանգաղս ո՞վ պիտի համբուրէր անա՛հ...:
- Ինձ ԱՍՏՈՒԱԾ ըսին, իմ անունս է ՄԱ՛Հ...:

1909, Լոզան

ՄԱՄՈՒԼԻ ԷՋԵՐԻՑ

ՀՈԳԻՍ

Հիւա՛նդ տերեւ մը տեսայ կանաչին
մէջ դաշտերուն:
Ի՜նչ աղուոր էր գարունը, փափուկ
հովէն օրօրուն,
Սիրուն խոտերը դաշտին, ծաղիկներն
ալ բիւր գոյնով,
Կը խնդայի՛ն լռելեայն գաղջ արեւին
տակ գինով:

Բայց գարնային, կենսաւէտ այդ պահին
մէջ օրօրուն,
Հիւանդ տերե՛ւ մը տեսայ, կանաչին
մէջ դաշտերուն,
Զորցած տերե՛ւ մը նիհար, որ գեփիւռին
հրպումով,
Մեռելամերձ կը դողար՝ մարգերուն
մէջ ակնաթով:

Սիրտս անհո՛ւն ցաւով լի, ես ծռեցայ
սրգահար,
Մատներուս մէջ առի զայն, ու իր
մարմինը նիհար,
Գուրգուրանքո՛վ, արցունքով
մօտեցուցի շրթունքիս:
Անժամանա՛կ թարշամած գարնան
տերեւ մ'է հոգիս.

Ծաղիկներուն մէջ կեանքին, գեփիւռին
տակ մայիսի,
Ա՛լ ժրպտալու անկարող, ան կը դողա՛յ,
կը մսի՛...:
Հիւանդ տերե՛ւ մը տեսայ կանաչին մէջ
դաշտերուն...:

1907

ԿԱՐԱՊՆԵՐԸ

Il est d'étranges soirs,
où les fleurs ont une âme.
Albert Samain[1]

Գիշեր է լուռ, հանդարտ գիշեր ամառուան,
Մութը պատեր է երկինքը համօրէն.
Հեռուներէն քանի մը լոյսեր միայն
Իրենց ճիւնը վար կը կաթեն յուլօրէն:

Ո՛չ մէկ շշուկ: Լռութիւնը կը թրթռայ
Անծի՛ր, անծա՛յր լայնութեան մէջ օդերուն.
Ու բացխփուող աչքերու պէս, ափին վրայ,
Քաղաքներու կը պլպլայ լոյսն հեռուն:

Բարձրը, մութին ալքերուն մէջ, հեռակայ
Ժիւրաններու ստուերը լուռ կը մրափէ.
Աւելի՛ վեր, արհամարհոտ ու հսկայ,
Ալպեաններու սէգ ճակատն է սատափէ:

Զոյգ ալեփառ շղթաներու դարաւոր
Օրրանին մէջ ընկղմանած հոլանի՛,
Լեռներու վեհ հուրիներուն պէս ազուոր
Կը քնանայ կապոյտ հոգին Էմանի:

***

Գիշերն է լուռ, լիճը տրտում: Հեռուէն,
Ճաճանչներու, փրփուրներու պէս ազուոր,
Քնացող ջուրին երեսին վրայ մեղմորէն
Երկու կարապ կը սահին լուռ, մենաւոր:

---

[1] *Տարօրինակ երեկոներ կան, երբ ծաղիկները հոգի ունեն:* *Ալբեր Սամեն:*

Իրենց մարմի՛նը քնքոյշ է, գեղեցիկ,
Իրենց թեւերն արծաթակերտ, ձիւնագէս.
Ու մարմարի իրենց վիզը սլացիկ՝
Երազային տաճարներու սիւնին պէս:

Կը մտենան անոնք իրար մեզմովին,
Ու կտուցնին իրար կու տան ուղղակի,
Ա՛յնպէս՝ ինչպէս ո՛չ մէկ շրթունք տակաւին
Ա՛յնքան սիրով չէ՛ մտեցած շրթունքի:

***

Ու ձիւնափառ իրենց թեւերն կ՚առնեն վեր,
Կը գալարեն իրենց վիզը երկնասլաց,
Ա՛յնպէս՝ ինչպէս երկու բազուկ անձնուէր
Այդքա՛ն սիրով իրարու չեն գալարած:

Գիւղերուն լո՛յսը կը ցոլայ հեռուէ՛ն.
Վերը՝ շո՛ւքը ժիւրաններուն հեռակայ.
Աւելի՛ վեր Ալպեանները համօրէն.
Աւելի՛ վեր, Երկինք կանգներ է վրկայ...:

Վա՛ըը, քնացող ջուրին վրայ տրտմաբար,
Վեհ պարտքի մը գիտակցութեա՛մբը լեցուած,
Բերան բերնի, վիզը վիզին, անբարբա՛ռ,
Կարապները կը մնան լո՛ւռ, քարացա՛ծ...:

Յուլիս, 1907

ԼԷՄԱՆ

Հրանտ Տ. Նազարեանին

Ի՜նչ անուշ է հանդարտիկ հովն իրիկուան,
Մայրամուտքի քաղցրի՛կ շունչովը լեցուն.
Ծաղիկները կը մթագնին, կը հեւան.
Կը նըւազի թռչնիկին երգը ցնծուն.
Ի՜նչ անուշ է հանդարտիկ հովն իրիկուան:

Երազներու դիւթիչ քողին պէս անուշ,
Ու սիրատարփ նայուածքներու պէս մթին՝
Երեկոյեան կ'իջնէ ստուե՛րը քնքոյշ,
Մե՛ղմ կը հըպի լեռան, ջուրին, մարմանդին.
Երազներու դիւթիչ քողին պէս անուշ:

Բլուրէն վար, սէգ ծառերու շուքին քով,
Կը ստուերոտի չքնաղ լիճը Լէմանի.
Ջնաշխարհիկ պէրուհիի նազանքով
Ափին աւազը կը գգուէ, կը շիկնի,
Բլուրէն վար, սէգ ծառերու շուքին քով:

Ու կը լայննա՛յ լիճը, շըքե՛ղ, աննըմա՛ն,
Մինչեւ փէշը Ալպեաններուն սառափէ,
Մինչեւ Ռոնի լայն դաշտերը ուր Լէման
Իր կապուտակ ալեակները կը թափէ:
Ու կը լայննա՛յ, լիճը շըքե՛ղ, աննըմա՛ն...:

Մութը քիչ-քիչ կը թանձրանայ սխրալի՜:
Լիճին ամէն ափունքներէն հեռաւոր
Փոքրիկ լոյսեր կը պլպլան. կը փայլի
Սէգ լեռներու ձիւնէ ճակատը ադուոր.
Մութը քիչ-քիչ կը թանձրանայ սխրալի՜:

Հեւքով ուռած կուրծքին վրայ ջուրերուն
Ահա կ'անցնի՜ն թեթե՛ւ նաւերը մութին.
Ահա դողդոջ տարփոտ երգերն ալ հեռուն
Սիրատոչոր շրթունքներէ կը փրթին
Հեւքով ուռած կուրծքին վրայ ջուրերուն:

Լէմա՜ն, Լէմա՜ն, պատմէ՛ ինձ սէ՛րդ լոիկ,
Անհա՜ւն սէրդ, որ քու ջուրե՛րդ կապոյտ
Կ'ուռեցնէ ալեակներով հանդարտիկ,
Եւ որ սարսուռ կու տայ քու ջինջ հայելւոյդ,
Լէմա՜ն, Լէմա՜ն պատմէ՛ ինձ սէրդ լռիկ:

Ահա ջուրե՛րդ կը դողան տենդահար...:
Ըսէ՛, կուրծքիդ մէջէն ցըցուող դեղեցիկ
Ալպեանններուդ դու ձիւնի՞ն ես սիրահար,
Կարապներուդ արդեօք վիզի՞ն ալացիկ...:
Ահա ջուրերդ կը դողան տենդահար:

Խօսէ՛ Լէման, ձա՛յն տուր ջուրիդ ալքերէն:
Նաւերէն թռող սիրոյ երգե՛ր են հրաման
Որ իմ սրտիս պէս քու սիրտդ ալ կը դերէն:
Ա՜հ, վէ՛ր մ'ունիս կապոյտ կուրծքիդ
տակ թշուա՜ռ.
Խօսէ՛ Լէման, ձա՛յն տուր ջուրիդ ալքերէն:
Լէմա՜ն, Լէմա՜ն պատմէ՛ ինձ սէ՛րդ լռիկ...:

1907

ՑՆԾՈՒՆ ՄԱՀ

- Քերթողն ըսաւ. - «Անո՜ւշ վըտակ,
Շիւղերու տակ, ճիւղերու տակ
Ո՞ւր կը վազես աննըպատակ...:

«Վարդեր կու լան ջուրիդ վերև,
Սէղեր կու տան քեզ բիւր բարեւ,
Քե՛զ կը կանչեն ծաղիկ, տերեւ...:

«Լուսնակի ցոլքը ծոցդ առած,
Դաշտերու մէջ լայնատարած
Ո՞ւր կը վազես դուն շուարած...:

«Կեանքդ արդէն կարճ է, ա՛յ վըտակ,
Մի՛, մի՛ վազեր ծովն անյատակ
Պիտի թաղէ քեզ ալեաց տակ...»:

Վտակն հծծեց. - «Թող անդադրում
Վազեն ջուրերս. մի՛, մի՛ տրտում
Արցունք կաթեր անոնց սրտում:

«Թո՛ղ, որ երգեմ լուսն ու մութին.
Ի՛նչ փոյթ թե մահն է քայլ մ՚անդին,
Ես սիրահար եմ մարմանդին...»:

Ու մինչ քերթողը կ՚երազէր՝
Լալո՛վ, վըտակը եռուզեռ
Երգով իր մահը կը վազէր...:

[1907]

ԳԻՆՈՎ ՍԷՐ

Եանի Ապէլին

Դուն Հրա՛շքն ես, դուն Երա՛զն ես, դուն Սէ՛րն ես.
Տարաշխարհի չքնաղ ծաղի՛կն ես աղուոր.
Միսթիքական խնկումներով թունաւոր
Դուն մըսեղէն խենթեցընող տաճարն ես.
Դուն Հրա՛շքն ես, դուն Երա՛զն ես, դուն Սէ՛րն ես:

***

Սեւ մազերովըդ սիրէ՛ զիս, գգուէ՛ զիս,
Անոնց խորհուրդը պատմէ ինձ առանձին,
Որովհետեւ անոնք հոգիս կապեցին,
Իրենց ցանցին մէջ կապտեցի՛ն իմ հոգիս.
Սեւ մազերովըդ սիրէ՛ զիս, գգուէ՛ զիս:

***

Թաց աչքերդ վըրա՛ս յառէ տրտմապէս,
Անոնց թո՛յնը ներարկէ ինձ մեղմօրէն,
Որովհետեւ քու աչքերըդ աղուոր են,
Խորհրդամոլ անտառներու շուքին պէս,
Թաց աչքերդ վրաս յառէ՛ տրտմապէս:

***

Տըղու մը պէս հանդչեցո՛ւր դիս կուրքծիդ վրայ,
Հանդչեցո՛ւր դիս՝ ու այտերս կըրակէ՛
Քու ձիւնեղէ՛ն բազուկներուդ մէջ գրկէ,
Ու թող մարմինդ մարմնիս վրայ սարսըռայ
Տըղու մը պէս հանդչեցուր դիս կուրծքիդ վրայ:

***

Ահա շրթնե՛րըս կարօտովըդ կ՚այրին:
Ու կը լայննայ արտասուքի շիթ մը տաք
Իմ մթաստուեր թարթիչներուս շուրին տակ.
Անոնց վրայ դուն ցո՛ղը դիր համբոյրին,
Ահա շրթներըս կարօտովըդ կ՚այրին:

***

Բազուկներդ կը գալարուի՛ն, կը դառնա՛ն,
Տենչին կըրա՛կը նայուածքը կը թովէ,
Որովհետեւ քու մո՛ւթ հոգին գինով է,
Սիրախտաւո՛ր դիշերներուն պէս դարնան,
Բազուկներըդ կը գալարուին, կը դառնան:

***

Ժա՛մն է, աղուո՛ր, երանութեան ժամն է աս.
Շրթներուս վրայ դիր շրթունքնե՛րըդ բոցէ,
Մոռցի՛ր կեանքը, աղուոր աչքե՛րդ ա՛լ գոցէ...
Ի՞նչ, կ՚արտասուե՞ս, ու յուզումէդ կը դողա՞ս.
Ժամն է, աղուո՛ր, երանութեան ժամն է աս...:

[1907]

ՎԵՐՋԱԼՈՅՍ

Վերջալոյս է, կը քալեմ, հովը վայրագ
կը փչէ.
Խռովեր է լըճակին կապուտակ սի՛բտը աղուոր
Հովին շունչին մէջ ընդհատ՝ գանգակատան
երգը չէ՞

Որ սարերուն կը պատմէ հին մեներգ մը
սպասո՛ր:

Հեռուն ծառեր կան տեղ-տեղ՝ ափունքն
ի վար լճակին.
Տերեւաթա՛փ, հողմակո՛ծ, անոնք
կանգներ են հըլու.
Ու ճիւղերնին դէպի ջուր դողդղալով կը
հակին,
Կարծես հաղա՛ր գաղտնիքներ ունին
լըճին պատմելու:

Ամպի թեթեւ ծուէններ՝ հովէն տարուած
անդադրում՝
Ցածէն կ'անցնին հուպ տալով սարին,
ծառին, լճակին.
Անոնք կ'անցնին հալածուող անուրջներու
պէս տրտում,
Զը հասկցուա՛ծ բաներու աղուորութեամբն
անմեկին:

Վերջալոյս է. կը քալեմ. հովը վայրագ
կը փըչէ.
Միապաղաղ ամպերու սառնութեան մէջ
մարմարի,
Հորիզոնին վրայ լուռ, արեգակին ցոլքը չէ՞
Որ այսօր ալ ինչպէս միշտ դողդղալով
կը մարի:

Բայց ի՛նչ տրտում վերջալոյս: Երկնքին
վրայ աշունի
Ո՛չ արեւի բիւրագնեայ շառաւիղներ
թըրթըռուն,
Ո՛չ երանգներ բոցավառ, ո՛չ երակներ ծիրանի,
Ո՛չ խակ երիզ մ'ոսկիէ եզերքն ի վար ամպերուն:

Անշրջագի՛ծ, անորո՛շ, սառած ծովու մը նման՝
Հորիզոնը համօրէն գորշ անհուն մ'է կապարի,

Ուր աշնային օրերու տժգոյն արեւն անսահման
Զգալաբար կը հալի՛, կը տարտամնա՛յ,
կը մարի՛:

Ու իրիկունն է արդեն. հով ու ալիք կը
հեւան.
Երազներու գոյնին պէս՝ մութն իր քողը
կը թափէ.
Հեռուէ՛ն հեռու, մենամոլ տրտմութեան
մէջ իրիկուան,
Ուշ մնացած թռչուն մ'է որ դէպի սար
կը շտապէ:

[1907]

ՍԻՐՈՑ ԱՂԲԻՒՐ

Ահա՛ կու գամ երջանկութեան ակերէն.
Արիւնքս դեռ երազօրէն կը հեւայ,
Ու արցունքներ արտեւանունքս կ'այրեն:

Աղբի՛ւր, աղբի՛ւր, ինչ հրբճուանքով տենդագին
Երկարեցի թշուառ շրթնե՛րքս ակիդ,
Ու ի՛նչ սիրով ըմպեցի ջո՛ւրըդ անգին:

Ո՜հ, կ'ուզէի մընալ յաւէտ ակիդ քով,
Նիհար ճակատս կոթնցընել քու քարիդ,
Թաղուիլ ջուրիդ երջանկութեա՛ն պատանքով:

Ու կ'ուզէի հալիլ կուրծքիդ մէջ անհետ,
Լոյծ մարմնո՛յդ մէջ կաթի՛լ մ'ըլլալ, կէ՛տ
մ'ըլլալ,
Երգե՛լ, հեւալ, քեզի նըման, քեզի հետ:

Ի՛նչ մոգութիւն կար մարմինիդ մէջ համակ,
Ի՛նչ կ'ըսէին ալիքներըդ վազելով,
Ու ի՛նչ հրմայք կար փրփուրիդ մէջ ճերմակ:

Երթուղիները գե՛ռ բեզ կը փնտռեն տենդագին,
Ու հրատապ այտերս վար մեղմօրէն
Դողդղդալով կը սահի ցո՛ղը կեանքին...:

Ահա կու գամ երջանկութեան ակերէն...:

[1908]

ՍԻՐՈՅ ՄՐՄՈՒՆՋ

Անոնք գացի՛ն խորհուրդով ու գաղտնիքով
բեռնաւոր,
Գացի՛ն նաւերը սիրոյս իմ աչքերուս առջեւէն,
Ցրտաւկին վեր, դէպի մո՛ւթ եզերքները հեռաւոր,
Առագաստնե՛ր զինով մայրամուտի դաղջ հովէն:

Ու տեսայ որ, հինաւուրց դիցուհիի մը պէս ազուոր,
Իրենց ձիւնի անարատ սրբութեան մէջ համօրէն,
Թեւերնին վեր, անծանո՛թ ափուներու
ուխտաւո՛ր,
Անրջանքիս կարապնե՛ր ահեցան յամրօրէն...:

Իրիկուն է: Կը դիտեմ ես լո՛յծ անհունը ջուրի.
Հովը լրտիկ կը պատմէ ինծի յուշերը երջանիկ.
Ու անպատո՛ւմ խորհուրդով անսահման
ջո՛ւրը կ'ուռի:
Քար ու փրփուր ափին վրայ կը համբուրուին
իմ առջիս...:
Ես կը դիտեմ հեռաւոր հորիզոններն ուր լռի՛կ
Գացին նաւե՛ր սիրոյս ու կարապներն
անուրջիս:
Անոնք գացին խորհուրդո՛վ ու գաղտնիքո՛վ
բեռնաւոր...:

[1908]

ԷՏԸԼՎԷՅՍ

Պատիս վրայ անխօսուկ, մունջ,
Դամ մը մէջքիդ՝ կը մտածես,
Կը ժպտնիս, կու լաս կարծես,
Էտըլվէյսի ո՛վ վրտիտ փունջ:

Թառամե՛ր են թերթերդ բոլոր,
Հիւծեր է ցօ՛ղդ տրամօրէն,
Ո՞ր դժբախտ հո՛վը սարերէն
Քեզ հոս նետեց քայլամոլոր:

Ծաղիկներուդ գոգը վայրի
Ու թերթերուդ մէջ գալարուն,
Անհա՛ս, հրպա՛ր բարձունքներուն
Հիւանդ կարօ՛տն է որ կ՚այրի:

Ու կ՚երազե՛ս դուն անշշունջ,
Դամ մը մէջքիդ, ու կ՚ոլորի,
Դունատ թաւի՛շդ մոխիրի,
Էտըլվէյսի ո՛վ նիհար փունջ:

[1908]

ԺՊԻՏ

Ցանկայարոյց ու միամիտ
Բոյրի մը պէս տարտամօրէն
Հոգիիս մէջ կ՚իջնես նորէն,
Ո՛վ կանացի միսթիք ժըպիտ:

Մութ բաժակիդ գոգը վայրի
Հազար բոյրեր կ՚նուան դինով,
Դուն ի՞նչ ունիս, որ հատնումով
Թարթիչներուդ վրայ կ՚այրի:

Անդաղտնապահ վանկերդ ամէն
Սիրով, տենդով, ցաւով յըղի

Գիշերներուն՝ գաղտագողի
Փլատակնե՛րը կը պատմեն:

Ու ամբարիշտ խունկի մը պէս
Անուրջի մը պէս տարօրէն,
Ալիքնե՛րդ զիս կ՚ողողեն,
Կարծես հոգի՛ս լացնել ուզես...:

Ահա գերի՛ն եմ հրպումիդ.
Սեւ աչքերուդ մութը բոլոր
Զիս կը վարէ քայլամոլոր...
Ո՞ւր, ո՞ւր այսպէս, ահե՛ղ ժըպիտ...:

[1908]

ՉԸ ՀԱՍԿՑՈՒԱ՛Ծ...

Չը հասկցուած երգի կմախք մ՚է հոգիս
Աններդաշնա՛կ, գալարուո՛ղ ճիչ մը վայրի...:
Դո՛ւն ապառա՛ժը չես ճանչնար իմ սուգիս,
Ու աչքերուդ ե՛րգը կ՚երգես ինձ բարի:

Ու երբ զուա՛րթ ամէն բանի կը ժպտիս,
Ես կը փակեմ կոպն աչերուս որ կ՚այրի՝
Թափառելո՛ւ համար մութին մէջ սրտիս,
Ուր երկիւղած արհաւի՛րքն է քարայրի:

Դա՛ռն յուշքերուս հո՛ն սանդուխներն
անկո՛խ, կո՛յս.
Հո՛ն ցաւերուս լիճը որ մո՛ւթ կը սարսռայ.
Հո՛ն դիտապաստ հէգ հայեացքնե՛րը սիրոյս՝
Կըբանիթի կամարներու ներքեւ ցա՛ծ.

Հո՛ն... Դեռ ինչե՛ր... Զուարթ ա՛ղջիկ, որոնց
վրայ
Թէ գիտնայիր՝ պիտի լայի՛ր անկասկած...:

[1908]

ԵՐՆԷ՛Կ ՋՈՒՐ

Ո՞վ պիտի երգէ քու անփառունակ
Կեանքիդ միամիտ տաղը, մատա՛ղ ջուր,
Որ լո՛յծ դայլայլի մը պէս շարունակ
Կը փրփրիս, կ՚երթաս դաշտերուն մէջ ուր
Դարե՛ր, դարերով ե՛րգդ է գոհունակ:

Ո՛վ պիտի պատմէ վազքերդ մշտոլոր
Վայրի վարդերու երազանքն ի վար.
Ո՛վ պիտի ցոյց տայ փրփուրներուդ խոր
Հեւ ի հեւ կեանքիդ սէրերն հոգեվար,
Տարփոտ սէղերու շոյանքն ալ բոլոր:

Լուռ անրջանքի պահուն ցայգային,
Ո՛վ պիտի պատմէ խիճերուդ լեզուն,
Ու հեքիաթունակ սէրն ուռենիին
Երբ մութ գիշերով իրեն ազազուն
Ոստերը փախչող հոգւոյդ կը հայի՛ն:

Միամի՛տ վըտակ, դարերէ ի դար
Դուն մամռոտ ճամփէդ կ՚երթաս անմոլոր,
Ու երբ կը մեռնին շուրջդ անմխիթար
Գարնայնի գոյն-գոյն ծաղիկներդ բոլոր,
Երկու քարի մէջ կ՚երգե՛ս անդադար:

Երնէ՛կ քեզ, վտա՛կ, մեռնիլ չունիս դուն.
Արցունքէ մարմինդ կը վարես անվերջ,
Գիշերներու մէջ միայնա՛կ արթուն,
Անսկի՛զբն, անվե՛րջ, վտիտ փոսիդ մէջ
Կ՚երգես. երնէ՛կ ջո՛ւր, վախճան չունիս դուն...:

Ու երբ այս տողերն մրոտող նիհար
Ձեռքէն օր մը լո՛կ պուտ մը հող ապրի,
Ուրիշ քերթող մ՚ալ՝ ինծի չափ յիմար
Պիտի գայ հարկաւ երգերը՝դ վայրի,
Յանդի, չափի տակ առնելու համար:

Մինչ յաւերժօրէն կեանքո՛ւ, զուարթո՛ւն,
Պիտի կարկաչէ քու ջուրդ մշտաշարժ՝
Հեղնելով արուեստն ու կեանքը մարդուն...
Ո՛վ անմահութեան սառնա՛ր գեղանաքարշ.
Վառա՛կ, երնէ՛կ քեզ, մեռնիլ չունիս դուն:

[1908]

ՀԻՆ ԵՂԱՆԱԿ

Տիկ. Ա. Թէոդիկին

Այս գիշեր երգ մը հոգեցունց
Հովին մեջէն՝ հեռուէն հեռու՝
Ջիւնոտ տրրտում ճամբաներու
Խոր անբրջանքը արթնցուց:
Ես մենաւոր ու տրրտմունակ,
Քեզ կ'ունկընդրեմ պատուհանէս
Որ ադոթքի մ'ոլորքին պէս
Կ'արձագանքես, հի՛ն եղանակ:

Արուեստ չունիս, իմաստ չունիս,
Կը կրրկընուիս դուն անդադրում,
Ու ձիւնին հետ դանդա՛ղ, տրրտո՛ւմ,
Դուն տարուբեր կը տատանիս:

Շրնչատ մարմինդ կը դողդոջէ...
Վանկերուն մէջ տրժդոյն, վրտիտ,
Ու յանկերգիդ մէջ միամիտ
Ապրելուն խուլ մահերգը չէ՞...

Կը կրրկնէ հովն աննպատակ
Աղաղակներդ ծառին, սարին,
Ի՞նչ կը պատմես դուն գիշերին
Որ կու լայ մայթը հեւքիդ տակ:

Այս իրիկուն, ձի՛ւն իրիկուն,
Հին եղանակ մը հոգեցունց
Ծոյլ երազանքը արթնցուց
Մութ ամայի ճամբաներուն:

Երգը մեռա՛ւ հեռու անհետ.
Բայց ա՛յդ չափով, այդ յանկերգով,
Պատուհանիս դիշերին քով,
Հոգիս կու լայ դեռ երգին հետ...

ՏՐՏՈՒՄ ՈԳԻ...
(սիրերգ)

Թափառամոլ ճամփուս վրայ քերթողի,
Տրտո՛ւմ Ոգի, ահա դարձեալ գըտայ քեզ,
Հո՛ն ուր քեզի օր մը մինա՛կ ես թողի,
Քարին վրայ, աղբիւրին մոտ, կը հիշե՞ս:

Մեր հրաժեշտի օրէն ի վեր դուն այսպէ՛ս
Հեռուն յառած մութ աչքերդ սեւածիր՝
Սպասեցիր ճամբուս վրայ տրտմապէս,
Ու արցունքիդ լռիկ ե՛րգը միշտ լացիր:

Ես հեռացա՛յ տարտամին մէջ խօլաբար,
Իմ երազիս ճամբաներէն անդադրում,
Գիշերներու հովին նման խօլաբար,
Վերջալոյսի՛ թռչուններուն պէս տրտում:

Ու վազեցի - անուրջներու ուխտաւոր -
Թաւշին վրայ կեանքի ծիծղուն մարմանդին.
Ու վերքերուս ծաղիկները ախտաւոր
Տարի մինչեւ հորիզոնները մութին:

Ես խոյացայ նուիրումէ՛ս տենդահար՝
Հո՛ն ուր նիհար ճառագայթ մը կայ լոյսի,
Հո՛ն ուր սիրոյ վըտիտ երգ մը կը դողար,
Հո՛ն ուր դողդոջ ծիածան մը կար յոյսի...

Ու թեւաբեկ ահա քեզի կը դառնամ
Երջանկութեան ճամբաներէն յետադարձ,
Տրտո՛ւմ Ոգի, հոգւոյս միակ բարեկամ,
Դուն իրակա՛ն, դուն ճշմարի՛տ, դուն անդա՛ր:

Ձեռքերուս մէջ դիր ձեռքերդ մահաթոյր,
Ու հողեղէն շրթունքները՛դ շրթունքիս,
Երակներուս մէջ՝ քու շունչդ տրտմաբոյր,
Արցունքներուդ բիւրեղին մէջ՝ իմ հոգիս...:

Տրտո՛ւմ Ոգի, թեւերդ թեւիս գալարո՛ւն,
Համբոյրի մը անհունին մէջ սրգաւէտ,
Մեր ցաւերուն, արցունքներուն, վերքերուն
Պատարագը պիտի տօնենք քեզի հետ...:

ՍԻՐՈՅ ԵՒ ՄԱՀՈՒԱՆ ԵՐԳԸ

Իմ կեանքիս թող աղաչաւոր երգ մ՚ըլլայ,
Եղերական ու միամիտ, սե՛ւ ողբերգ,
Իմ սիրտիս թող անհունին մէջ վէրք մ՚ըլլայ,
Հսկայական ու տխրօրէն քաղցրը վէ՛րք,
Իմ կեանքիս թող աղաչաւոր երգ մ՚ըլլայ...:

Ես կը սիրեմ իմ տրտմութիւնս դիւթական,
Իմ տրտմութիւնս Աստուածնե՛րու ցաւին պէս,
Քո՛յր, սրտիս մէջ ի՛նչ խաւարներ, վիհեր կան,
Զոր նայուածքովդ կ՚ոսկեղօծես ու կ՚օրհնես,
Ես կը սիրեմ իմ տրտմութիւնս դիւթական...:

Եկո՛ւր ինծի, լուսնակին պէս գեղեցիկ.
Եկուր ինծի, լո՛յս ու ցնծում հեւալով
Քու արծաթի շողերուդ մէջ սլացիկ
Լուսաւորէ՛ աւերակնե՛րիս լալո՛վ.
Ես Մահն եմ. ե՛կ ինձ կեանքին պէս գեղեցիկ...:

Իմ կեանքս թող առուին երգին պէս ըլլայ,
Ու երգս անուանդ կրկնումն ըլլայ թող յաւե՛րժ,
Իմ կեանքս թող մո՛ւթ ջրվեժին պէս ըլլայ,
Ու դէպի քեզ անկում մ՚ըլլայ դահավէ՛ժ.
Իմ կեանքս թող առուին երգին պէս ըլլայ...:

Ես կը սիրեմ երկու աչերդ վիհի՛ պէս,
Ուր խաւարներ կը փոթորկին մոլեգի՛ն.
Երկու աչերդ՝ Աստուածներու սկիհի՛ն պէս,

Տո՛ւր ինձ անոնց մէջ սրբրացնել իմ հոգին.
Ե՛ս կը սիրեմ երկու աչերդ վիհի պէս...:

Եկո՛ւր ինծի, քեզ կրդձայ շունչը անդոր...:
Եկո՛ւր, ես մո՛ւթ բաներ պիտի քեզ ըսեմ
Սիրոյ պէս քաղցրը ու Մահուան պէս հրդոր.
Գերեզմանիս լացող սիւքին պէս նրսեմ
Եկո՛ւր ինծի, քեզ կ'ըդձայ շունչը անդոր...:
Իմ կեանքիս թող կորած նաւուն պէս ըլլայ.
Շունչդ ուռեցնէ ծեր առագաստիս անա՜հ,
Մի՛, մի՛ լսեր յոգնած հոգիս որ կուլայ,
Տա՛ր դիս Սիրոյ կղզիներէն դէպի Մահ,
Իմ կեանքիս թող կորած նաւուն պէս ըլլայ...:

Շամբերի, 20 Օգոստոս 1910

ՄԱՀԱԶԳԱՑՈՒՄ

Այսպէ՜ս, այսպէ՜ս... Անուշ, անուշ սիրական
Մոտեցուր մանրը մատներդդ մանկական
Տաք կոպերո՜ւս, տաք կոպերո՜ւս դժոխքին,
Զգո՜յշ, զգո՜յշ, ա՜խ չըլլայ որ բորբոքին:

Կուրծքի՛ս հակէ փոքրիկ գլուխդ յաղթական,
Լսէ՛, դեռ հոն հոնդիւններ, ոդրեր կա՞ն,
Լսէ՛, անուշդ իմ սիրական: Ո՜հ, անգին
Արբանք մ'է այս որ կը խնկէ իմ հոգին:

Մեռնի՛լ, մեռնի՛լ... Անմահանալ մահուան մէջ.
Մեռնի՛լ... գրկիդ գոգն, ա՜յսպէս մեր սէրն
անշէջ՝
Անհունին մէջ ծառացընել տիրական...:

Մեռնի՛լ... կու լա՞ս... Կը խորհէի սիրակա՜ն,
Թեւերուդ մէջ քարանալու հաճոյքին,
Քո՜յր, մահանո՜յշ քոյր, մահազօր, մահագին...:

Լոզան, 14 Դեկտ. 1908

ՁԻԻՆԻՆ

Սրտէս ջահեր վառեցի
Խաւարն եկաւ խափանեց,
Սրտէս վարդեր ծլցուցի
Ձիւնը եկաւ պատանքեց...

Հպարտ հոգւոյս մէջ տղու՝
Անմա՜հ ըլլալ կարծեցի,
Գարնան երկնին տակ ազո՜ւ
Ես սիրեցի՜ ու լացի՜...:

Երգը մեռաւ շրթներուս.
Միայն մա՜հ կայ, կաղկանձի՜ւն.
Ներէ՜ ծաղկող ծիլերուս,
Ճերմակ Ոչինչ, ճերմա՜կ Ձիւն...:

Ներէ սրտիս իմ անահ,
Անուրջներո՜ւս վաղանցիկ.
Ճերմա՜կ Աստուած, ճերմա՜կ Մահ,
Չի դո՜ւ ես լոկ գեղեցիկ...:

Կը մեռնին սէր ու ժպիտ,
Չի դո՜ւ ես լոկ իրական.
Կեանքը քրքի՜ջ մ'է հտպիտ,
Ու դո՜ւ ես լոկ տիրական...:

Հաւատացի՜ վարդերուն,
Համբոյրներո՜ւն կանացի.
Սիրոյ Հի՜ն հի՜ն դարերուն
Աստուածն ըլլալ կարծեցի...

Կարծեցի գաղջ հո՜վն ըլլալ,
Հովի՜ւն ըլլալ սիրերգակ,
Աստղերուն բոցը գողնալ,
Ըլլալ անմահ արեգակ...:

Բայց սա՛ռ լեզուովդ ինձ կ'ըսես
Թէ արեւներ կը սառչին...
Ապա մարդուն սիրտը վէս
Խաւարտչին կէտ մ'է չնչին...:

Համբոյրը գէ՛ղ, սերն անշէ՛ղ,
Պետք է մոռնալ ամէ՛նն ալ,
Փակել աչերս Մահուանդ մէջ
Անհունիդ մէջ անհուննա՛լ...:

[1909]

ԵՐԱԶՆԵ՛Ր...

Երբեմն հոգւոյս ծովուն վրայ վէս,
Դիցաբանական հին նաւերու պէս
Կ'անցնին երազներ.
Առագաստներն խունկ ու հովով լեցուն
Արշալոյսներու կ'երթան Աստուծուն,
Շուշա՛ն երազներ:

Երբեմն մտքիս դաշտին վրայ դալար,
Եօթ մուսաներու նըման միալար,
Կ'անցնին երազներ:
Զեռք մը պաշտելի մատներն իմ նիհար
Կը տանին իրեն շուրթին սիրահար.
Սիրո՛յ երազներ:

Երբեմն սրտիս գերեզմաննոցէն
Ինձ հին սիրելի մահերու խուցէն
Կ'անցնին երազներ.
Իրենց քայլին տակ ոսկրեր կը հնչեն
Ու անոնք իմ մէջ խպառ կը ջնջեն
Ամէ՛ն երազներ:

Ա՛խ, կ'ուզեմ մոռնալ կերտուածքս հողեղէն,
Կ'ուզեմ բարձրանալ, երկնի աստղերէն
Գողնա՛լ երազնե՛ր.

Տղու պէս թռչի՛լ անհունին մեջէն.
Բայց բիւր ցաւեր դիս ի հող կը խաչեն.
Ո՞ւր եք երազնե՛ր...:

Եկեք փռուելու ճամբուս վրայ վերջին,
Արիւնոտ ոտներս հողին կը դպչին.
Եկե՛ք երազներ
Մեր արծուի թեւերս հովով լեցնելու,
Հպարտ հոգիս մե՛ծ հոյսով լացնելու
Սո՛ւտ, սո՛ւրբ երազներ...:

Լօզան

ՍՏԻՆՔԸ

Կեանքի Տօնն էր: Հօն էին բոլոր
որդիքը Մարդուն.
Ո՛ւ անոնք որ դեռ կ'ապրին, ո՛ւ անոնք
որ չի ծընան.
Ո՛ւ մեռելները բոլոր: Բաց երկինքին տակ
անհո՛ւն,
Կանա՛չ, անծի՛ր վայր մըն էր, սառած ծովու
մը նըման:

Գետինէն վեր ծառացող ծանրը մը ծուխ
գալարուն՝
Արիւն ու կիրք կը բուրէր: Կապարի չունչ
մ'անկենդան,
Տարածութեան վրա անծի՛ր, գիրկ գիրկի,
մոտն ու հեռուն.
Տրտում զոյգեր Մեծ Կեանքը կը բեղմնէին:
Լռելեայն:

Ու Կոյսերու կուրծքին վրայ տաք գլուխներ
սիրահալ,
Մայրեր որոնք տաժանքով կը ծնէին, օ՜հ,
անդարձ

Մեռելներու նոր սաղմեր, ծիծին յարած
փոքրիկ ալ:

Արդ կապարի օդին մէջ, հսկայավա՜ռ,
ահագի՜ն,
Կրանիթէ Բուրգ-Ատինք մը կը տիրէր
երկնամբարձ,
Սուգի սեւ խաչ ցցած իր գագաթի պտուկին:

ԱՍՏՂԻ ՄԸ

Ամէն իրիկուն արեւն երբ չքնաղ,
Արեան մէջ կարծես՝ կը սուզի դանդա՜ղ,
Ու ստուերի մէջ սարեր կը հեւան,
Ես քե՜զ կը նայիմ, ո՜վ Աստղ իրիկուան:

Զեմ գիտեր, ո՜վ Աստղ, անունդդ գոնէ,
Դեռ ինծի ոչի՜նչ չեն պատմած քենէ.
Գիտեմ միայն որ մանուկ հասակէս,
Ո՜վ Աստղ իրիկուան, ես կը նայիմ քեզ:

Մանուկ հասակէս նոյն կէտն ես դողդոջ,
Անհունին մէջ նոյն ժպիտը բոզբոջ:
Ի՜նչ փոյթ, թէ անդին դեռ բիւր աստղեր կան,
Ես քե՜զ կը նայիմ, ո՜վ Աստղ իրիկուան:

Անոնք շատ բարձր են, անհաս, յաւակնոտ,
Դուն վարն ես, մերին հորիզոնին մօտ.
Մինակը՛դ տժգո՜յն, տժգո՜յն, ոսկեգէս,
Ո՜վ Աստղ իրիկուան, ես կը նայիմ քեզ:

Դուն կաս ու չկաս, - խաբկանքը լոյսին,
Դուն յոյսն ես հեռուի, յոյսը անյոյսին...
Ու երբ արցունքոտ բիրերս կը հեւան,
Ես քեզ կը նայիմ, ո՜վ Աստղ իրիկուան:

Կեանքը երգ մ'է՛ քեզ... Ու ի՞նչ կեանք
Աստուա՛ծ,
Միշտ յոյսին յառած ու միշտ ալ խաբուա՛ծ,
- Ծեր է սիրտս, բայց աչերս սիրակէզ,
Ո՛վ Աստղ իրիկուան, դեռ կը նայի՛ն քեզ...:

Օգոստոս 20/Սեպտեմբեր 3, 1909
Սիլիվրի

ԱՍՊԵՏԻՆ ԵՐԳԸ

Ծերմակ ձին է թամբեր, տեսէք,
Ոսկի թամբին վրայ կանգնած սէգ
Լռին կ'երթայ ասպետն, ըսէք,
Ասպետը սէգ դէպ ո՞ւր կ'երթայ...:

Կը խրոխտայ վէս ձին՝ կոյսի պէս.
Արշալոյս է, ծաղկի հանդէս.
Հազար թռչներ կ'երգեն անտես.
Ասպետն, ըսէք, դէպ ո՞ւր կ'երթայ...:

Հետեւորդներն ո՞ւր են աղուոր,
Ռազմի՞ կ'երթայ ան ահաւոր.
Ո՛չ, իր սրտէն ի վիրաւոր,
Ասպետն, ըսէք, դէպ ո՞ւր կ'երթայ:

Ահա հասաւ ժայռին գագաթ,
Դէմքը ծածկեց ձեռքով երկաթ,
Խոյացաւ վար ձին խանդակաթ,
Ասպետը սէգ մահուա՛ն կ'երթայ...:

[1911]

ԳԱՑՈՂ ՄԱՐԴԸ

Չեմ գիտեր ո՛վ, չեմ գիտեր ո՛ւր
Կ'երթայ... Հի՜ն, հին ասպետ մը լուռ,
Կ'ըսեն ձիուն վրայ տխուր
Կ'երթայ շուտ-շուտ, չեմ գիտեր ո՞ւր...:

Կը տեսնեմ մեծ շուքն իր նիհար
Վերջալոյսին, ամպերէն վար,
Սեւ նժոյգին վրայ հոգեւար
Սարին կ'երթայ, չեմ գիտեր ո՞ւր...

Կ'երթայ, շուտ-շուտ ու չի տեսներ
Որ ետեւէն բիւր կմախքներ
Ա՛լ վազելէն շատ են յոգներ,
Ան կ'երթայ շուտ, չեմ գիտեր ո՞ւր...

Կ'ըսեն՝ զզեակ մ'ունի ազուոր,
Կամ ուխտ մը սուրբ, սէր մ'հեռաւոր,
Ու հոգ կ'երթայ... Եւ գիտեմ որ
Տապան մ'ունի, չեմ գիտեր ո՞ւր...

[1911]

ԵՐԵՔ ՁԻԱՒՈՐՆԵՐ

Դաշտէն երեք ձիաւորներ
Անցան երեք մրցորդի պէս.
Առաջինը սեւ ձի մ'ունէր
Ու մութ շարժում մը կ'ընէր վէս:

Դաշտէն երեք ձիաւորներ
Անցան. երկրորդը կը խնդար,
Ան կոյս կարմիր նժոյգ մ'ունէր
Որուն պայտէն վարդ կը պոռթկար:

Դաշտէն երեք ձիաւորներ
Անցան. երրորդը սպիտակ
Մե՜ր ձի մ'ունէր, ճերմակ ոսկրեր
Կը ջարդուէին իր պայտին տակ...:

Սեւ ձին Մեղքն է, միւսը Սէրն է,
Որի վրայ ուղես հեծիր,
Ճերմակ ձե՜ր ձին քեզ կը բռնէ...
Մեր ձին Մահն է որ հեգնեցիր...:

[1911]

ՍԷՐԸ

Բընարիս եօ՛թն աղիքներէն կանացի
Եօթը որբուկ հառաչանքներ հանեցի
Եւ մի՛շտ ժպտիլ կը կարծէի, մի՛շտ լացի...:

Սէրն հեթանոս Երջանկութի՛ւնն է, խաչուա՛ծ,
Սէրն ա՛յն կուռքն է, որուն առջեւ ծնրադրած
Որրի՛ մը պէս պիտի ողբար Ի՛նքն Աստուած...:

Սէրը ճերմակ անհունին մէջ կոյր ա՛չն է.
Սէրը՝ սիրոյ ովսաննան չէ՛, իր խաչն է,
Իր ցաւերուն ընդդիմացող ո՞ր քաջն է...:

Սէրը սէր չէ, մահը մահ չէ, սե՛րն է մահ,
Սէրն անդունդին մէջ ընկղուզումն է անվա՛խ,
Սէրն աչքը գոց ցայգաշրջի՛կն է անահ...:

Երջանկութեան սեղանին վրայ խրախճան՝
Բեհէզ, կարմիր ծածկոյթին տակ պատմուճան՝
Սէրը կըմա՛խք կոչնականն է դաւաճան...:

Սիրե՛լ, սիրուի՛լ, - ոսկեղենիկ սո՛ւտ աղուոր
Սիրե՛լ առանց սիրուելու, - սո՛ւգ ահաւոր,
Սակայն աւա՛ղ անսէ՛ր կեանքին, -
կեա՞նք է որ...:

Կը տեսնե՞ս սա վիհին վըրայ Սեր-ակը,
Հազարնե՛ր կուլ է տուեր այդ սե՛ւ ակը,
Իր ջուրէն օր մը խենթեցաւ Սեւակը:

Լոզան

ՍԻՐԷ

Այգո՛ւն, այգո՛ւն առուին լացող
Յանկերգն, ու ծառ, ու ծիլ, ու ցող,
Ու արտո՛յտն ալ վեր խոյացող
«Սիրէ՛, - կ'ըսին. — պիտի մեռնիս...»:

Տարիներէ ի վեր ահա
Քնարս ձեռքիս տակ կը դողայ
Յաւէտ նո՛յն վանկը. «Խեղճ տղայ,
Սիրէ՛, սիրէ՛, պիտի մեռնիս...»:

Ձեփիւռ, թիթեռ, սիւք ու թռչուն,
Ու ալեակները կարկաչուն
Կ'ըսեն՝ «Կեանքի միա՛կ ինչուն
Սէրն է, սիրէ՛, պիտի մեռնիս...»:

Ձեռքս աչերուս կ'անցնիմ արագ.
Ա՛խ, սիրե՛ր եմ սիրտս փլատակ
Մոխիր մ'է տաք... Ու չա՛տ հստակ
Ձայն մ'ինձ կ'սէ՝ «Պիտի մեռնիս...»:

ՎԱ՛ՂԸ

- Վա՛ղը... - ըսիր ինձ տրտմաբար
Ա՛խ այդ մէկ վանկը անհընար
Յաւիտեաններ կը խոստանար.
Շրթունքիդ այդ խաղը՝ «Վա՛ղը...»:

«Վաղը...» ինչո՞ւ. մինչդեռ այսօր
Այնքան չքնաղ ես ու բոսո՛ր.

Ու մինչ մեր վրայ ա՛յնքան հլզոր
Կ՚իշխէ այս պահն այսո՛ր... «Վա՞ղը...»:

Այսօր սէրն է, այսօրն հմայք.
Այսօրն յոյսն է, այսօրը կեանք,
Այսօր երազ այսօրը խարկանք
Մինչ դուն ինծի ըսիր «Վա՛ղը...»:

Ու երկչոտ սիրտդ աղջրկայ
Մաղթեց որ այդ վաղը չի գայ,
Վաղն ի՞նչ է որ, վաղը չիկա՛յ,
Գերեզմա՛ն մ՚է, հոգի՛ս, վաղը...:"

ՊԶՏԻԿ ՍԻՐՏԸԴ

Ես մերթ կը խորհիմ թե աստղերն ի՞նչ են,
Սիրող աչերու պէս քաղցր ու ջինջ են.
Ու ամպերն ի՞նչ են, ու Աստուած ո՞վ է
Նախանիւթն առջին մարմի՞ն է, հո՞վ է...:

Ու չէ՞ կարելի մեծ տիեզերքին
Մը ստուվի հասնիլ օր մը եզերքին.
Ու Անհունութիւնն իրաւ անհո՞ւն է,
Ու Անմահութի՛ւնը լոկ անո՞ւն է...:

Յիմար եմ որ այսպէս խոր կը խորհիմ,
Ես որ չի գիտցայ դեռ, պաշտելիդ իմ,
Ինչո՞ւ օր մը գիս սիրով սիրեցիր,
Թէ կը սիրէիր ինչո՞ւ լքեցիր...:

Զկրցայ ճանչնալ պզտըլիկ սիրտըդ,
Իմ մէկ ափիս մէջ փչրելիք սիրտըդ,
Բայց դեռ կը խորհիմ՝ երազիս մէջէն՝
Թէ աստղերն ի՞նչ են... Սիրոյ պէս
ջի՛նջ են...

Ո՛Չ

«Եկո՛ւր, - կ՚ըսէ ինձ տարտամ ձա՛յն
մ՚անդադրում.
- Եկո՛ւր, եկո՛ւր սիրահարի քու տրտում
Սիրտը՝ բաց ինձ՝ տերեւներու շուքին տակ,
Բանաստեղծի փոթորկող սիրտդ անյատակ...:

Դու սիրելէն ու խարուելէն ա՛լ յոգնած,
Եկո՛ւր, եկո՛ւր, անտառներուն ուխտագնաց՝
Թռչներու երգը մութ հոգւոյդ ալէյո՛ւ,
Ծառէ ի ծառ թափառելու ու լալու...:

Եկո՛ւր, ես ծեր Վիհին սիրտն եմ գահավէժ.
Ես անտառին ծերուկ սի՛րտն եմ խռովուն.
Վերջալոյսի արիւնոտ սի՛րտն ենք յաւերժ.
Հեծո՛ղ սիրտն եմ գերեզմանի ցո՛ւրտ հովուն...:

Եկո՛ւր, եկո՛ւր, հասունցեր ես ինձ համար.
Մտիր սրտիս մէջ, նոյնացի՛ր անհամա՛ր
Ձեւերուս հետ, էներուս հետ մահազօր.
Քեզի քանի՛ պիտի ըսեմ իմ հրդեհ...:

Ի՛նչ հաճոյք ա՛լ մեռած սիրտ մը կրրելէն...
Եկո՛ւր քարիս տակ դիր գլուխդ լալէն,
Ոչինչիս մէջ ոչնչացիր դու անա՛հ,
Յաւերժ նոյնիս հետ նոյնացիր դուն անմահ...»:

Ո՛չ, ո՛չ: Դեռ սի՛րտս է համբոյրին ծարաւի...
Թող ինձ քայլե՛լ տառապանքի ու ցաւի
Ճամբաներէ՛ն, ճամբաներէ՛ն դեպի Մէ՛ր...
Ո՛չ, մահակոչ քու հրաւէրդ չե՛մ լսեր...»:

Սակայն «Եկո՛ւր, - կու լայ ինձ ձա՛յնը նորէն.
Անհունիս մէջ անհունացիր լուռօրէն...
Բանաստեղծի սո՛ւրբ դիակէդ ես բողբոջ,
Փոսուռանե՛ր, փոսուռանե՛ր կ՚ընեմ...» - Ո՛չ:

Շամբերի, 1 Սեպտ. 1910

ԳԻՇԵՐԻՆ ՄԷՋ

Հայկ եղբորս յիշատակին

Կը լայննայ երկինքը անծա՛յր ու ջի՛նջ,
Գիւղին վրայ քիչ-քիչ մութը կը կոխէ,
Ամէն բան իրեն գոյնը կը փոխէ,
Հանդա՛ռտ ամէն կողմ, մո՛ւթ է ամէն ինչ:

Վարդն իր աչքերը կը գոցէ մութին.
Ծառերն են կեցեր լո՛ւռ, բազկատարա՛ծ.
Նոճին իր գլուխն է վեր կարկառած.
Լոյսեր կ'արիւնին ծառերէն անդին:

Ահա կը քնանայ բնութիւնն համակ.
Կեանքը դադրեցաւ, թռչուն մը մինակ,
Միս մինակ — ինչո՞ւ - կ'երգէ տրտմունակ.

Գիշերային այս լռութեան մէջ խորին,
Իր սիրտբուխ երգերն սրտէն կը թռին,
Ու մինակ-մինա՛կ ես կու լամ լռին...:

[1914]

ԳԻՇԵՐՆ ԻՋԱՒ

Գիշերն իջաւ անամպ, անհուն,
Բիւր բիւրեղէ ի՛նչ նուրբ անուն
Տալ անուրջի այս սուրբ պահուն:
- Ա՛խ, ապրելո՛ւ երջանկութիւն...:

Կ'անէջանայ նաւն հեռակայ.
Լիճն երազ մ'է, կայ ու չըկայ.
Ջուրի շշունջն է լոկ վրկայ,
- Շշնջելո՛ւ երջանկութիւն...:

Վերն հազար աստղ, վարն հազար լոյս,
Կիսաստուերին մէջ հոգեհոյզ

Կը խօսակցին քար, վրտակ, բոյս.
- Ա՜խ, իրերո՜ւ երջանկութիւն...:

Ու կը ձայնէ մատուռն յստակ:
- Սա ծերունի ծառերուն տակ,
Այս քաղցրութեան մէջ բովանդակ
Քարանալո՜ւ երջանկութիւն...:

[1914]

ԴՐԱՄԻՆ ԱՂՕԹՔԸ

Խեղճերուն

Հողագունտիս կեղեւին վրայ տրտմածին
Թափառայած իմ ոտքերըս քալեցին
Եղբայրութեան տաքուկ շունչը փնտռելէն,
Ու ամէն տեղ իմ հէգ աչերըս լալէ՜ն
Տեսան փարթամ մեծատունին դրբան քով,
Աղքատ մայր մը, որ կը սպասէր արցունքով:

Ո՞վ ես ուրեմն, թշուառութեա՜ն դու գործի,
Դրբա՜մ, որուն լուռ ցոլքին մէջ կ'արծարծի
Ճակատագի՜րը տառապող մարդկութեան:
Ըսե՜, քու կամքդ պիտի իշխե՞ յաւիտեան.
Ու պատմէ ինձ, պիտի ըլլա՞ն միշտ, աւա՜ղ,
Զքե՜զ լալով մեռնողները անսրբա՜ղ:

Մա՜րդն, առաջին այն մարդը որ տենչավա՜ր
Պեղեց, խուզեց հողին արգա՜նդը խաւար.
Ու չարանենդ թաքստոցէդ դարաւոր՝
Խրլեց քեզի, յղկեց, մաքրեց փառաւո՜ր,
Ա՜յդ մարդը, վա՜խ, ժանտ ցոլքերուդ մէջ ժպտուն
Զը նշմարեց տխո՜ւր անկո՜ւմը Մարդուն:

Տառապանքի, անյուսութեան ողբեր խո՜ւլ,
Կը խեղդուին քար պատերու տակ խարխուլ.
Սովալըլուկ բի՜ւր թշուառներ տրտմօրէն

Իրենց նիհար ձեռքերը քեզ կ'երկարեն.
Ու տենդահար փողոցին վրայ, ամէն դի,
Քանի՜ փոքրեր կան մայրազո՛ւրկ, անօթի՜:

Իջի՜ր, իջի՜ր, խոնարհօրէն, մեղմօրէն,
Իջի՜ր ոսկի սանդուխներուդ մատներէն՝
Թշուառութեան խշտեակներուդ մէջ խոնաւ
Ուր քու ցոլքե՛րդ նըշուլած չեն բընա՛ւ.
Ցամքա՜ծ շիւղեր, բոլորը քե՛զ կը դառնան.
Իջի՜ր, իջի՜ր, անձրևներու պէս դարնան...:

[1907]

ԿԱՐԻՃԸ

Իրիկուն է: Փոքրիկ, ահեղ, մահուանակ,
Կարիճն հանդարտ մեղմ արեւուն կը տաքնայ:
Գնչուի խեղճ գերեզմաննոց մ'ուր մինակ
Եմ իրեն հետ. քարին վրայ, ես ու նա:

Անճա՛ռ հեշտանք, հեւքն արեւուն գաղջունակ,
Կոնակէն ներս, արիւնին մէջ կ'ընթանայ.
Մինչ տտունն իր գլխուն վերեւ շարունակ
Կ'ելեւէջէ, արքայօրէ՛ն անխընայ:

Ան կը տաքնայ. ու կը պաշտեմ զայն լռին.
Ու կը պաշտեմ ես քեզ, մըթի՜ն թագաւոր,
Դուն Ո՛ւժ, դուն Վրէժ, դուն Դառնացումն
անմեկին:

Երնէ՛կ կարիճ: Երանութեա՛մբ թաթաւուն,
Մահը ծոցիդ, թոյնը խղճիդ, ահաւո՛ր,
Դուն դեռ կրնա՛ս տաքնալ բարի արեւուն...:

5 Հոկտ. 1908

ԾԵՐ ԲՈՐԵՆԻՆ

Անձրեւին տակ կը քալէ. Ծե՛ր, ամեհի՛:
Էջ բորենին: Վերջին օրն է, կը վախի:
Վա՛րժ ապրելու միշտ ուրիշի մը մահով,
Իր դիակին կը ցանկայ վա՛յր մ'ապահով:

Խուովեալ ուղեղը մահամերձ գաղանի.
Իր հոգիին մութ վաղուան հարցը չունի:
Միայն դողդո՛ջ, կ'ուզէ քալել օրերով,
Գտնել մութ խորշ մ'ու հոն մեռնիլ անխռով:

- Լո՛ւռ ուղևոր. տարիներով դիակներ,
Խողխողելով սուր ժանիքներդ են մաշուեր.
Ու կը դողաս մահէն, մինչ Մա՛հ է անունդ:

Ինկի՛ր, դիակը՛դ ուրիշի մը սընունդ:
Արգանդիդ մէջ կըրած, կաթո՛վըդ սընած,
Կորիւնդ հո՛ն, փորոտիքէդ ծարաված:

Դէ՛հ, կեանքին՝ մահն օրէնք դրեր է Աստուա՛ծ...:

Լոզան, 1 Յուլիս, 1909

ՊՈՌՆԻԿԸ

Գ. Զօհրապին

Կէս գիշերէ վերջ մըն էր, խոնաւ գիշեր մ'անձրեւի,
Լապտերին թաց լոյսին տակ կանգներ էիր տըրտմովի.
Ջուրը կ'երգէր մայթին վրայ, հոս-հոն վազքն էր կառքերուն.
Կը սպասէի՛ր դուն այդ ա՛փ մը հողիդ շուրջ դեգերուն:

Բրոնի ժըպիտ մը կուլար աչերուդ խո՛րը ծաւի,
Ներկուած լիրբ շրթներուդ վրայ պըրկումը
կար ցաւի,
Ու անառակ չըփակիդ զոյգ սահանքին տակ
սիրուն՝
Ցայտքը չի կար այդ գիշեր ցայգազըւարճ
կիրքերուն:

Կը սպասէիր դուն պատրա՛ստ ու համակե՛ըպ
ու հըլո՛ւ,
Առա՛նց սիրոյ, ընտրութեան, նուիրուելու
համար կո՛յր
Այն բարեհա՛ճ Արուին, որ հաց ունէր քեզ
տալու...

Գութի, կիրքի պէս տարտամ բոց մ'ըզգացի
սըրտէս ներս՝
Ու թերե՛ւըս այդ գիշեր նուիրուէի քեզի,
Քո՛յր,
Եթե կաթիլ մը արցունք չըսառեցնէր իմ
այտերս...
Կէսգիշերէ վերջ մըն էր, խոնաւ գիշեր
մ'անձրեւի...

[1908]

ԱՐԳԱՍԱՒՈՐՈՒՄ

ԹԷՈԴԻԿԻՆ

Մառախուղի առաւոտով, ծեր ձիերը կը քաշեն,
Դանդա՛ղ, անիւը չի ճռար ձիւնին վըրայ:
Միայ շէ՛ն,
Խարազանն է որ կը խօսի թաց օդերու մռայլ
սուգին:
Ու կ'երկարի՛ ճամբան, մինա՛կ, անհորիզոն,
ահագին:

Ինքնասուզուա՜ծ, նախատիպար այդ կառքին
մէջ դիւղաշէն,
Ես կը դիտեմ սառած ձիւնը կախուած իրենց
լա՛յն բաշէն:
Մե՛ր, կը քաշեն: Խեղճ ամոլը: Աչն արուն է,
ձախն՝ էգին
Խորշոմ Մաղիկը կ'երեւայ, պոչին շարժքէն,
ցաւագին...

Հալածուա՜ծ զոյգ: Ու կը խորհիմ թե այդ
երկո՛ւքը միայն,
Մշանջենական Տառապանքն է, զոր կը տանին
լռելեայն,
Եւ թե մե՛կը միւսին բաւ է՝ խեղճ բընազդի մը հրյու՝
Տառապագին սերունդի մը ամբողջ սերմը
դընելու...

Այսպէս, թշուառ, արքայափառ մտրակի մը
նեբքեւ շե՛ն,
Յաւիտեանին Անէծքն իրենց Արդանդին մէջ
ախտաշէն,
Մառախուղի առաւօտով, ծե՛ր, ձիերը կը քաշեն...

1 Հոկտեմբեր 1908

ԻՆՁՊԷՍ ԵՐԲԵՄՆ...

Քերթո՛ղ, պատմէ՛ մեզ հայրենի յուշքերէդ,
Երգէ՛ մեզ հի՛ն օրերու երգ մը անհետ,
Թափառայա՜ծ թրուպատուրի ե՛րգ մը զով,
Աբրշի՛ռ ու զո՛վ մեր Գողթանի ողկոյզով...

Մեռելի չէ՛ն երգ մը հանէ թոքերէ՛դ,
Հի՛ն, կը ապա՜շտ այն երգերէն որոնց հետ,
Մեր ասպագէն Քաջերն արոյր թափորո՛վ,
Սաղաւարտնին շողացնելով ջահերո՛վ,

Արքայական հանդէսներուն վայրա՛գ, վէ՛ս,
Կը պարէի՛ն Աստուածներո՛ւ պարին պէս...
Երգէ՛ մեզի հի՛ն օրերու հին յուշեր,

Մենք դարաւոր մեր Մահացումն այս գիշեր
Գիտի պարե՛նք, եղեռնօրէն շէ՛ն, խելա՛ռ...
Քերթողը, ծե՛ր, չըխօսեցաւ... Ան կուլա՛ր...

Լոզան, 1 Յունուար 1909

ԶՀԱՍԿՑՈՒԱԾՆԵՐԸ

Հ ա յ ը ը

«Հայր մեր որ յերկինս...»

Աստանդական մ'ալեհեր, ցուրտ գիշերով,
բուք-բորան,
Մթին փողոց մը, քարի նստարանի մը վրան,
Իրեն խաբխուլ կողին վրայ ընկողմանած էր
արթուն,
Երբ ապաստան փնտռեց հոն նիհար տըղայ մը
անտուն:

Խաւարին մէջ նայուածքներն իրա՛ր զարկին,
շաչեցան...:
Մերը հեռու քաշկռտեց հիւանդ մարմինն իր
անձա՛յն.
Ճանչցե՛ր էր. բայց չի կրցաւ ըսել՝ «Որդեակ
մոլորուն,
Զաւա՛կս ես զոր լքեցի անօթութեանս
օրերուն...»:

Թշուառութեան հիւրընկալ նստարանին վրայ
քարի,
Կեանքի խաւար գիշերով, Մարդն ու Աստուածը
բարի,
Պատահարար, կող կողի, երբոր գիրար տեսնային,

Եհովան իր լուսեղէն պըսակին մէջ երկնային
Զէ՞ր ամչնար ըսելու թշուա՛ռ, անտէ՛ր, խե՛ղճ
Մարդուն.
«Ես եմ քու Հայր Արարիչդ, ամենակալ,
մշտաբթուն...»:

Լոզան, 25 Փետր. 1909

Վերջին արքայն

Հոլա՛, ո՛վ կայ...: Հոգի մը չի՞ տրոփեր...:
Ո՛չ մեկ շունչ:
Ու Առիւծն իր առջեւի մէկ թաթին վրայ
անմըռունչ
Արձանացած՝ կը թարթէ իր մութ նայուածքը
հեռո՛ւն.
Արշալոյսի առաջին արիւնոտող գիծերուն:

Արիւնոտո՛ղ...: Բայց Առիւծն այնքա՛ն տխուր է
ու մունջ:
Կարո՞ն ունի թռչնիկի հովուերգութեանց
քաղցրահունչ,
Կամ միամիտ, մտերիմ եղնիկներու խաղերուն...:

Ամայութիւնն է իր շուրջ, իր մէջ Ջանձրո՛յթն
անհուն:

Ո՞ւր, ո՞ւր են հին ատեններն, ուր ան կ'իշխէր
անողորմ:
Մա՛րդը, խոնարհ ու գաճաճ, արշաւե՛ր է ամէն
կողմ:
Թոքախտաւոր առիւծներն հարցո՛ւր երկաթ-
վանդակին...:

Այսպէ՛ս, առառ՛ուն, քարացած, ան կ՚երազէ
ախտագին,
Ամայութեան մէջ բանտուած, Աստուծոյ մը
պէս ինկած...:
- Առի՛ւծ-Արքայ, գնդակ մ՚ալ քե՛զ կը փրկէ
անկասկած...:

Լ.օզան, 28 Փետր. 1909

Պիտի մեռնի

Ճի՛չ, ճի՛չ մըն ալ...: Անօգո՛ւտ: Փոթորկին մէջ
աչունի,
Անծի՛ր ծովուն վրայ գորշ, դէպի ափե՛րն
Հայրենի,
Միծառներուն կը սուրայ լո՛ւռ կարաւանը
փութով:
Իրենց վերջինն, ուժասպառ, կը փորձէ ճի՛չ մ՚ալ
թոթով...:

Պիտի մեռնի: Ան գիտէ: Բայց մո՛ւթ հոգին
թռչունի,
Անմահութեան գո՛նէ այն ճարտար հաւատքն
ալ չունի,
Որ կը շոյէ մեր վերջին ժամերն Յոյսով ու
Սուտով...:
Միա՛յն գիտէ թե աչքերն խաւարելու են
շուտով:

Որովհետեւ մռնչող գորշ ծովուն վրայ
անյատակ,
Ի՛նչ դիակներ տեսաւ ան՝ ուխտի ճամբուն
նահատակ...:
Հեռո՞ւն. ո՛չ գիծ մը տարտամ:
Հեռո՞ւն. ո՛չ կայմ մը նիհար:

Մեռնի՞լ. ո՛չ, ո՛չ: Դե՛ռ թռչիլ կը փորձէ ան
տենդահար...:
- Ինկի՛ր, ինկի՛ր, խե՛ղճ թռչուն, ծովերու մէջ թէ
ծաղկանց,

Պահ մը առաջ, պահ մը ուշ, Մահը նոյն Մահն է
անա՜նց...:

Լ.օզան, 1 Մարտ 1909

Ի ժ Ը

Ինչպէս Ամօթն, ինչպէս Մեղքն, ինչպէս
Դժոխքը, տեսե՛ք,
Ան կը ննջէ: Զազրելի՛, գարշատեսի՛լ, անշա՛րժ,
սէ՛գ,
Անգիտակից անմեղի իր քունը խո՜ր կը ննջէ...:
Մենէ որո՞ւն համար քունն սփոփիչ,
կարճ Մահ մը չէ...:

Ո՛վ նորածին իժի ձագ: Քնացի՛ր, կո՛ղբդ
հրաշէկ
Երա՜զօրէն փրուէ տաք աւազուտին վրայ շէկ.
Եթե հեռուէ հեռու մեղմ ջուրը տարփոտ
կարկաչէ,
Քու գետնաքարշ մարմինիդ հովուերգութեանն
համար չէ՛:

Դուն հո՛ղ պիտի ճաշակես, ու դուն պիտի
Մա՛հ ըմպես,
Պիտի շնչես ժայռերու թաքուն ճեղքին մէջ
անտես,
Անիծելով արգաւանդ արգանդը որ քեզ
ծընաւ...:

Չէ՛, չի պիտի թողում որ ապրի՛ս: Հարուած
մը...: Մեռա՛ւ:
Ա՛խ, հողակե՛ր, նզովուա՛ծ, սողո՛ւն որդւոցը
մարդկան,
Փրկարար մեծ հարուածն ո՛վ պիտի շնորհէր
վերջնական...:

Լ.օզան, [1909]

Զղջիկը

Քու սուգը՝ ո՞վ պիտի լայ, Զղջի՛կ, դագիր ու
մութ քո՛ւյր:
Ահա իջնող մութին մէջ կը խարխափի վագրը՝
կո՛յր,
Ո՞ւր, Զղջիկ քո՛յր: Ինչո՞ւ լուռ կը հեռանաս
երդիքէս,
Ո՞ր թարշամած վարդն յետին պիտի հաճի՛
ժպտիլ քեզ...:

Եւ ո՞ր սարեակը պահուած թաւուտին մէջ
հեշտաբոյր,
Քեզ դայլայլովն իր հրաւէ՛ր պիտի երգէ ի
համբոյր...:
Դուն ի՞նչ ունիս. ո՛չ փետուր, ո՛չ իսկ ձայնիկ
մ՚որ երգես,
Ո՛չ իսկ լոյս մը մտերմիկ՝ փոսուռայի բոցին պէս:

Մերկ թեւերը՝ որ հէգ կո՛ղը՝ կը ծեծէ
անընդհատ,
Քնած կեանքը թունելու շարժումն ունին
յուսահատ,
Ու միջոցին մէջ Անէծք ցանելու տե՛նդը անշէջ:

Եղո՛ւկ. դուն չե՛ս սաւառնիր. կը տապալի՛ս
մութին մէջ:
Դարձի՛ր, դարձի՛ր, Զղջիկ քոյր, եկուր անխօս
ու հլու,
Երդիքի՛ս մէջ, հոգւո՛յս մէջ, Սեւ Նղովքը՝
խոկալու...:

Լ.օզան, [1909]

ԻՐԵ՛ՆՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Տեսի՞լք մըն էր այդ, թէ ճշգրիտ պատկեր...
Մոխրապատ դաշտի մէջ անթիւ ոսկրեր
Կը բարձրանային՝ դարերով դիզուած
Նըզովքի բուրգի մը պէս՝ դէպ Աստուած:

Պատմութի՞ւնն իրենց: Ո՛չ ոք չէր գիտեր
Թէ կըմախացած այդ ազգը անտէր
Անդըրհեղեղեան ո՞ր դիւցազներէն,
Ո՞ր կիկլոպներէն կեանք տուաւ իրե՛ն:

Ո՛չ ոք չէր գիտեր թէ բուռ մը փոքրիկ
Այդ հերոսներու հին ցեղը ռազմիկ
Ո՞ր ակէն խըմեր էր թոյնն ըսկըզբան
Կարմիր մոլուցքի թոյնը ազդասպան:

Հազար խարոյկներ մարած ցիրուցան
Ըսին ինձ՝ «Հազա՛ր տարի կռուեցան,
Կռուեցան Ուժին դէմ, Ամէնուն դէմ,
Կռուեցան Կռուին դէմ ու Իրենց դէմ...

Պատմութի՞ւնն իրենց: Մոխրապատ վանքեր,
Աւերներ ճերմակ, ջախջախուած գանկեր,
Ոսկրէ անապատ, լըռութիւն ու սուգ:
Պատմութի՞ւնն իրենց՝ արի՛ւն, արտասո՛ւք»:

Ու ես գոչեցի. «Կեա՛նք առէք, գանկե՛ր»:
Ոսկոր ոսկորի միացան ընկեր,
Կըմախքներն յանկարծ ստացան մարմին
Հրաշքով կանգնեցան իւրաքանչիւր մին:

Բայց հազիւ կեանքի վերըստացան շունչ
Այդ հազարդարեան ոսկրերն անշըշունջ
Սկսան իրար պատառել դըժխեմ,
Ամէնքն իրար հետ, զաւակը հօր դէմ...

Երբ քիչ վերջ բոլորն ալ ինկան արդէն.
Խոր հառաչանքով հըծծեցի՝ «Մարդ են...»

Բայց մի ծերունի՝ իրենց վրրայէն
Կոխոտեց անցաւ ու լացաւ «Հայ են...»:

Նամբերի, 9 Օգոստոս 1910

ԱՀԱՋԱՆԳՆԵՐԸ

Արիւնի գիծե՛ր, պատկերնե՛ր, յուշե՛ր...
Նորէն այս գիշեր, - տանջանքի գիշեր, -
Հիւանդ հոգիս պատերուն մեջէն
Ղողանջի խաւար երգեր կը հնչեն:

Ահազանգներն են, ու իրենց վայրի
Ու ահեղ ու մութ լալիւնն արոյրի
Որ եղե՛ռնօրէն, մահագո՛ւժօրէն,
Տենդոտ գանկիս տակ կը զոռան նորէն:

Ղողանջը... Ողբի, ազեխարշ լալու,
Ծիլի, անե՛ծքի — վայրագ ալէլու —
Ու հառաչներու մեջէն խելայեղ
Սարսափի անհո՛ւն զողանջն է ահեղ:

Դիածածկ կարմի՛ր, կարմի՛ր դաշտերէն,
Դուք չէ՞ք իմանար դաւաճանօրէ՛ն
Մեզմով յափրացած շան վոհմակներու
Վերջալոյսին դէմ ոռնումն ահարկու...:

Ու չէ՞ք տեսներ, ա՜խ, հեռուէ հեռու
Հրդեհով կարմիր հորիզոններու
Վրրայ տիրաբա՛ր ու աստուածարա՛ր
Իշխող գմբեթնե՛րը մահաբարբառ:

Կարմիր կը տեսնեն աչքերդս նորէն...
Վերջին հառաչներ կուրծքերու խորէն.
Մեռե՛լ, հոգեվա՛րք, կոյտ-կոյտ, քով-քովի
Կոկռացող սեւ խումբեր ագռաւի...:

Ահազանգներն են, կ'ունկնդրեմ տրտում.
Ահազանգնե՛րը, անբա՛ւ, անպատո՛ւմ,

Որ հիւանդ հոգւոյս պատերուն մէջէն
Նորէն այս գիշեր կ'ուռին, կը հնչէն...:

Բերա, 25 Օգոստոս 1908

ԿԻԼԻԿԵԱՆ ԵՐԳԵՐ

I. Վրեժին սերմնացանը

Քե՛զ, ցասումի՛ վայրագ հեղեղ գահավէժ,
Արդարութեան փայփայելի մո՛ւթ հըրէշ,
Խաւարներու ահե՛ղ ծընունդբդ, վըրե՛ժ,
Ողջո՛յն, տաղե՛ըս քեզի...

Մոխրին կուտամ սրտիս վէրքերն ախտագին...
Ամէնո՛ւն վէրքն, անսահմա՛ն վէրքը ազգին,
Արդարութեան ծարա՛ւը, մահն հաւատքին,
Երգեն տաղե՛ըս քեզի...

Սանձերնին լա՛յն երիվարներ ասպազէն,
Ալիք-ալիք թոթուելով սեգ բաշն ուսէն,
Թող հայրէնի աշխարհիս կուրծքն ակօսե՛ն,
Սուրան տաղերս քեզի...

Ու ես կուգա՛մ, - մո՛ւթ շանթերու սերմնացան —
Այդ ակօսէն, ուր արիւններ լըճացա՛ն,
Գիշերներով, չար հովերով, ցիրուցա՛ն,
Ցանել տաղե՛ըս քեզի...

Բաբէ՛. եթէ այս իմ բազուկս կարեվէ՛ր
Զը սորվեցաւ զարնել... Գոնե անվեհե՛ր
Ցանքիս, մահու առաքեալնե՛ր, հսկանե՛ր
Կը ծնին տաղերըս քեզի...

II. Հայու որբիկ

Ա՛յ Հայու որբիկ, ա՛յ անտէր որբիկ,
Մանրի՛կ, արիւնոտ ոտքերդդ բոպիկ,
Ո՞ւր կը քաշկըրտես այսպէս մոլորուն...
- Զար քամիներուն...

Ա՛յ որբիկ, բոցեր գիւղերը հասան,
Անտառներու մէջ մայրերնիդ կ'որսան:
Անպաշտպա՛ն ու մերկ, ո՞ւր այսպէս, որբի՛կ ճան...
- Մո՛ւթն ինձ պատմուճան...

Քեզ համար մարդերը գո՛ւթ, հա՛ց չունին,
Ա՛յ որբիկ, չի՛ւղ իսկ չիկայ թրջունին.
Ծերեր սովահար կ'իյնան ժամէ ժամ...
- Արիւն կ'որոճամ...

Հայրդդ պատրաստուա՛ծ նետեր են սարին.
Եղնիկներու պէս քոյրերդդ տարին.
Աստուա՛ծդ իսկ մատրան մէ՛ջն է խողխողուած...
- Վրե՛ժն ինձ Աստուած...:

Դե՛հ, գընա՛ մնծցի՛ր ահեղ, ո՛ըն Հայուն.
Սընիր արիւնով ու փըսխէ արիւն
Մարդկութեան ճակտին ո՛ւ սարսափ ո՛ւ հուր...
- Այդ՝ պարտքս է տըխուր ...:

III. Վերջին օրօր

Օրո՛ր, օրո՛ր...: Օրո՛ր ըսեմ քընանաս,
Վիրաւոր հո՛ղդդ ճիչերն ա՛լ չիմանաս:
Ծիծէս ծրծա՛ծդդ թոյն է, կաթ չի գիտնաս...
Օրոր ըսեմ քընանաս:

Արի՛ւն-հեղեղ յորդեց այս սուրբ ձորերէ,
Բայց չի փախիս, փարե՛ երկրիդ, զայն սիրէ՛,

Հողիդ վըրայ գերի մ'ըլլա՛ր, այլ տիրէ՛...
Օրո՛ր ըսեմ քընանաս:

Հօրըդ վըրայ եթէ անշո՛ւնչ չինկայ ես.
Զի ուխտեցի Հռովմի է՛գ գայլին պէս,
Նոր Ռոմուլոս մը դիեցնել ըստինքէս...
Օրո՛ր ըսեմ քընանաս:

Բազուկներուս պարա՛ն, ոտքիս ալ կացի՛ն,
Ստինքիս զո՛յգ պըտուկներն, ա՛հ կըտրեցին:
Վէրքէս արիւնս ծըծէ, որդեա՛կ միածին:
Օրո՛ր ըսեմ քընանաս:

Ահա կ'իյնամ... Հայաստանը մա՛յր քեզի:
Կըտակ կուտամ այս կոտրած սուրն երկսայրի՝
Ուր հայրիկիդ դեռ տաք արիւնը կ'այրի...
Օրո՛ր ըսեմ քընանաս:

Լօզան, 6 Յուլիս 1909

ՈՎ ԻՄ ՀԱՅՐԵՆԻՔՍ...

Կիլիկիոյ արիւնի՛ն

Ցայգն ի՛նչ անոյշ է, ցայգը ի՛նչ գինով:
Ցաւերէս տարուած կը քալեմ երկա՛ր
Լեմանի ափին՝ խոր տրտմութիւնով:
Ի՛նչ խաղաղութիւն, ի՛նչ անճառ նըկար,
Ու ցայգն ի՛նչ անոյշ, ցայգը ի՛նչ գինով:

Հեռուէն թեւճակի շառաչներ դողդոջ
Երգը կ'օրօրեն սիրող զոյգերու.
Ջուրին մէջ աստղեր ինկեր են բոզբոջ.
Ու տարփոտ մութին մէջ հեռուէ հեռու
Թեւճակներու թա՛ց համբոյրն է դողդոջ:

Լուսնակն ալ ահա՛ շքեղ կը ծաթի
Առասպելներու լոյս-դշխոյին պէս՝

Ալպեաններու ձի՛ւն-հրաշքէն արծաթի,
Նոր հովուերգութեանց հի՛ն հանդիսատես՝
Տժգոյն տարփաւորն ահա կը ծաթի:

Ի՛նչ անհունութիւն, ի՛նչ երազ,
ի՛նչ շունչ...:
Լռին լեռներու կողէն սատափի
Մինչե՛ւ սխրացած անտառն անշշունջ,
Ու մինչեւ դաշտերն ուր Ռոն կը թափի,
Ի՛նչ անհունութիւն, ի՛նչ երազ,
ի՛նչ շունչ...:

***

Ու դո՛ւն, ո՛վ դժբախտ երկիր հայրենի,
Որ արիւնի տա՛ք շամանդաղի մէջ,
Զոհ՝ գազաններու խաղին վայրենի,
Ու համայնասպա՛ռ բոցերու անշէջ,
Կը մխա՛ս, դժբա՛խտ երկիր հայրենի...:

Ո՛վ իմ հայրենի՛քըս...: Ու դո՛ւք, հեռաւո՛ր,
Եփրատ ու Արաքս ու Վանայ ծովակ,
Ո՞ւր են կարապնե՛ըը սիրախտաւոր
Որ իրենց երա՛զ թեւերով ճերմակ,
Ճեղքէին կարմիր ձեր կո՛ւրծքն ախտաւոր:

Հովուերգութիւններդ ո՞ւր են սխրալի,
Ո՛վ Արարատեան ձիւնափառ հսկան.
Ու դո՛ւն միամիտ Դրախտն առասպելի,
Ինչո՞ւ այսքան մո՛ւթ է քու լուսնկան,
Հովուերգութիւններդ ո՞ւր են սխրալի:

Լեռանոյշ կուսա՛նքըդ Հայաստանի,
Ո՞ւր են ձեր սիրոյ երգերն անհամար
Որ հովը դէմի բլուրը տանի,
Ուր սրինգ մը խեղճ կու լայ ձեզ համար...:
Ո՛վ յաւերժահարսք կոյսք Հայաստանի:

Բաբէ՛: Վայի՛ւններ՝ են որ կը լսեմ,
Հերքերնին ցրուած, փախչող խելայեղ,
Ընդիմադրումի մը պահուն վսեմ,
Պիղծ եաթաղանով ընդկիսուած ահեղ՝
Կոյսերու վայի՛ւնն է որ կը լսեմ...:

«Հո՛ւ, մենք ենք, մեղք ենք,
եղբայրնե՛ր, քոյրե՛ր...:
«Մե՛նք ենք, լափլիզուած բոցերէ անշէջ...
«Մերկ սուսերներով հալածուած կոյրեր...
«Մե՛նք ենք, կը վազենք Մութի՛ն,
Մահուա՛ն մէջ.
«Հո՛ւ, մե՛նք ենք, մե՛րկ ենք,
եղբայրնե՛ր, քոյրե՛ր...:

«Մե՛նք ենք, դիւահար ծնո՛ւնդ արիւնի,
«Հի՛ն, շքե՛ղ ցեղի զաւակներ յետին.
«Բոպիկ երեխա՛յ, դողդոջ ծերունի՛,
«Մե՛նք ենք, ո՛ղջ գանկերն որ կ'իյնան գետին...
«Մե՛նք ենք դիւահար ծնո՛ւնդ արիւնի...:

«Հո՛ւ, նզո՛վք, նզո՛վք: Մեր վերքին
փրփրուն
«Շոգին խաւարէ՛ր ձեր աչքերը, ա՛հ.
«Մեր արիւնը ձեր զաւակաց գլխուն.
«Թո՛յն շնչէիք դուք և ըմպէիք Մա՛հ...
«Հո՛ւ, Նզո՛վք, Նզո՛վք ձեր
սերունդներուն...»:

***

Ցայգն ի՜նչ անոյշ է, ցայգը ի՜նչ գինով:
Երգեցէք սիրոյ համբոյրներ զուարթ,
Ու դուք երգեցէք երանութիւնով,
Դո՜ւք երազ ափեր, ալեակներ լազուարթ,
Ձեր ցայգն ի՜նչ անոյշ, ցայգը ի՜նչ գինով...:

Կը քալե՜մ: Քալէ՜, յիմա՜ր տարագիր,
Ժպիտ մը շուրթիդ՝ կարապի՜ն համար,
Նե՛ր քնապէս լալով՝ միտքդ դէ՜պ երկիր,
Շեղչուած մահերու վրայէն անհամար,
Քալէ՜, դուն քալէ՜, յիմա՜ր տարագիր:

Քնարի զառամած թելի մը փարած,
Թալա՜նէ, բո՛ցէ, հեռո՛ւ, ա՜հ, հեռո՛ւ
Քալէ՜ դուն, քերթող հայրենահալած,
Հո՜ւր, արի՜ւն երգէ ազատ լեռներու,
Քնարի զառամա՜ծ թելի մը փարած...:

Քալէ՜: Մինչեւ ե՞րբ...: Քալէ՜ կուրորէն,
Քալե՜ մինչեւ որ Արեւն հրակէզ
Իր մարը մտնէ նորէն ու նորէն
Ու օր մը այլեւը՜ս չի ծագի քեզ...:
Բաբէ՜...: Կեա՞նքն է այս...:
Քալէ՜ կուրօրէն...:

Լոզան, 4 Մայիս 1909

ՁԱՆԳԱԿՆԵ՛Ր, ՁԱՆԳԱԿՆԵ՛Ր...

Զանգակնե՛ր, բարի՛, բարի՛ զանգակներ,
Ի՞նչ բան կասեցուց ձեր գուժկան լեզուն.
Խօսք ելլել կ'ուզէ արիւնը վազուն...
Կը լռէ՞ք, բարի՛, բարի զանգակներ:

Արդեօ՞ք ձեր միսթիք հագագն արոյրէ,
Ուր կեղե՛ւ կապեց աղօթքի փոշին,
Եւ ուր կ'երազէ՛ր խունկի գոլորշին,
Յեղակարծ ցավէն անզո՛ր, կը լռէ:

Ո՛չ: Ձեր դարաւոր հոգին պղնձի
- Որ, շա՛տ, շա՛տ յաճախ տեսեր է Բարին
Յաղթուած Զարէն - այժմ իր բարբառին
Ու իր Աստուծոյն վրայ կը կասկածի...
Ա՛խ, որովհետեւ տեսա՛ք ձեր բարձրէն,
Հաւատաւորներ հազարով, բիւրով,
Ինկա՛ծ հեթանոս տապարով, բիրով,
Ձեր ոտքերուն տակ, երկիւղածօրէն...:

Ու ձեր գմբէթէն դիտեցեք անձա՛յն,
Թէ ինչպէ՛ս խնկոտ տաճարներու մէջ,
Ո՛րբ, կի՛ն, ծերունի՛, բոցերով անշէջ,
Իրենց Աստուծոյն գահին զոհուեցան:

Բա՛յց...: Գիտէք նաև թե մեր դարաւոր
Դիակներու բուրգն ամպերէն անցա՛ւ.
Ու մեր արիւնին ժահրէն նեխեցաւ
Սրբութիւններու ծո՛յլ գունդն երկնաւոր...:

Արդ, ո՞ւր էք չքնաղ խոստումներ խաչին.
Եղբայրութեան զո՛ւր բարառներ, ո՞ւր էք:
Կրակ կը փսխէ հողն ամէնուրեք...
Գետերն արիւնո՛վ, դիակո՛վ կ'ուռչին...:

Ու կ'իյնայ այն որ կը ծնկէ վախով.
Չի թուրն աւելի արդար է խաչէն,
Չի կեանքն անո՛նց է միայն որ քա՛ջ են,
Անո՛նց որ կ'ապրին ուրիշի մահով...:

Որովհետեւ դեռ հեռո՛ւ է օրն այն
Երբ գայլ ու գառնուկ սիրո՛վ կ'արածին...:
Թէ ապրիլ կ'ուզէ գառն նորածին
Պէտք է իր ակռան սրէ լռելեայն...:

Լո՞ւռ էք, զանգակնե՛ր. Աստուա՛ծն է մեռեր:
Գո՛յժ տուէք Վաղուան. իր հա՛սկը մեռաւ:
Գո՛յժ տուէք Հայուն. զի ա՛ղգը մեռաւ:
Զանգակներ, ծերո՛ւկ, բարի՛ զանգակներ...:

Ինչպէ՛ս կ'ուզէի ձերին պարանին
Կախուիլ ու ցնցել երկա՛թ բազուկով.
Անո՛նք որ ինկան բիւրո՛վ, քովէ քով,
Ձեր զողանջին հետ լալու պէտք ունին...:

Հոգիիս հազա՛ր խուլ զանգակներով,
Գոռացե՛ք, զանգե՛ր, ու կատաղօրէ՛ն
Գահավիժեցէք ձեր երկաթ թառէն,
Ուրկէ միա՛յն լա՛լ գիտցաք դարերով...:

Օ՛, զողանջեցէ՛ք. Աստուա՛ծն է մեռեր...:

Լօզան, 2 Յունիս 1909

ԹՐՈՒՊԱՏՈՒՐՆԵՐԸ

Բանաստեղծ ընկերներուս

Թրուպատուրնե՛րն են, տեսէ՛ք, իրե՛նք են.
Եռանդո՛ւն, անփո՛յթ, գո՛հ կը նուագեն
Հրակէզ արեւուն տակ հրապարակին:
Կիսխուփ փեղկերէ տարեց, տղայ, կին
Կ'երեւան քիչ-քիչ: Կեսօրի տապէն
Շա՛տ քիչերն են որ տեսնել կը չտապեն
Թրուպատուրները:

Տարօրէ՛ն դէմքեր: Ամէ՛նքն, է՛գ, արո՛ւ,
Բախտէն կատաղի հալածուողներու
Անտուն ընտանիք մը քայլամոլոր...
Փողոցի սառ՛յգ հանճարներ բոլոր,
Նուագելու համար պէտք չունին նոթի,
Կ'ապրին երգելով, կը մեռնին նոթի
Թրուպատուրները:

Բախտը, տառապանքն, յարափո՛խ հովեր
Իրենց դէմքին մո՛ւթ ժպիտ մ'են տուեր,
Կեանքը ճանչցողի ալեկո՛ծ ժպիտ:
Ու իրենց բռնի՛ ձեւին մէջ հոպիտ,
Խռիւ մազերնուն ներքեւ ալեւոր,
Աշխարհն հեգնելու հո՛վ մ'ունին ազուոր,
Թրուպատուրները:

Անոնք երգելո՛վ անցան համօրէն
Բոյի գինեզուարճ այգեստաններէն
Մինչեւ Նեղոսի աւազուտը չէկ,
Մինչեւ Ուրալներն, մինչեւ Հըրաշէկ
Ափերը դերբուկ Հրոյ-Երկիրին:
Քանի՛ ընկերներ ճամբան հոգ դրին
Թրուպատուրները:

Մեքենայութեան այս դարը երկա՛թ
Զընկճե՛ց դեռ իրենց հոգին խանդակաթ.

Ու ոտաններու միջեւ դրամապաշտ
Թշուառութեան հետ գլո՛ւխ գլխի հաշտ
Կ՚ապրին նախնական կենցաղով ազատ,
Աղա՛տ բնութեան որբե՛ր ն հարազատ,
Թրուպատուրները:

- Առնք ինձ ձե՛զ հետ, երկիրէ երկիր
Տարէք այս թշուա՛ռ սիրտըս սրգակիր:
Ապրինք հեզնելով, ողբանք երգելով.
Ու երկրագունային հետ մշտահոլով
Մեր մորթն անօգուտ քըշե՛նք մշտերեր,
Մշտնջենական մո՛ւթ ուխտաւորներ,
Թրուպատուրները:

Զի մե՛նք ենք, մե՛նք ենք, բանաստե՛ղծ, պոէտ,
Մե՛նք, պատառոտուն բեհեզով վե՛տ-վե՛տ
Երգի իշխանները՝ ի սպա՛ռ հալածուած,
Մե՛նք, նօթի՛, հպա՛րտ, երբեմնի աստուա՛ծ,
Մե՛նք, չըհասկըցուա՛ծ, մե՛նք եղերակա՛ն,
Մե՛նք, բանաստեղծներ, մե՛նք ենք իրական
Թրուպատուրները:

Մե՛նք՝ որ մեր վէրքէն երգե՛ր կը շինենք,
Մե՛նք, զրկուածնե՛ր, ճակատագրէն նենգ:
Ու մինչ ուրիշներ առատ կը ջամբեն,
Խինդի՛ սեղանէն, մուսային ճամբէն
Մենք կ՚երթանք ստո՛յգ Մահուան անսուա՛ղ.
Մե՛նք, հի՛ն մարդկութեան ո՛ւշ ծընած - սա՛ղ —
Թրուպատուրները:

Բայց ի՛նչ փոյթ, մե՛նք ենք հոգիով հարուստ,
Մե՛րն է ներշնչումն, որ կու գայ վերուստ,
Մե՛րն է մարգը թա՛ց, վերջալոյսն անխո՛ս.
Փթիթը վարդի՛ն, առուն մշտահո՛ս.
Մե՛րն է մթին սի՛ւքը գերեզմանին.
Հի՛ն աստուածներու ցեղին կը նմանին
Թրուպատուրները:

Մե՛նք ենք, որ անփո՛յթ գրչով կը հեգնենք
Այս նե՛նգ աշխարհքին պսակները նե՛նգ:
Քնար մը ձեռքերնիս, անտո՛ւն, մահագի՛ն,
Զե՛նք ցանկար սարո՛ւկ-պետի դղեակին:
Ազատ բարբառի ասպետներ անա՛հ,
Կ'ապրին մեռնելո՛վ, կը մեռնին անմա՛հ
Թրուպատուրները:

Մարդկութեան հոգի՞ս պէտք է անպատճառ:
Մեր սրտե՛ր մենք հաներ ենք վաճառ.
Մեր վիշտէն, սուգէն, խաբուած սէրէն նենգ՝
Ռամիկին համար երգե՛ր կը շինենք:
Ո՞վ ըսաւ «Մահը մի է», ամէ՛ն օր
Կը մեռնինք մե՛նք, հի՛ն տիեզերքին նո՛ր
Թրուպատուրները:

Սակայն մեզ ի՛նչ փոյթ ծիծաղն ամէնուն,
Լքումը ստո՛ր, քաղցը անանո՛ւն.
Մենք՝ գառանց հովուին պէս սիրագորով՝
Հաւա՛տքն ունինք մեր սրինգին ծայրով
Առաջնորդելու Մարդկութիւնն ամբո՛ղջ,
Մեռա՛ծ արուեստին մե՛նք տակաւին ո՛ղջ
Թրուպատուրները:

Այս ի՛նչ դարերու հասեր ենք, Աստուա՛ծ,
Փշրեցի՛ն ի՛նչ որ կար վսեմ կերտուած,
Թէ դեռ սի՛րտ ունիք թաղելո՛ւ տարէք,
Ոսկիին նենգ ձայնն է ամէնուրեք:
Մի՛ միայն մե՛նք ենք որ դեռ անարգել
Սիրե՛լ կ'երազենք, ո՛վ կ'ուզէ սիրե՛լ
Թրուպատուրները:

Մեռա՛ր, հնաւանդ Արուեստ սրբանուէր,
Երբ դեռ կեանքն երգո՛վ կ'ապրէր, կ'օրօրուէ՛ր,
Ու երբ երջանի՛կ, թափառի՛կ, գինո՛վ,
Իրենց ծիրանի լայն կրկնոցներով
Դղեակէ դղեա՛կ, փայտի երկնային
Տաւիղին թրթռո՛ւմը կը տանէին
Թրուպատուրները:

Ես կ'երազեմ հայր թրուպատուրն Հոմեր,
Որ աստուածներու ակէն կը խմէր.
Ու իր հսկաները բարձրաղաղա՜կ
Կ'երգէր տաւղին վրայ, քաղաքէ քաղաք:
Ու թրուպատուրնե՛րը բիւր՝ որ կ'երթա՜ն
Դարերու մեջէն. կ'երազեմ Գողթան
Թրուպատուրները:

Կ'երազե՛մ գիրենք. ու լո՜ւռ, շուարո՜ւն
Կը նայեմ փեղկէս ա՛յս թշուառներուն —
Որ բռնի կերպով կ'երգեն, կը խաղան:
- Վա՜խ, արծաթն Արուեստն հանեց կախաղան,
Հի՜ն, աստուածարբնա՜կ դարերը մեռան.
Ու հիմա պէտք է խնդացնե՜ն, մուրա՜ն
Թրուպատուրները:

Հրատապ արեւուն տակ հրապարակին,
Ահա՛ կ'երգեն դեռ, ու մինչ տղա՛յ, կի՛ն,
Կը հասնին քիչ-քիչ նեղ ճամբաներէ,
Գլխարկն անցորդին լո՜ւռ կը կարկառէ
Իրենց նահապետ երգիչն ալեւոր:
- Տուէ՛ք, իրե՛նք են, Նոր Մարդկութեան Նո՛ր
Թրուպատուրները:

Լոզան, 18 Օգոստ. 1910

ՎԵՐՋԻՆ ՀԱՅԵՐԸ

«Եարիճա՜ն, հա՜յ, հո՛յ, հա՜յ, Աստուած չիկայ,
«Եարիճա՜ն, հա՜յ, հէ՛յ, Հայութիւն չիկայ.
«Հեռու եարերուն սրտիկը խօսի...»:
Շրջանակ կազմած, բոլորն ուս ուսի՛,
Հա՜յ, հէ՛յ, սիրտ սրտի կը պարեն, կ'երգե՛ն,
Մերունի՛, տղա՛յ, հա՜յ, հէ՛յ, իրենք են,
Պանդո՛ւխտ Հայերը...:

Ո՛չ մարդ, ո՛չ բանուոր, հասարակ գրա՜ստ,
Կը ճաճեն մարմինն, ու մուճակնին հաստ
Կը ծեծէ օտար երկրին հողը տար:
«Ափ մը հայրենի հող ո՞վ պիտի տար,
«Հա՜յ, հո՛յ, Հայաստա՜ն, քու հողդ է հալա՛լ...»:
Կ'երգեն պարելով, բայց կ'ուզէին լա՛լ
Թշուա՛ռ Հայերը...:

Հարս ունինք, մեզի հարսնեւոր չիկայ...:
Սուգ ունինք, մեզի սգաւոր չիկայ...:
Ո՛ր մեղքին համար, ո՞վ է անիծեր
Հինգ հազար տարուան այս խե՛ղճ ազգը ծեր...:
Զո՛րս միլիոնին մէ՛կ ապաստան չիկայ,
«Եարիճան, հայ կայ՝ Հայութիւն չիկայ...:
Կ'երգեն Հայերը...:

Թագն առին, դագաղ մը տուին հայուն.
Մեր փառքն անցաւոր, մեր Մա՛հն է կայուն...:
Արշա՛կ մեծ, որու բանակն ահագին
Տէգով կը ծածկէր փառքը արեգին՝
Ռոնակոխ կորած գերեզմանէդ դուն
Գլո՛ւխդ վերցնէիր, տեսնէի՛ր անտուն,
Անտէ՛ր Հայերը...:

Հայրենի՛ք, ո՞ւր են ազգիդ ախոյեան...
Անմահ Պապիլոն լռեց յաւիտեա՜ն...
Աթէնքէն՝ աւե՛ր, Մեմփիսէն՝ աւազ,
Հռոմէն՝ ափ մ'ա՛ճի՛ւն մնաց հազիւհազ...

«Մահերու վրայ Դուն դեռ կ'իշխես, ազէ՛,
Բայց քու հոգեվարքդ որքա՛ն դանդաղ է...»
Կու լա՛ն Հայերը...:

Եարիճա՛ն, հա՛յ, հո՛յ, կ'երգեն միաչունչ:
Պարագլուխն է ծե՛ր պանդուխտ մ'անշշունջ.
Քանինե՛ր այսպէս պարել է տուեր,
Քանի՛ տարի է, քանինե՛ր մեռեր...
Յոգնե՛ր է ալ, վա՛ղն իր կարգն է դուցէ...
Մեր կինը հոն չէ, որ աչքը գոցէ...
Ա՛խ, խեղճ Հայերը...:

Պանդուխտի նկուղ-սրճարան մ'է ցա՛ծ.
Կաղանդ գիշերով Հայերն են լեցուա՛ծ.
Փայտի այդ երկար տախտերուն վրայ ծեր
Իրենցմէ քանի՛ն է ծներ, մեծցե՛ր...
Ու հիմա, հա՛յ, հո՛յ, կը պարեն, կ'երգեն...
Օտարն արցունքով կը նայի փեղկէն,
Կ'ըսէ՝ «Հայե՛ր...»:

Օտա՛ր, տեսա՛ր դուն գաղտնիքով լեցո՛ւն
Ու տար աշխարհի բոյրերո՛վ օծուն
Նաւե՛ր հսկայ, սեւ նաւերը մեծ,
Ու հազա՛ր, հազա՛ր, հազա՛ր դառնահեծ
Հոգւով ծանրածանր, կը կտրէին ծո՛վ,
Թափելու ափե՛ ափ, լո՛ւռ թախիծով
Փախչող Հայերը:

Տեսա՞ր դուն մեռած գիւղերն անխռով,
Հիւղերը փլած՝ կարմի՛ր պատերով,
Հողմաղացքներ լո՛ւռ, թեւերով կոտրած,
Մերուկ դիակներ սարին վրայ կորա՛ծ,
Մատուռներնին աւե՛ր, զրկուած խունկէ...
Ա՛խ, հո՛ն է, հո՛ն, մեր հայրենիքն, հոնկէ՝
Կու գան Հայերը...:

Օտա՛ր, տեսա՞ր դուն աղբիւրները զո՛վ,
Գեղջուկ այգիները գա՛ղջ ողկոյզով...:

Դեռ կը մխա՞յ ցած տանիքն Հայրենի,
Դեռ կը ծաղկի՞ հոն թուփը վարդենի,
Դեռ կ՚երգե՞ այդ հին պլպուլը ցայգին...:
Հո՛ն, հո՛ն կ՚երազեն, կուլան տրխրագին
Աքսո՛ր Հայերը...:

Ա՛խ, ո՞ւր է հովիւին սրինգը բարի,
Ո՞ւր են տուն-տանի՛ք, օճա՛խ խանդակաթ...
Հո՛ս ամէն ինչ քա՛ր է, ածո՛ւխ, երկաթ...
Ըսէ՛ք մեր երկրի տանուտէր Հայուն
Որ ծո՛ւխ կը շնչեն, կը թքնեն արի՛ւն
Պանդուխտ Հայերը...

Այս զրահապատ երկրին մէջ օտար,
Խեղճ Հայ ջահելին ով, ով պիտի տար,
Աւօտն Հայկական, սիւքը Մասիսի,
Դարապատում մո՛ւթ բարբառն Արաքսի,
Ու թուփերու մէջ իրիկուան պահուն
Նազելի համբոյրն երկչոտ հայուհի՛ին...
Ա՛խ, խեղճ Հայերը...:

Անոնց կարաւա՛ն է երկրի դօտին՝
Արարատէն մինչ Այրեցեալ-Գոտին...
Նեղոսէն Հոնոս, Գանգեսէն Վոսփոր
Կաղմեր են սուգի մի հսկայ թափօր...
Ուրալէն մինչ Ալփ, ու մինչ Ափրիկէ,
Իրե՛նք, իրե՛նք են... Թող Աստուա՛ծ փրկէ
Անտէ՛ր Հայերը...:

Մի՛ դըպիր անոնց հոգւոյն փրլուցո՛ւն.
Անոնք կ՚անցնին լո՛ւռ գաղտնիքով լեցո՛ւն,
Անոնք գիտեն բի՛ւր պատմութիւններ մութ,
Անո՛նց որ կորան արեան մէջ տրզմո՛ւտ,
Կախաղաններու քաջե՛ր համօրէն...:
- Հազար մահով ծանր՝ Կենդանի-Մա՛հն են
Ապրող Հայերը...:

Եարիճա՜ն, հա՜յ, հո՜յ... Սակա՛յն ծերունի
Պանդուխտն յոգներ է. վա՛ղը պիտ՝ մեռնի...
Որդին երկիր է դրկեր կռուելու.
Վաղն ա՛ն ալ պիտի խողխողուի, հլո՜ւ...
Ու, վա՜խ, մի՛ առ մի այսպէ՞ս պիտ կորչին
Դիւցազուններու ցեղի մը վերջի՜ն,
Վերջի՜ն Հայերը...:

Ո՛չ, ո՛չ: Արշալոյսն իրենց պիտի գա՛յ...
Ու եթե՛ չի գայ աւօտն ապագայ
Պիտ՝ կռուին: Մինչ ե՞րբ... Մինչև յաւիտեա՜ն:
Ու երբ դեռ երկրի վրայ Ազատութեան
Համար մեռնին ա՜փ մը մարդեր չընչի՜ն,
Անոնք պիտ՝ ըլլան Մարդկութեան վերջի՜ն,
Վերջին Հայերը...:

ՀԱՑԱՍՏԱՆ

Ո՞վ կուլայ այսպէս խրշտեակիս շեմքին.
- Քո՜յր, զարի՜պն է, բաց...:

Կմախքնե՞ր կ'անցնին դուրսէն լալագին.
- Սո՜վն է, դուռըդ բա՜ց...:

Տապա՞ռն է ջախջախ դրանըս կուրծքին.
- Ջա՜րդն է, դուռըդ բաց...:

[1909]

ԻՆՉՊԻ

Ինչո՞ւ, ինչո՞ւ գիս սիրեցիր,
Փոքրի՛կ աղջիկ, քեզի մե՛ղք էր.
Փոքրիկ ծոցիդ թիթե՛ռ պէտք էր,
Դուն ծե՛ր արծիւ մը բանտեցիր...:

Կապոյտ աչուիդ երբոր բացիր,
Կապո՛յտ աղջիկ՝ պլպուլն երգէ՛ր.
Քե՛զ ալ սիրոյ մրմունջ պէտք էր,
Դուն գուժկան մռո՛ւնչըս ընտրեցիր...:

Ես կ'երթամ մի՛շտ, անծայրածի՛ր,
Դամբաններ են ոտքիս հետքե՛ր.
Քեզ սիրոյ մեղմ սի՛ւք մը պէտք էր,
Դուն փոթորկի՛ն կուրծքդդ բացիր...

Կ'այրի՛ն աչերդդ սեւածիր,
Պիտի մեռնիս, այդպէս մ'երգե՛ր.
Քեզի փոքրիկ սէր մը պէտք էր,
Դուն Սէ՛ր-Աստուածը սիրեցիր...

[1911]

ԵՐԹԱ՛Լ...

Երթա՛յ, երթա՛լ, երթա՛լ անձայն, անհանդէս.
Երթա՛լ առուի՛ն պէս՝ մարգերու տակ անտես.
Կապոյտին մէջ՝ հե՛զ, հողմավար ամպին պէս...:

Երթա՛լ՝ առա՛նց գիտնալու թե դէպի ո՞ւր,
Երթա՛լ՝ հեռո՛ւ ոստաններէն այս տխուր.
Երթա՛լ՝ խաւար գիշերին մէջ թաքթաքուր...:

Երթա՛լ, երթա՛լ, երթա՛լ առանց ճրագի.
Երթա՛լ՝ առա՛նց սուգի, լացի, փափաքի.
Երթա՛լ՝ առա՛նց սովի, առա՛նց պապակի...:

Երթա՛լ՝ մարդոց կոյտին մէջէն լռելեայն.
Օտար մընալ իրենց Ցաւին, Գիտութեան.
Երթա՛լ տրգէ՛տ, խո՛ւլ, համբը, կո՛յր յաւիտեան...:

Զը գիտնա՛լ որ հոս Իտեալը չի կա՛յ...:
Ուխտագընա՛ց երթալ ափերն հեռակայ,
Դէպի ուղին երջանկութեան մշտակայ...:

Աննիւթանա՛լ, անրջանա՛լ, վրսեմ, վէ՛ս,
Երթալ անցա՛յգ, անա՛յգ երթա՛լ վերջապէս.
Աչքերը դոց՝ ցայգաշրջիկ խեղճին պէս...:

Երթա՛լ, երթա՛լ, չը ճանչնալ Մա՛րդ ու Աստուա՛ծ,
Զո՛յգ երթալ՝ ձեռքդ քո՛յր ձեռքի մէջ դրրած
Անրջանքի՛ն ու Սիրոյն պէս - Աքսորուա՛ծ...:

Լ.օզան, 13 Նոյեմբեր 1910

ԱՅԼԱՍԵՐՈՒՄ

Կա՞յ աւելի սիրտ բզկտող իրականութիւն մը, քան մելամաղձոտ մանուկները...:

Տղու մը պարզ ու վճիտ հոգին ինչպէ՞ս կրնայ տխուր ըլլալ, քանի որ յուսահատութիւնը խիստ բարդ հոգեբանութիւն մը կ'ենթադրէ:

Բնական երեւոյթ մը չէ այս, այլ ախտաբանական ծնունդ մը, օրէնքէն դուրս շեղում մը, բացառութիւն մը: Խոստովանինք սակայն որ այս բացառութիւնները հետզհետէ օրենքի կարգ անցնելու վրայ են:

Նոր քաղաքակրթութեան մեծագոյն վերքերէն մէկն է այս այլասերումը, վաղուան հիւանդութիւնը, հիւանդութիւններուն յոռեգոյնը՝ որովհետեւ ո՛չ մէկ բժշկութիւն պիտի կրնայ զայն դարմանել: Իր մանրէն երբեք պիտի չգտնուի:

Հին ցեղեր խարոյկներու վրայ կ'այրէին իրենց լուսնոտներն ու ջլագարները՝ իբրեւ չար ոգիներ: Պղատոն իր իտեալ հանրապետութենէն կը վանէր մելամաղձոտները: Սպարտացիներ իրենց տխուր ծնունդները գետը կը նետէին՝ առոյգ ու զուարթ մանուկներ միայն ընտրելով ցեղին պահպանումին համար. ահա ա՛յս կերպով այդ ափ մը փոքրիկ ազգը պատմական դիւցազուններու մեծագոյն ազգը եղաւ:

Այսօր այդ բարբարոս միջոցները ի սպառ հեռացուած են քաղաքակրթութեան սահմանագլուխներէն. բայց այլասերումի վտանգը երթալով անկարելի համեմատութիւններ կը ստանայ:

Այս երկաթէ դարին համար երկաթէ ուղեղներ են պէտք:

Մինչդեռ, օրը օրին, հեւ ի հեւ, ճգնաժամային ու գինեմոլ գործունէութեան մը մտրակին տակ

հալածուող մարդկութիւնը ջլագար ծնունդներ միայն կու տայ:

Ալեկոծ Եւրոպան շատոնց ի վեր կը հնչեցնէ ահազանգը:

Օրէ օր նոր սկզբունքներ կը կիրարկուին, առողջապահիկ խիստ միջոցներ կը հետապնդուին. ախտածին մանուկներու համար լեռնային գաղթավայրեր կը հաստատուին, ու անտառային դասարաններ, ու բացօթեայ վարժարաններ, ու աշակերտական ագարակներ:

Այս բոլոր ճիգերուն նպատակն է այդ այլասերած մանուկներուն ուսմունքէ աւելի արեւ տալ, միտքէն աւելի մարմինն աշխատցընել, զիրենք կղզիացնել, չեզոքացնել, հեռացնել մտաւորական ասպարէզէն: Որովհետեւ վտանգը միայն անհատական չէ, այլեւ ընկերական: Իրենց հիւանդագին ու չարչրկուած ուղեղը գիտութենէն միայն թոյն կը ծծէ ու թոյն կ'արտածորէ: Իրենց մաղձոտ հոգին կը դառնացնէ նախ իրենց սեփական կեանքը, յետոյ իրեններուն կեանքը, ու յետոյ - ամբողջ ցեղի մը կեանքը:

Աշխարհիս բոլոր մարդասաններն ու բոլոր չարագործները ձեռք ձեռքի տուած՝ պիտի չկրնային այնքա՜ն երիտասարդ, այնքա՜ն խոստմնալի, այնքա՜ն ընտրուած հոգիներ սպաննել քան Շոփէնհաուէր մը, Նիցշէ մը, Պայրըն մը...:

Այլասերած մանուկներու օրօրոցներուն մէջ պէտք է փնտռել անձնասպանութեան քարոզիչները, յոռետեսութեան առաքեալները, ապականութեան մարգարէները:

Անոնք կը ջլատեն գործունեութեան ամէն տենչ, երջանկութեան ամէն յոյս, սրբութեան ամէն հաւատք:

Անոնք չեն յառաջադիմեր այլ կ'ոստնուն, չեն երազեր այլ կը զառանցեն, չեն օրհներ այլ կը նզովեն, չեն սիրեր այլ կը տոփան:

Իրենց երգը հայհոյանքի մը պէս ամբարտաւան է, իրենց ժպիտը հեգնութեան մը պէս վիրաւորիչ:

Օրինա՞կ կ'ուզէք: Բայց ամէ՛ն ազգերէ աւելի Հա՛յ մտաւորականութիւնը կը վխտայ այս բացասական հանճարներով:

Գիտեմ որ հին մշակոյթ ունեցող ցեղերու համար այլասերումը տիեզերական օրէնք մըն է: Գիտեմ որ մեզ նմանող հին ու անտէրունջ ցեղ մը՝ ինչպէս են Հրեաները՝ նոր ազգերէն քառապատիկ աւելի խենթ կը ծնցնէ: Սակայն այդ ափ մը Հրեայ ցեղը ավելի բազմաթիւ հանճարներ տուաւ աշխարհին՝ քան ամբողջ եւրոպական ազգերը՝ ձեռք ձեռքի տուած...:

Մենք ալ իրենց պէս ինչո՞ւ չկարենայինք տալ միակ Հայ հանճար մը որուն գոյութիւնով սա խրոխտ Եւրոպան հպարտանար, եւ համայն մարդկութիւնը բանո՛վ մը գոնէ պարտական ու երախտագէտ ըլլար մեզի:

Կէս-հանճարներ չա՛տ: Բայց երբ փոքրիկ ցեղի մը մտաւորական բանակը տաղանդաւոր փոքրիկ վիժուկներով միայն կը լենայ՝ անհանդուրժելի, գայթակղեցուցիչ, դատապարտուած ցեղ մը կ'ըլլայ այն:

Զգո՛յշ, զգո՛յշ:

Եթէ Եւրոպան է որ կը հնչեցնէ այլասերումի ահազանգը, մի՛ մոռնաք որ այդ սարսափելի ախտը ամէնէն առաջ մե՛ր ցեղին կը սպառնայ՝ իբրեւ հին ցեղի մը:

Ու մենք՝ փոխանակ արմատախիլ ընելու, տգիտո՛ւթեն կ'ընտրենք է՛ն ախտաւարակ ծիլերը ու զիրե՛նք միայն կը մշակենք:

Այն բոլոր առոյգ, պայքարող, զուարթ ու աչքաբաց երիտասարդութիւնը որ կը լեցնէ մեր վարժարանները, կ'առնենք օր առաջ գործի տալու համար...: Իսկ այն քանի մը ճղճիմ, տժգոյն ու տխուր տղաքները, այն պատանի ծերունիները որ արեւէն ու պայքարէն խուսափելով՝ դպրոցի մութ անկիւններուն մէջ թուղթ կը մրոտեն, անոնք դպրոցէ դպրոց, երկիրէ երկիր, համալսարանէ համալսարան կը ղրկենք:

Խեղճե՜ր...: Անո՜նք կը լեցնեն պանդուխտ ուսանողի գերեզմանները, անոնք կը լեցնեն հարուստի նախասենեակները ու վաճառականի դրասենեակները. հիւանդանոցի խշտեակները անո՜նք կը լեցնեն...:

Ու կը պատահի մէզ ա՛յն ինչ որ ո՛չ մէկ քաղաքակիրթ ազգի չէ պատահած: Մեր գիւղացի ու շուկայի դասակարգը աւելի՛ մտացի է քան ա՛յն որ մտաւորական կը կոչուի. ընթերցողը աւելի ողջամիտ է քան գրողը. առաջնորդուողը աւելի հեռատես է քան առաջնորդողը. ուրիշ խօսքով՝ մարմինը աւելի խելացի է քան ուղեղը...:

Զարմանալի չէ ուրեմն որ ընթերցողները մեր մէջ հետզհետէ կը քիչնան: Այսօր արդեն աւելի գրող կայ, քան կարդացող:

Բնախօսական օրէ՛նք մ'է որ մարմինը իր մեջէն քիչ-քիչ կը չեզոքացնէ, կ'անջատէ, կը վտարէ այլասերած մասերը:

Նոյն օրենքո՛վ միայն կարելի է բացատրել թե ինչո՞ւ մեր մտաւորականութեան ու մեր հասարակութեան միջեւ գտնուող կապը քիչ-քիչ կը բարակնայ: Ցեղը կը մնայ առաւել քան երբեք առո՛ղջը, ու իր մէջէն կը չեզոքանցէ, կ'անջատէ, կը վտարէ օտարացած ու այլասերած տարրերը: Գլուխը մարմնին կապող նիհար պարանոցը երթալով կը բարակնայ: Ու հեռու չէ դուցէ այն օրը երբոր

վիզը փրթելով՝ մէր մտաւորականութիւնը անմարմին գլուխ մը պիտի ըլլայ միայն, եւ մեր ցեղը՝ անգլուխ մարմին մը...:

Չէ՞ք տեսներ արդեն թէ ի՜նչպէս շատ մը գրագետներ լիրբ քաջութիւնը ունին յայտարարելու թէ իրենք ժողովուրդին համար չէ՛ որ կը գրեն:

Ո՛չ, հոտին ու հովիւներուն միջեւ անհասկացողութիւնը երբեք այսքան մեծ չէր եղած:

Գառնուկի պէս անզէն ցեղ մը ամէ՛ն օր, ամէ՛ն օր կը յօշոտուի: Իսկ մեր գամբռները խելօքցեր, փիլիսոփայացեր, քաղաքակրթուեր են, տիեզերական եղբայրակցութեան մը խօսքեր կ'ընեն մեզի, ու կ'երազեն այն հեռաւոր օրուան՝ ուր գայլ ու գառնուկ մէկտեղ կ'արածուին...:

Մանուկի պէս տգէտ ցեղ մը ուսման կաթին է կարօտ, այն բարի ու անարատ ու սպիտակ կաթին որ հիւանդներն իսկ կարենային մարսել: Իսկ մեր համալսարանականները, որ մեր մտաւոր ստնտու մայրերը պիտի ըլլային, դեռ կերածնին չմարսած կու գան մեր առջեւ փսխելու...:

Որբուկի պէս անտէր ցեղ մը հուժկու, ու լուսեղ ու սիրտբուխ բարբառի մըն է ծարաւ: Իսկ մեր գրագէտները հանելուկային, առեղծուածային, խաւարակուռ բաներ կ'ըսեն իրեն. ու մեր քերթողները՝ գրիչնին հայ արեան մէջ թաթխելէ վերջ՝ չինարեն տաղեր կը գրեն որպէսզի մա՛րդ չհասկնայ...:

Թռչունի պէս վիրաւոր ցեղ մը, փոքրիկ վիրակապի մըն է կարօտ՝ իր թեւերը նորէ՛ն բանալով միջոցին մէջ արծիւի պէս սաւառնելու համար: Իսկ մեր ընկերաբանները թո՛յն կը փչեն բոյներէն ներս, ու մեզ կը խօսին այն տարտամ ապագաներուն վրայ՝ ուր ազգն ու հայրենիք կը լուծուին համաշխարհային միջազգայնականութեան մը մէջ...:

Այսպէ՛ս էր նաեւ հին Յոյներուն մէջ: Երբոր հիւանդ մը փրկելու ամէն յոյս կը կորսուէր՝ բժիշկը կը հեռանար իր սնարէն, ու փիլիսոփայ մը կը նստէր հոգեվարքին մօտ, մահամերձը մխիթարելու համար այն հոյսով թէ օր մը ամէ՛ն կեանք ու ամէ՛ն անհատականութիւն պիտի հալին տիեզերական գոյացութեան մը մէջ...:

Ո՛չ, մենք դեռ այդ օրին չհասանք, մենք դեռ ապրիլ կ'ուզենք, մեզ հոգիի ու մարմնի բժիշկներ միայն պէտք են:

Հեռո՛ւ մենէ՝ ախտագին մտաւորականներ: Դուք ցեղին ուղեղն եք, բայց երբ այդ ուղեղը ուրիշ կերպ չի կրնար խորհիլ քան յուսահատեցնելով մեր կենսունակութիւնը, մենք պիտի փրցնենք ու նետենք այդ ուղեղը:

Մենք նոր միտքեր, նոր սիրտեր, նոր հոգիներ պիտի դարբնենք:

Մեզի կարմիր ու մսուտ շուրթերով, ուժեղ ու ժպտուն գրականութիւն մը պէտք է:

Մեզի առողջ ու երիտասարդ մտաւորականներ պէտք են: Զուկն իր գլուխէն կը հոտի, ազգն՝ իր մտաւորականներէն: Անո՛նք են ցեղի մը գլուխը:

Կրնայ մարմինը շատ ուժեղ ու շատ գործունեայ ըլլալ, բայց երբ ուղեղը խաթարուած է՝ այդ մարմնին շարժումը պիտի ըլլայ միա՛յն յիմարական գործունեութիւն և անպտուղ յոգնութիւն:

Ահա թէ ինչո՞ւ իրական վտանգները թողլով՝ հովերուն դէմ ու մենք մեզ դէմ կը պայքարինք: Ահա թէ ինչո՞ւ փոխանակ յառաջադիմելու՝ խենթերու պէս կեցած տեղերնուս վրայ կը ցատկենք երկու հազար տարիէ ի վեր...:

Այո, մեր ցեղը տարօրինապէս կենսունակ ու աշխատող ցեղ մըն է: Այո՛, մեր հնամենի նաւը դեռ ջուրերուն վրայ կը ծփայ, դեռ չընկղմեցաւ: Բայց ի՞նչ է պատճառը որ երէկուան նաւակները

մեզ արդէն անցան, ու մենք Ուրուական Նաւին պէս կը ծածանինք դեռ, անխորասուզելի՛, բայց և հաստատ ցամաքի մը հասնելու անկարող...:

Ասոր պատճառները շատ բարդ են անշուշտ: Բայց գլխաւոր պատճառներէն մէկն ալ ա՛յն է որ զեկին գլուխը կը նստեցնենք մեր է՛ն ախտագին, է՛ն այլասերած, է՛ն անպէտ ծնունդները:

Սակայն ստո՛յգ, ստո՛յգ կ'ըսեմ ձեզի, վտանգը մեծ է, շատ մեծ, աւելի՛ մեծ, քան կրնանք ենթադրել:

Ժամանա՛կն է հակազդելու, հակազդե՛նք:

Մեզի նոր Ոսկեդար մը պէտք է, նոր Ոսկեդա՛ր մը:

Այլասերո՞ւմ, ո՛չ, Վերածնո՛ւնդ...:

ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐ

1915թ., Կ.Պոլիս

1908թ., Լոզան

1908թ., Լոզան

1908թ., Լոզան

1914թ., Կ.Պոլիս

Ռ. Սեակի վերջին լուսանկարը Թուրքական բանակի բժշկական ծառայության սպայի համազգեստով
1915թ., Կ.Պոլիս

1914թ., Կ.Պոլիս

(Ռ. ՍԵԱԿԻՆ)

1908թ. Լոզան, ձախից երկրորդը Ռ. Սեակն է, երրորդը՝ Ա. Զոպանյանը, չորրորդը՝ Կամիտասը

Յաննի Ապել
1914թ., Կ.Պոլիս
(լուսանկարի հեղինակը
Ռ.Սեակն է)

Ռուբեն Սևակը կնոջ՝
Յաննի Ապել-Չիլինկիրյանի հետ
1910թ. ապրիլ, Լոզան

Սեակի մայրը Սեակի եղբորորդու՝ Հովհաննեսի հետ
1925թ., Աթենք

Ռուբեն Սեակը կնոջ՝
Յաննի Ապել-Չիլինկիրյանի հետ
1910թ. ապրիլ, Լոզան

Ռուբեն Սևակը կնոջ՝ Յաննի Ապիլ-Զիլինկիրյանի հետ 1910թ. ապրիլ, Լոզան

Յաննի Ապիլ-Զիլինկիրյանը Լևոն և Շամիրամ Զիլինկիրյանների հետ 1916թ.

Յաննի Ապելը (Ձախից երրորդը)
Ծնողների և քրոջ հետ
1905թ. Էրֆուրտ

Յաննիի հայրը՝
Ֆրանց Ապելը

Յաննի Ապելը
1907թ., Լոզան

Չիլինկիրյանների տունը Սիլիվրիում

Կ.Պոլսի այն տունը, որի բնակարաններից մեկում 1914-15թթ. ապրել է Ռուբեն Սևակը (խանութի վերևի երկու լուսամուտներն այդ բնակարանինն են)

Ռուբեն Սևակը Լոզանի Համալսարանի մուտքի առջև, 1907թ.

1907թ., Լոզան

Ռուբեն Սևակի «Սոխնքը» բանաստեղծության ինքնագիրը

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՊԱՐՏՔԻ ԵՎ ՊԱՏՎԻ ԱՍՊԵՏԸ - Ալ. Թոփչյան 3

ԿԱՐՄԻՐ ԳԻՐՔԸ 10

ՋԱՐԴԻ ԽԵՆԹԸ (բեմական մենախոսություն) 11
Քրքիջը 12
Թափառումը 13
Կարմիր դատարանը 14
Անոնք որ կուգան 15
Մեր քահանան 16
Գեսը 17
Աստուած 17
Գիշերին մէջ երգ 18
Ոճիրը 19
Ցեղին ուխտը 20

ԹՐՔՈՒՀԻՆ (գեղջուկ եղերերգ) 22
Ասեղի հիւսքը 23
Ա՛յ աղջիկ 23
Հայդուկը 24
Հայու հին 24
Առեւանգումը 25
Կարմիր մկրատութիւնը 25
Գուտ մը արիւնը 26
Կուսերգութիւն 27
Վրէժը 28

ՄԱՐԴԵՐԳՈՒԹԻՒՆ 29
Գիւղական եկեղեցիին մէջ – Մնուեղը 30
Գիւղական ճամբուն վրայ – Կեանքը 36
Գիւղական գերեզմանատան մէջ – Մահը 42

ՄԱՄՈՒԼԻ ԷՋԵՐԻՑ 48
ՀՈԳԻՍ 49
ԿԱՐԱՊՆԵՐԸ 50
ԼԷՄԱՆ 52
ՑՆԾՈՒՆ ՄԱՀ 53
ԳԻՆՈՎ ՍԷՐ 54
ՎԵՐՋԱԼՈՅՍ 55
ՍԻՐՈՅ ԱՂԲԻՒՐ 57
ՍԻՐՈՅ ՄՐՄՈՒՆՋ 58
ԷՏՂԼՎԷՅՍ 59
ՃԳԻՏ 59
ՋԸ ՀԱՍԿՑՈՒԱ՛Ծ 60
ԵՐՆԷ՛Կ ՋՈ՛ՒՐ 61
ՀԻՆ ԵՂԱՆԱԿ 62
ՏՐՏՈ՛ՒՄ ՈԳԻ (սիրերգ) 63
ՍԻՐՈՅ ԵՒ ՄԱՀՈՒԱՆ ԵՐԳԸ 64
ՄԱՀԱՋԳԱՑՈՒՄ 65
ՋԻՒՆԻՆ 66

ԵՐԱԶՆԵՐ 67
ՍՏԻՆՔԸ 68
ԱՍՏՂԻ ՄԸ 69
ԱՍՊԵՏԻՆ ԵՐԳԸ 70
ԳԱՅՈՂ ՄԱՐԴԸ 71
ԵՐԵՔ ՁԻԱՒՈՐՆԵՐ 71
ՍԻՐԸ 72
ՍԻՐԻ 73
ՎԱՂԸ 73
ՊՁՏԻԿ ՍԻՐՏԸ 74
Ոչ 75
ԳԻՇԵՐԻՆ ՄԷՋ 76
ԳԻՇԵՐՆ ԻՋԱՒ 76
ԴՐԱՄԻՆ ԱՂՕԹՔԸ 77
ԿԱՐԻՃԸ 78
ՇԵՐ ԲՈՐԵՆԻՆ 79
ՊՈՌՆԻԿԸ 79
ԱՐԳԱՍԱՒՈՐՈՒՄ 80
ԻՆՁԳԻՍ ԵՐԲԵՄՆ 81
ՁՀԱՍԿՑՈՒԱԾՆԵՐԸ 82
1. Հայրը 82
2. Վերջին արքայն 83
3. Պարի մեռնի 84
4. Իժը 85
5. Ձղջիկը 86
ԻՐԵՆՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ 87
ԱՀԱԶԱՆԳՆԵՐԸ 88
ԿԻԼԻԿԵԱՆ ԵՐԳԵՐ 89
I. Վրեժին սերմնացանը 89
II. Հայու որդիկ 90
III. Վերջին աղօր 90
Ո՞Վ ԻՄ ՀԱՅՐԵՆԻՔՍ 92
ՁԱՆԳԱԿՆԵՐ. ՁԱՆԳԱԿՆԵՐ 95
ԹՐՈՒՊԱՏՈՒՐՆԵՐԸ 97
ՎԵՐՋԻՆ ՀԱՅԵՐԸ 101
ՀԱՅԱՍՏԱՆ 104
ԻՆՁՈ՞Ւ 105
ԵՐԹԱՂ 105
ԱՅԼԱՍԵՐՈՒՄ 107

ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐ 114

ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿ

ՀԱՏԸՆՏԻՐ

ժողովածուն կազմեց և առաջաբանեց
Ալեքսանդր ԹՈՓՉՅԱՆԸ

ԼՈՒՍԱԲԱՑ

Պուշկինի 46
Հեռ. + 374 (10) 53 96 47, + 374 (91) 42 51 63
E-mail: lusabats@netsys.am
lusabatc@mail.ru

Տպագրությունը՝ օֆսեթ, թուղթը՝ կավճապատ, 80գ/մ², տպաքանակը՝ 500
Տպագրված է «Լուսաբաց Հրատարակչատան» տպարանում

Յուն Երա՛չի ես, յուն Երա՛չի ես, յուն Ա՛ր չի ես.
Տարաբնակարի՛ չիսաղ ծաղի՛կնի ես ապուրդ.
Մրարիֆական խնկանուշներով բուհասոր
Յուն օրանոցի խնկիրիցնող գուծարի ես.
Յուն Երա՛չի ես, յուն Երա՛չի ես, յուն Ա՛ր չի ես.

ՀՐԱՏԱՐԱԿՉԱՏՈՒՆ
ԼՈՒՍԱԲԱՑ
PUBLISHING HOUSE ИЗДАТЕЛЬСКИЙ ДОМ